



«Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ».
պատվիրատու

"ԱՀԱՐՈՆ ՊԱՐԱԴԻԳՄԱ"

ԽՈՐՀՐԳԱՏՎՈՒԹՅՈՒՆ և ՂԵՏԱԶՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մոտեցումների ոլորտի համակարգ

«Ահարոն Պարադիգմա»
խորհրդատվական-հետազոտական ընկերություն.
նյութի պատասխանատու

«Ֆինկոնսայտ» ՄՊԸ.
հարցման պատասխանատու

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ-ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ԳՈՐԾԱՐԱՐ ԵՎ
ԿԱՐԳԱՎՈՐԻՉ ԴԱՇՏԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.
ՀԱՅԱՅՔ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՎԵՐՁԻՆ

ԵՐԵՎԱՆ
Ապրիլ 2006թ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	2
<i>Հետազոտության նպատակներն ու խնդիրները</i>	2
<i>Հետազոտության եղանակը, գործիքները և մեթոդաբանությունը</i>	3
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏԿԵՐԸ	7
Տեղեկատվական տեխնոլոգիաների կազմակերպությունների. պատմություն, իրավական ձևեր, ներդրումների կառուցվածք, ոլորտի, արտադրանքի և սպառողների կառուցվածք	
ՄԱՍ I. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ	16
I.1. Պետական գրանցում, գործունեության լիցենզավորում, թույլտվություններ և հավաստագրում	16
<i>Խնդիրները. նկատառումներ և լուծման առաջարկներ</i>	22
I.2. Մտավոր սեփականության պահպանության հարցեր	33
<i>Խնդիրները. նկատառումներ և լուծման առաջարկներ</i>	36
ՄԱՍ II. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏՈՒԺՈՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ	40
II.1. Ֆինանսական ռեսուրսների հայթհայթում	40
<i>Խնդիրները. նկատառումներ և լուծման առաջարկներ</i>	41
II.2. Որակյալ աշխատուժի ձեռք բերման դժվարություններ	43
<i>Խնդիրները. նկատառումներ և լուծման առաջարկներ</i>	46
ՄԱՍ III. ՆԵՐՄՈՒԹՈՒՄ ԵՎ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ, ՀԱՐԿԵՐ	48
III.1. Ապրանքների ներմուծում, արտադրանքի և ծառայությունների արտահանում	48
<i>Խնդիրները. նկատառումներ և լուծման առաջարկներ</i>	54
III.2. Հարկային հարաբերություններ	65
<i>Խնդիրները, նկատառումներ և լուծման առաջարկներ</i>	70
ՄԱՍ IV. ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ, ԱՅԼ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐԱԿԱՆ, ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԵՏԱԳԱ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐՑԵՐ	80
IV.1. Օրենսդրության կիրառման վարչարարության գնահատումներ	80
IV.2. Համագործակցության հնարավորություններ և զարգացման տեսակետներ	84
<i>Խնդիրները. նկատառումներ և առաջարկներ</i>	91
ՀԱՎԵԼՎԱԾ 1	100
ՀԱՎԵԼՎԱԾ 2	102
ՀԱՎԵԼՎԱԾ 3	108
ՀԱՎԵԼՎԱԾ 4	113

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) արդյունաբերությունը 1990-ականների սկզբում տեղի ունեցած կտրուկ անկումից հետո կարողացավ կարճ ժամանակում վերականգնվել: Ներկայումս SS ճյուղը Հայաստանի Հանրապետության տնտեսության առավել արագ աճող և խոստումնալից ճյուղերից մեկն է:

Ընդունելով տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման կարևորությունն ու գնահատելով SS ճյուղի ներուժը՝ Հայաստանի կառավարությունն այն հայտարարել է զարգացման գերակա ուղղություն և վերջին տարիներին լուրջ ջանքեր է գործադրում դրա զարգացմանը խթանելու համար: Կառավարության իրականացրած միջոցառումների թվում է Համաշխարհային Բանկի օժանդակությամբ «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի (ՁԻՀ) ստեղծումը: ՁԻՀ-ի գործունեությունն ուղղված է ՀՀ-ում SS ոլորտի մրցունակության բարձրացմանը, SS և տնտեսության այլ ճյուղերի միջև համագործակցության ընդլայնմանը, ինչպես նաև գիտելիքների ու տեղեկությունների տարածմանը:

Նշված գործունեության շրջանակում ՁԻՀ-ը նախաձեռնել է SS ոլորտի գործարար և կարգավորիչ դաշտի հետազոտություն (հարցում):

Սույն հաշվետվություն-վերլուծությունը ներկայացնում է այդ հետազոտության արդյունքները: Բուն հարցումը և դրա արդյունքների տեղեկատվական ներկայացումն իրականացվել է «Ֆին-կոնսալտ» ՍՊԸ-ն կողմից, իսկ դրանց հետագա մշակումն ու առաջարկությունների պատրաստումը սույն հաշվետվություն - վերլուծության տեսքով ապահովել է «Ահարոն Պարադիզմա» խորհրդատվական-հետազոտական ընկերությունը:

Հետազոտության նպատակներն ու խնդիրները

SS ոլորտի գործարար և կարգավորիչ դաշտի հետազոտության հիմնական նպատակներն են.

- ուսումնասիրել SS ոլորտում առկա գործարար և կարգավորիչ դաշտը, այդ թվում՝ գործունեության գրանցման ու լիցենզավորման, ներկրման և արտահանման, մաքսային և հարկային հարաբերությունների, տեղական և ներկրվող սարքավորումների հավաստագրման, արտոնագրերի ձեռքբերման, ստուգումների անցկացման հետ կապված վարչարարությունը, գործընթացներն ու ընթացակարգերը,

- վեր հանել ու գնահատել Հայաստանի SS ոլորտի ավելի արագ զարգացմանը և մրցունակության բարձրացմանը խոչընդոտող հիմնական պատճառները ու գործոնները:

Հետազոտության եղանակը, գործիքները և մեթոդաբանությունը

Ուսումնասիրության իրագործումը տեղի է ունեցել երեք հիմնական փուլերով:

Մուտքին փուլում իրականացվել է SS ոլորտում գործող ընկերությունների հարցախույզ, որի նպատակն էր վեր հանել ձեռնարկությունների զարգացմանը խոչընդոտող գործարար և կարգավորիչ դաշտի հիմնական գործոնները:

Համաձայն ընտրանքի՝ հիմնական սկզբունքների հարցախույզին մասնակցող ընկերությունները ակտիվ գործող են և ներառում են թե՛ տեղական և թե՛ օտարերկրյա մասնակցությամբ ընկերություններ:

Հետազոտության ընտրանքային համախմբությունը, որի կառուցվածքը որոշվել է ՁԻՀ-ի հետ համատեղ, ներառել է.

- ստանդարտացված հարցման համար՝ ՁԻՀ-ի ցանկում գրանցված SS ոլորտի 72 կազմակերպությունների ցուցակ, որն ընդգրկում է ինչպես տեղական և օտարերկրյա կազմակերպություններ, այնպես էլ օտարերկրյա կազմակերպությունների մասնաճյուղեր,
- փորձագիտական հարցման համար՝ գործարար և իրավական միջավայրի հետ առնչվող պետական կառավարման մարմինների, այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ¹:

Դաշտային աշխատանքների կատարման արդյունքում անցկացվել է 52 ստանդարտացված և 10 փորձագիտական հարցազրույց: 20 ստանդարտացված հարցազրույց չի իրականացվել հետևյալ պատճառներով.

- հետազոտության անցկացման ժամանակ հարցվողի բացակայություն (6 հարցվող),
- հետազոտությանը մասնակցելուց հրաժարում (10),
- աշխատանքում զբաղված լինելը (4 հարցվող):

¹ Մասնավորապես. ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն (2 հարցազրույց), ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ ազգային վիճակագրության ծառայություն, ՀՀ մտավոր սեփականության գործակալություն, SS զարգացմանն աջակցող խորհուրդ, SS ձեռնարկությունների միություն, KPMG խորհրդատվական ընկերություն (Հայաստանի գրասենյակ), «Ահարոն Պարադիզմա» խորհրդատվական ընկերություն, «Ամերիա» խորհրդատվական ընկերություն:

Հարցաթերթը կազմվել է ՁԻՀ-ի կողմից ներկայացված տեխնիկական առաջադրանքի և հետազոտության խնդիրների համապատասխան: Այն բաղկացած է 14 մասից և 116 հարցից (111 բովանդակային և 5 «անձնագրային» հարց): Մասերի բովանդակությունը ուղղված էր հետևյալ հարցերի լուսաբանմանը.

- SS կազմակերպությունների վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ,
- գործունեության սկիզբ,
- գործունեության լիցենզավորման գործընթաց,
- շենքերի, շինությունների սեփականության ձևեր և օգտագործման եղանակներ,
- սարքավորումների եւ ծառայությունների հավաստագրման գործընթաց,
- ապրանքների և ծառայությունների համապատասխանության հավաստագրում և անհրաժեշտ թույլտվություններ,
- ապրանքների ներմուծման գործընթաց,
- պատրաստի ապրանքի արտահանման գործընթաց,
- մտավոր սեփականության իրավունքի պաշտպանության հարցերի կարգավորում,
- հարկային վարչարարություն,
- ստուգումներ,
- մարդուժ (աշխատուժ),
- ֆինանսական միջոցներ,
- համագործակցություն և SS ոլորտի զարգացման հեռանկարներ:

Երկրորդ փուլում, հիմնվելով առաջին փուլի արդյունքների վրա, կազմվել է փորձագիտական հարցաթերթ և անցկացվել են փորձագիտական հարցազրույցներ: Հարցազրույցներին մասնակցել են պետական պաշտոնյաներ և ոլորտին ծանոթ խորհրդատվական ընկերություններ: Փորձագիտական հարցազրույցների նպատակն է եղել քանակական հարցախույզի արդյունքում հայտնաբերած խնդիրների վերաբերյալ կարծիք ստանալ համապատասխան պետական կառավարման մարմինների և խորհրդատուների պատասխանատու աշխատողներից: Հարցվողներին

տրվել են ինչպես ոլորտին վերաբերող մի շարք ընդհանուր հարցեր, այնպես էլ հարցվողի բնագավառին վերաբերող մասնագիտական հարցեր:

Նույն գործառույթի շրջանակում 2005 թվականի վերջին Ծաղկաձորում հրավիրվել էր նաև երկօրյա սեմինար–կլոր սեղան՝ SS ոլորտի կազմակերպությունների, նախարարությունների և գերատեսչությունների ներկայացուցիչների մասնակցությամբ: Սեմինարի նպատակն էր ներկայացնել հետազոտության հավաքագրված արդյունքային տեղեկատվությունը, լսել ոլորտում գործող կազմակերպությունների, ինչպես նաև «կարգավորողների» ներկայացուցիչ–մասնագետների մեկնաբանությունները:

Երրորդ փուլում հետազոտության արդյունքների համապատասխան մշակումից հետո, տնտեսագիտական, իրավաբանական և SS ոլորտի փորձագետների օգնությամբ ամփոփվել ու վերլուծվել են հետազոտության արդյունքում ստացված տվյալները:

Առկա են եղել որոշակի մեթոդաբանական ազդեցություն ունեցող սահմանափակումներ, որոնք հարկավոր է հաշվի առնել սույն վերլուծությունն ընթերցելիս: Մասնավորապես հարցման տվյալները մշակելիս պարզվեց, որ որոշ դեպքերում պատասխանները տատանվում են մեծ միջակայքում: Դա բացատրվում է մի շարք գործոնների ազդեցությամբ. Տեղեկատվական տեխնոլոգիաների կազմակերպությունների (SSԿ) կապիտալի չափ, արտադրության (շրջանառության) ծավալներ, գործունեության տեսակի ու բնույթի տարբերություն, հարցաթերթին պատասխանելիս հարցվողի կողմից պատասխանների դետալացման և դրանց ճշգրտության տարբեր աստիճաններ և այլն:

Վերը նշված պայմաններում հետազոտության արդյունքում իրականությունը հնարավորինս գիտականորեն ճշգրիտ ներկայացնելու նպատակով կիրառվել է հետևյալ մեթոդաբանությունը.

- որպես կանոն միջինացումները ներկայացվել են միջնաթվերով (median) միջին թվաբանականի փոխարեն²: Այսպիսի դեպքերում միջնաթվով պատկերն արտահայտելը նպատակահարմար է, քանի որ այն քիչ զգայուն է ընդհանուրից խիստ տարբերվող փոքրաթիվ տվյալների նկատմամբ,
- որոշ դեպքերում ստացված պատասխանները չեն ներկայացվել որպես SSԿ-ների բնորոշ միջին ցուցանիշ, քանի որ տվյալ հարցին պատասխանել են ոչ

² Այն դեպքում, երբ օգտագործված է «միջին» կամ «միջինացված արժեք» տերմինը, դա նշանակում է, որ կիրառվել է հանրահաշվական միջինը:

ներկայացուցչական քանակի ռեսպոնդենտներ (հարցին պատասխանելու ենթակա հարցվողների 50 տոկոսից պակասը): Նշված պայմաններում տրամաբանական վերագրում SPSS վիճակագրական համակարգչային ծրագրով չի իրականացվել, սակայն դրանք հաշվի են առնվել վերլուծության մասում:

- գործնական արդյունավետության նկատառումներով հարցումն անցկացվել է Երևան քաղաքում, այն էլ միայն գործող SS կազմակերպությունների շրջանում: Այդ սահմանափակման պատճառներից է եղել այն, որ հարցումը նախագծողների տրամադրության տակ առկա չի եղել մշտապես թարմացվող SS կազմակերպությունների «քիզնես ռեզիստը»: Այն նաև այժմ չկա:

Նյութի կառուցվածքի մասին. Հաշվետվություն-վերլուծության մեջ SS ոլորտի գործարար և կարգավորիչ դաշտը պայմանականորեն ներկայացված է չորս հատվածներով: Դրանք շարադրանքում ներկայացված են որպես Մասեր: Յուրաքանչյուր Մասում նյութը ներկայացված է երկու պարագրաֆներով: Առաջին պարագրաֆները միշտ նկարագրական են, հիմնված հարցման արդյունքների վրա: Բոլոր երկրորդ պարագրաֆները պարունակում են վերլուծությունը և համապատասխան առաջարկությունները:

Նյութը սկսվում է Հայաստանի տեղեկատվական տեխնոլոգիաների կազմակերպությունների պատկերից, որ ստացվել է հարցման արդյունքում:


Մի քանի դեպքերում ներառված են ներդիրներ միջազգային փորձի մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏԿԵՐԸ

1. SSԿ-ների պատմությունը Հայաստանում.

Հայաստանի տեղեկատվական տեխնոլոգիաների կազմակերպությունների գրանցման տարեթվերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ SS կազմակերպությունները (SSԿ-ներ³) սկսել են գրանցվել արդեն 1990 թվականից: Ընդ որում՝ SS ոլորտի նկատմամբ հետաքրքրությունը և, հետևաբար, գրանցված SSԿ-ների թիվը մեծանում են 1990-ականների վերջին և 2000-ականների սկզբին: Գրանցումների մեծ թիվ է արձանագրվել հատկապես 2001 թվականին (Պատկեր 1):

Պատկեր 1. SSԿ-ների պետական գրանցումն ըստ տարիների (1990-2004)




³ «SS կազմակերպություններ» կամ «SSԿ-ներ» արտահայտությունը վերաբերում է հետազոտության ենթարկված SS կազմակերպություններին, եթե շարադրանքում այլ բան չի նշված

2. Ի՞նչ իրավական ձևով են նախընտրում ստեղծվել ՏՏԿ-ները

Ներկայումս գրանցված և գործող ՏՏԿ-ների գերիշխող մասը (73.1 տոկոսը) ունի սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (ՍՊԸ) կարգավիճակ (Պատկեր 2):

Պատկեր 2. ՏՏԿ-ների իրավական կարգավիճակը




3. Ուրե՞ր են ՏՏԿ-ներ ստեղծում Հայաստանում. օտարերկրացիներ, ֆիզիկական անձինք

ՏՏԿ-ների 63.5 տոկոսը ստեղծվել է միայն տեղական կապիտալի, իսկ 30.8 տոկոսը՝ միայն օտարերկրյա կապիտալի ներդրումով: Այստեղ հարկ է նշել նաև, որ այս կամ այն չափով օտարերկրյա ներդրումներ են կատարվել ՏՏԿ-ների 36.5 տոկոսում (Պատկեր 3)⁴: Եթե առանձին դիտարկելու լինենք ամենամեծ բաժին ունեցողների՝ ՍՊԸ-ների պարագան, ապա կտեսնենք, որ հարցմանը մասնակցած բոլոր ՍՊԸ-ների 31.5 տոկոսում առկա է օտարերկրյա կապիտալի որոշակի չափաբաժին, ընդ որում՝ օտարերկրյա կապիտալով ՍՊԸ-ների երկու երրորդում օտարերկրյա մասնակցությունը 100 տոկոս է:

⁴ Պարզության համար որպես ամբողջությամբ օտարերկրյա ներդրմամբ ստեղծված (այսինքն 100 տոկոս չափաբաժին ունեցող) ՏՏԿ-ներ են դիտարկվել նաև օտարերկրյա ՏՏ կազմակերպությունների հայաստանյան մասնաճյուղերը:

Պատկեր 3. Օտարերկրյա կապիտալի մասնակցության չափաբաժինը ՏՏԿ-ներում



ՏՏԿ-ների կանոնադրական կապիտալում մասնակիցները (բաժնետերերը) հիմնականում իրավաբանական և ֆիզիկական անձինք են, համապատասխանաբար 26.9 և 73.1 տոկոս հարաբերակցությամբ: Ընդ որում՝ մասնակիցների թվում է նաև Հայաստանի Հանրապետությունը (ՏՏԿ-ների 1.9 տոկոսում):

4. Ինչպե՞ս են սովորաբար ներդրումներ կատարվում ՏՏԿ-ներում

ՏՏԿ-ներում ներդրումները կատարվել են առավելապես փողով: ՏՏԿ-ների 59.6 տոկոսը նշել է, որ ներդրումները կատարվել են ՀՀ դրամով, 36.5 տոկոսը՝ արտարժույթով⁵: Ներդրումներ կատարվել են նաև սարքավորումներով (ՏՏԿ-ների 28.8 տոկոսում), շենքերով ու շինություններով (5.8 տոկոսում) և մտավոր սեփականության իրավունքով (7.7 տոկոսում): Կատարված ներդրումներում ունեցած չափաբաժինների առումով, արտարժույթով և ՀՀ դրամով ներդրումները գերազանցում են ներդրման այլ ձևերին (Աղյուսակ 1): Արտարժույթով ներդրումներ կատարվել են տարբեր տիպի ՏՏԿ-ներում: Բնական է, որ փողի տեսքով մասնակցության իմաստով արտարժույթով

⁵ Տվյալ դեպքում ներդրումը հասկացվում է լայն իմաստով, այլ ոչ թե միայն ՏՏԿ-ների կանոնադրական կապիտալում: Այդ իսկ նկատառումով օտարերկրյա իրավաբանական անձանց մասնաճյուղերում կատարվող դրամական հոսքերը ևս ներառված են այդ հասկացության մեջ:

Այնուամենայնիվ, քանի որ կանոնադրական կապիտալում ներդրումը, այսինքն հայաստանյան ՏՏԿ-ների բաժնետոմսերի գնումը հանդիսանում է ներդրման տեսակներից մեկը, ապա տեղին ենք համարում նշել, որ ներկայումս, 2005 թվականի հունիսի 28-ից «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելուց հետո արտարժույթով ներդրումներ կատարելու հնարավորությունները որոշակիորեն սահմանափակվեցին: Այսպես, համաձայն այդ օրենքի 6-րդ հոդվածի՝ ՀՀ իրավաբանական անձանց կանոնադրական և բաժնեհավաք կապիտալում փողային ներդրումներն իրականացվում են միայն Հայաստանի Հանրապետության դրամով:

ներդրումը բնորոշ է հատկապես արտասահմանյան մասնաճյուղերին (հարցմանը մասնակցած մասնաճյուղերի 75 տոկոսում): Մասնաճյուղերում ներդրման մյուս ձևը սարքավորումներն են:

ՍՊԸ-ներում ներդրումները կատարվել են հիմնականում Հայկական դրամով (ՀՀԴ), այնուհետև՝ սարքավորումներով և արտարժույթով:

Աղյուսակ 1. ՏՏԿ-ներում կատարված ներդրումների հարաբերակցությունը՝ ըստ ներդրման ձևի

	Ներդրման ձևը	ՏՏԿ-ում տվյալ ներդրման ձևի միջին չափաբաժինը. տոկոսով	Նվազագույն	Առավելագույն
1	ՀՀ դրամով	81.6	5	100
2	Արտարժույթով	82.1	20	100
3	Շենքերով, շինություններով և դրանց հետ կապված իրավունքներով	53.3	10	100
4	Սարքավորումներով և դրանց հետ կապված իրավունքներով	51.7	20	100
5	Արժեթղթերով (պարտատոմսեր, բաժնետոմսեր)	0	-	-
6	Մտավոր սեփականության իրավունքով	31.3	20	40

5. Ինչպիսի՞ն է ՏՏԿ-ների գործունեության ոլորտների կառուցվածքը, դասակարգումը

Ինչպես ցույց են տալիս հետազոտության արդյունքները, ՏՏԿ-ների գործունեության տեսակային խմբերը բավականին բազմազան են (Աղյուսակ 2): ՏՏԿ-ների մեծամասնությունն ընդգրկված է ոչ թե մեկ, այլ մի քանի գործունեության տեսակում: Աղյուսակ 2-ում նշված են գործունեության այն տեսակային խմբերը, որոնցում ՏՏԿ-ների ներգրավվածությունը համեմատաբար մեծ է:

Աղյուսակ 2. ՏՏԿ-ների գործունեության հիմնական տեսակային խմբերը

	Գործունեության տեսակ (տեսակային խումբ)	Տվյալ տեսակում (տեսակային խմբում) ընդգրկված ՏՏԿ-ները՝ տոկոսով ամբողջի նկատմամբ
1	Կայքերի նախագծում և պատրաստում	38.5
2	Համակարգչային գրաֆիկա և բազմամիջոցներ	28.8
3	ՏՏ ծառայություններ և խորհրդատվություն	26.9

	Գործունեության տեսակ (տեսակային խումբ)	Տվյալ տեսակում (տեսակային խմբում) ընդգրկված ՏՏԿ-ները՝ տոկոսով ամբողջի նկատմամբ
4	Մասնահարմարեցված ծրագրերի (ծրագրակազմի) մշակում	25.0
5	Տվյալների հենքերի կառավարման համակարգեր (ՏՀԿՀ)	23.1
6	Հաշվապահական, բանկային, ֆինանսական ծառայությունների ծրագրեր (ծրագրակազմեր)	19.2
7	Ցանցային համակարգեր և կապ	19.2
8	Էլեկտրոնային առևտուր	19.2
9	Ինտերնետային աշխատածրագրեր	17.3
10	Տեղեկույթի կառավարման համակարգեր (ՏԿՀ)	15.4
11	Համակարգի միահավաքում	13.5
12	Արդյունաբերական (արտադրական) ավտոմատացում	13.5
13	Ինտերնետային ծառայության մատուցում (ԻԾՄ)	13.5
14	Ծրագրավորման լեզուներ ու գործիքներ	7.7
15	Համակարգային ծրագրակազմ	3.8
16	Մանրաշղթագծերի (չիփերի) նախագծում և փորձարկում	1.9
17	Կիսահաղորդչային արտադրություն	1.9
18	Գիտելիքների շտեմարանների ստղծում	1.9
19	Հեռահաղորդակցության վերաբերյալ ուսումնասիրություններ	1.9
20	Այլ	1.9

6. Ի՞նչ են արտադրում, անում ՏՏԿ-ները

Ըստ էության՝ ՏՏԿ-ների գործունեության տեսակային խմբերի այդ կառուցվածքը և դասավորվածությունը որոշակիորեն արտացոլում է ՏՏԿ-ների արտադրանքների և ծառայությունների նկատմամբ եղած պահանջարկն ու ՏՏ ճյուղի՝ այդ պահանջարկին պատասխանելու ունակությունը: Աղյուսակ 2-ի 14-ից 20-րդ տողերում նշված տեսակների փոքր չափաբաժիններն ավելի շուտ խոսում են դրանցում ընդգրկված ՏՏԿ-ների նեղ մասնագիտացվածության մասին:


Հայաստանում ՏՏ շուկայի մասին պատկերացում կազմելու առումով ուշագրավ է նաև հարցման արդյունքում դուրս բերված, գործունեության տեսակների հետ «կոռելացվող» ՏՏԿ-ների թողարկած արտադրանքի ու մատուցած ծառայությունների

ցանկի վերաբերյալ տեղեկատվությունը՝ ըստ առանձին տեսակային խմբերի (տես ՀԱՎԵԼՎԱԾ 1):

7. Ուլքե՞ր են սպառում ՏՏԿ-ների արտադրանքը, օգտվում նրանց ծառայություններից

ՏՏԿ-ների տրամադրած տեղեկատվության համաձայն նրանց արտադրանքների և ծառայությունների առաջատար սպառողներն են տեղական և արտասահմանյան մասնավոր կազմակերպությունները (Պատկեր 4): Պահանջարկի ձևավորման գործում նշանակալի դերակատարում ունեն նաև պետական մարմիններն ու միջազգային կազմակերպությունները, ինչպես նաև հասարակական կազմակերպություններն ու մասնավոր անձինք: Գծապատկերից բխում է, որ ՏՏ շուկային բնորոշ է նաև սպառողների խմբերի բազմազանությունը:

Պատկեր 4. ՏՏ արտադրանքների (ծառայությունների) հիմնական սպառողները



8. Ի՞նչ եղանակով են ՏՏԿ-ները ձեռք բերում պատվերներ

Արտադրանքների (ծառայությունների) պատվերների ստացման աղբյուրների առնչությամբ ստացված տվյալները ցույց են տալիս, որ դրանք նույնպես բազմազան են բոլոր տիպի ՏՏԿ-ներում, բացառությամբ օտարերկրյա իրավաբանական անձանց

դուստր ընկերությունների և մասնաճյուղերի: Վերջիններիս հիմնական պատվիրատուներն են իրենց գլխամասային ընկերությունները (գլխավոր գրասենյակները):

Մնացած ՏՏԿ-ներում պատվերներ ձեռք բերելու հիմնական եղանակներն են ղեկավար աշխատակիցների անձնական կապերը (ՏՏԿ-ների 69.2 տոկոսում) ու ինտերնետային կայքը (ՏՏԿ-ների 42.3 տոկոսում):

Առանձին ՏՏԿ-ների պատվերների պորտֆելում պատվերների ձեռք բերման տվյալ ձևի կշռի առումով անձնական կապերն ու ՏՏԿ-ի գործունեության փորձը ամենածանրակշիռն են՝ միջինում կազմելով համապատասխանաբար 63.5 և 43.7 տոկոս (Աղյուսակ 3):

Աղյուսակ 3. ՏՏԿ-ներում պատվերների ձեռք բերման ձևերը, նրանց չափաբաժինները

Պատվերի ձեռք բերման ձև կամ աղբյուր		Տվյալ ձևը կիրառող ՏՏԿ-ների թվի հարաբ. ՏՏԿ-ների ընդ. թվին տոկոսով	Տվյալ ձևով ստացվող պատվերների միջին կշիռը տվյալ ՏՏԿ-ի ընդհանուր պատվերների մեջ տոկոսով	Պատվերների ընդհանուր ծավալի մեջ	
				Նվազագույն արժեք	Առավելագույն արժեք
N	Ա	1	2	3	4
1	Անձնական կապեր	69.2	63.5	5	100
2	Կազմակերպության գործունեության փորձը	19.2	43.7	10	80
3	Արտասահմանյան կապեր	25.0	33.1	5	100
4	Գովազդ մամուլում	25.0	26.0	5	100
5	Սփյուռքի կապեր	23.1	22.0	5	100
6	Ցուցահանդեսներ	21.2	20.1	1	90
7	ՏՏԿ-ի ինտերնետային կայք	42.3	17.7	2	90
8	Կառավարության մարմինների հետ հանդիպումներ	5.8	14.0	7	20
9	ՏՏԿ-ի նախկին աշխատողներ	5.8	8.7	1	20
10	Գլխամասային կազմակերպության միջոցով	13.5	100	-	100

9. Ի՞նչ շենքային պայմաններում են սովորաբար աշխատում ՏՏԿ-ները

Հետազոտությունը ցույց է տալիս, որ ՏՏԿ-ները հիմնականում օգտագործում են վարձակալված շինություններ (Աղյուսակ 4): ՏՏԿ-ների մեծամասնությունը (75 տոկոսը) վարձակալված շենք ու շինություններն օգտագործում է որպես գրասենյակ, իսկ դրանք որպես արտադրական տարածք օգտագործում է հարցվածների 30.8 տոկոսը:

Աղյուսակ 4. ՏՏԿ-ների օգտագործած շենք ու շինությունություններ

Շինության նպատակայնությունը		Շենք ու շինության նկատմամբ ունեցած իրավունքի տեսակ		
		Սեփականու-թյան իրավունք, %*	Վարձակալու-թյան իրավունք, %*	Անհատույց օգտագործման իրավունք, %*
1	Գրասենյակ	15.4	75.0	5.8
2	Արտադրական տարածք	7.7	30.8	-
3	Պահեստ	5.7	17.3	-
4	Ծառայությունների և արտադրանքի վաճառքի կետ	5.7	17.3	-
5	Սարքավորումների վերանորոգման կետ	5.7	13.5	-
6	Այլ		1.9	1.9

*Շինության նկատմամբ տվյալ իրավունքի տեսակն ունեցող ՏՏԿ-ների թվի հարաբերություն ՏՏԿ-ների ընդհանուր թվի նկատմամբ՝ տոկոսով:

Ընդհանուր առմամբ, ՏՏԿ-ների մեծ մասը (69.2 տոկոսը) դժվարություններ չեն ունեցել շենքեր կամ տարածքներ ձեռք բերելիս: Դժվարությունների հետ բախվածների նկատառումներն առանձին ամփոփված են ստորև բերված աղյուսակի 1-ից 4-րդ տողերում (Աղյուսակ 5):

Աղյուսակ 5. Շենքերի ու շինությունների ձեռք բերման հետ կապված դժվարություններ

Դժվարություններ		SSԿ-ների թիվը՝ տոկոսով ընդհանուրի նկատմամբ
1	Հարմար տարածքների, շինությունների ընտրության սահմանափակություն	9.7
2	Անկանխատեսելի լրացուցիչ վճարների պահանջի մտավախություն վարձակալության պայմանագրերի ձևակերպման համար	7.7
3	Վարձակալության պայմանագրով բարձր վարձավճարներ	3.8
4	Վարձակալության պայմանագրի ձևակերպման համար պաշտոնական բարձր վճարներ	3.8
5	Դժվարություն չեն ունեցել	69.2
6	Այլ	5.8

Շենքերն ու շինություններն օգտագործելուց առաջ SSԿ-ների գերակշռող մասը հիմնական վերակառուցում կամ վերանորոգում չեն կատարել. դրանց 32.7 տոկոսը ոչինչ չի փոխել, իսկ 48.1 տոկոսը կատարել է միայն հարդարման աշխատանքներ: Հիմնական վերակառուցում կամ վերանորոգում իրականացրած SSԿ-ների՝ այդ կապակցությամբ պաշտոնական մարմինների հետ առնչության իմաստով առավել հաճախ խոսք է գնացել անշարժ գույքի կադաստրի մարմինների մասին⁶:

⁶ SSԿ-ների պատասխաններում խոսք է գնացել նաև «էլեկտրացանցի», «ջրմուղի» և «ճարտարապետական բաժնի» մասին: Այնուամենայնիվ, առավել հաճախ հիշատակվել է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անվանումը, որն իրականացնում է շենքերի, շինությունների հետ կապված իրավունքների պետական գրանցման գործառույթը:

Շենքերի հիմնական վերակառուցման (վերանորոգման) ծախսերի վերաբերյալ միջինացված տեղեկատվության առանձին ներկայացումը նպատակահարմար չգտնվեց, քանի որ.

- այդպիսի ծախսերի մասին նշել են հարցված SSԿ-ների ընդամենը 5 տոկոսը
- հարցին տրվել են էականորեն տարամիտված պատասխաններ, որի դեպքում նույնիսկ միջնաբվի օգտագործումը չհամարվեց բավարար հիմք՝ ամփոփ ցուցանիշը հիմնավորված ընդունելու համար:

ՄԱՍ I. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

I.1. Պետական գրանցում, գործունեության լիցենզավորում, թույլտվություններ և հավաստագրում

Պետական գրանցման ընթացակարգեր

Հարցմանը մասնակցած ՏՏԿ-ները պետական գրանցման⁷ գործընթացի հետ առնչվել են, մի մասը՝ միայն իրենց գործունեության ծավալման սկզբում (հարցվածների 44.2 տոկոսը), իսկ մյուս մասը՝ նաև հետագայում՝ փաստաթղթերում փոփոխություններ կատարելու առիթով (հարցվածների 55.8 տոկոսը): ՏՏԿ-ների կեսից ավելին ինքնուրույն է հավաքել ու լրացրել գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը (Աղյուսակ 6): Կազմակերպությունների աշխատանքային փորձը որևէ էական դեր չի կատարել փաստաթղթերի փաթեթը ինքնուրույնաբար պատրաստելու հարցում: Փաստաթղթերի հավաքման գործընթացը տևել է միջինում 12.4 օր, ընդ որում՝ ամենակարճ տևողությունը կազմել է մեկ օր, իսկ ամենաերկարը՝ վաթսույն օր:

Աղյուսակ 6. Գրանցման համար փաստաթղթերի հավաքման եղանակներ

	Փաստաթղթերի հավաքման եղանակ	ՏՏԿ-ների թիվը՝ տոկոսով ընդհանուրի նկատմամբ
1	Ինքնուրույն հավաքել և պատրաստել են փաստաթղթերը	53.9
2	Փաստաթղթերը պատրաստվել են իրավաբանի կամ միջնորդ կազմակերպության պատասխանատվությամբ	23.1
3	Փաստաթղթերի պատրաստման համար խորհուրդ են հարցրել ծանոթներից կամ իրավաբանից (կարճատև խորհրդատվություն)	3.8
4	այլ ⁸	19.2

Աղյուսակ 7-ն ամփոփում է գրանցման և հարակից՝ ՏՏԿ գործունեությունը սկսելու հետ կապված այլ մարմինների հետ առնչություններ ունենալու գործընթացների⁹

⁷ Պետական գրանցում ասելով պետք է հասկանալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 56 հոդվածի, ինչպես նաև «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքին (տես ՀՀՊՏ 2001/14 (146). 18.05.01 հոդ. 331) համապատասխան նրանց գրանցման գործառույթը ՀՀ արդարադատության նախարարության համակարգում գործող իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում (կարճ՝ պետական ռեգիստր):

⁸ այստեղ ներառված են նաև այն դեպքերը, երբ, ըստ պատասխանների, փաստաթղթերը պատրաստելիս օժանդակություն է ստացվել պետական ռեգիստրի գործակալության աշխատակիցների միջնորդությամբ

տևողությունն ու ծախսերը՝ ըստ դրանում ընդգրկված մասնակիցների: Ինչպես երևում է աղյուսակից, գրանցման ընթացքում ՏՏԿ-ները պետական տուրքերից բացի կրում են նաև այլ կազմակերպական ծախսեր, բոլոր գերատեսչություններում: Ընդ որում՝ պետական ռեգիստրում այդ այլ լրացուցիչ ծախսերը միջինում ամենաբարձրն են՝ համեմատած հիմնական պարտադիր ծախսերի հետ:

Աղյուսակ 7. Գրանցման և դրան հարակից գործառնությունների տևողությունն ու ծախսերը. միջինացված արժեքներ

		Օրերի քանակ		Պաշտոնական վճարներ ¹⁰		Իրավաբանի կամ միջնորդի վճարներ		Այլ ծախսեր	
1	Պետ. ռեգիստր	6.6		10,447.0		35,000.0		25,417.0	
	<i>Նվազ- առավելագ.</i>	2	21	6,000.0	17,000.0	0	104,000.0	0	87,000.0
2	Հարկային¹¹ մարմին. ՀՎՀՀ ստացում	3.2		-		0		2,000.0	
	<i>Նվազ.-առավելագ.</i>	1	7	-	-	-	-	0	2,000.0
3	Կնիքի պատրաստման ծառայություն	9.6		18,548.0		0		3,567.0	
	<i>Նվազ.-առավելագ.</i>	1	30	6,000.0	40,000.0			0	8,700.0
4	Բանկում հաշվի բացում	1.1		55,563.0		0		2,000.0	
	<i>Նվազ.-առավելագ.</i>	1	3	0	200,000.0			0	2,000.0

Չնայած գրանցման ընթացքում ունեցած այլ լրացուցիչ ծախսերին, հարցմանը մասնակցած ՏՏԿ-ներն այդ գործընթացը որպես խնդրահարույց չեն դիտարկում: ՏՏԿ-ների կեսից ավելին (51.9 տոկոսը) համարում են, որ որևէ դժվարություն չեն ունեցել գրանցման ժամանակ, իսկ դրանց 92.3 տոկոսը նշել են, որ փաստաթղթերը հանձնելուց հետո գրանցման մասին դրական որոշում ստացել են առանց լրացուցիչ ուղղումների կամ տեղեկությունների պահանջի (ընդամենը 7.7 տոկոսն է նշել, որ դրական որոշում ստացել է միայն որոշ ուղղումներից հետո):

Գրանցման և հարակից գործառնությունների ընթացքում դժվարություններ ունեցածների պատասխանների վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել խոչընդոտների մի շարք, որոնցից հիմնականները կապված են պաշտոնական դիրքի

⁹ Իրականում այդպիսի հարակից պարտադիր գործառնություն է նաև ֆիրմային անվանման թույլտվություն ստանալը: Տվյալ դեպքում այն ներառված է բուն պետական գրանցման փուլում, քանի որ ներկայումս իրավաբանական անձինք այդ ծառայությունը ստանում են նույն պետական ռեգիստրի մարմինների միջոցով՝ «մեկ պատուհանի» սկզբունքով:

¹⁰ Նշված վճարները չեն ներառում պետական տուրքի գումարները:

¹¹ ՀՎՀՀ-ի ստացման հետ կապված պաշտոնական վճարների ծախսերի մասին հավաքագրված տեղեկատվության ներկայացումը նպատակահարմար չգտնվեց, քանի որ պատասխանել էին ոչ մեծաթիվ ՏՏԿ-ներ և նաև սույն նյութի հրատարակման պահին գործող օրենսդրությամբ ՀՎՀՀ-ի ստացման համար որևէ պաշտոնական վճար չի եղել սահմանված:

չարաշահման ու վարչարարության, ինչպես նաև գրանցումը կանոնակարգող օրենսդրության հետ (Աղյուսակ 8): ՏՏԿ-ները բարելավման անհրաժեշտություն են տեսնում հատկապես վարչարարության բնագավառում: Մասնավորապես.

- ՏՏԿ-ների 13.4 տոկոսը համարում է, որ վարչարարությունը կարելի է բարելավել պետական ռեգիստրի կողմից համակարգչային ցանցով՝ առ-գիծ (on-line) ծառայություններ մատուցելու հնարավորություն ստեղծելու միջոցով,
- ՏՏԿ-ների 36.5 տոկոսը համարում է, որ գրանցման ընթացակարգերին վերաբերող տեղեկատվությունը մատչելի է, սակայն հարցվածների մնացած մասը հակառակ կարծիք ունի և համարում է, որ իրավիճակի բարելավման համար կարելի է կիրառել այնպիսի միջոցներ, ինչպիսիք են տեղեկատվական գրքույկների հրատարակումն ու սեմինարների անցկացումը, ՋԼՄ-ների և ինտերնետի միջոցով համապատասխան տեղեկությունների տարածումը:

Աղյուսակ 8. Գրանցման գործընթացում հանդիպող խոչընդոտներ

Դժվարություն կամ խոչընդոտ		Տվյալ խոչընդոտին հանդիպած ՏՏԿ-ների թիվը տոկոսով ընդհանուրի նկատմամբ
1	Պետական ռեգիստրի աշխատակիցների կողմից արհեստական դժվարությունների ստեղծում	28.9
2	Գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերի վերաբերյալ տեղեկատվության պակաս	19.1
3	Գրանցման ոչ պարզ և ոչ թափանցիկ ընթացակարգ	17.3
4	Գրանցման գործընթացի վերաբերյալ իրավական ակտերի անորոշություն	9.6
5	Իրավաբանների կամ միջնորդ կազմակերպության ծառայությունների համար պահանջվող բարձր վարձավճարներ	5.7
6	Գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթեր կազմելու փորձի և իրազեկության պակաս	3.8
7	Իրավաբանների կամ միջնորդ կազմակերպությունների պակաս	
8	Պետական ռեգիստրի աշխատակիցների իրազեկության և պատասխանատվության պակաս	3.8
9	Գրանցման համար պահանջվող բարձր վճարներ	-
10	Բարձրաստիճան հովանավորի և(կամ) պետական ռեգիստրում ծանոթի բացակայություն	1.9
11	Այլ	1.9
12	Դժվարանում են պատասխանել	1.9

Լիցենզավորման ընթացակարգեր

Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ ՏՏԿ-ների միայն 17.3 տոկոսն է գրառվում լիցենզավորման ենթակա գործունեությամբ: Լիցենզիա ձեռքբերելու գործընթացի տևողությունը միջինում կազմել է 17 օր: Գրանցված ամենաարագ դեպքը 3 օր է տևել, իսկ ամենատևողը՝ 30 օր: Լիցենզավորման հետ կապված ծախսերին վերաբերող տեղեկությունները ցույց են տալիս, որ լիցենզիայի ձեռքբերումը հիմնականում կատարվել է օրենքով սահմանված կարգով, առանց «չարաշահումների»: Այսպես, լիցենզիաների ձեռքբերման համար պահանջվող պետական տուրքերի և այլ պարտադիր վճարների չափը կազմել է միջինում 127,222.0 ՀՀԴ:

Թույլտվությունների ընթացակարգեր

Ուշադրության արժանի է այն, որ ՏՏԿ-ները հատկապես խնդրահարույց են համարում ռադիոէլեկտրոնային ու բարձր հաճախականության սարքավորումների (մասնավորապես, արբանյակային անտենաների) ձեռքբերման և օգտագործման համար թույլտվություններ ստանալու ընթացակարգերը (Աղյուսակ 9): Այդ գործընթացի հետ առնչվում է ՏՏԿ-ների 26.9 տոկոսը: Դրանց մեծ մասի կարծիքով սարքավորումների ձեռքբերման և օգտագործման համար թույլտվությունների ստացման ընթացակարգերը խնդրահարույց են. այդ կազմակերպությունների միայն 14.3 տոկոսն է նշել, որ չի ունեցել որևէ դժվարություն:

Աղյուսակ 9. Ռադիոէլեկտրոնային միջոցների ու բարձր հաճախականության սարքավորումների ձեռքբերման և օգտագործման թույլտվության հետ կապված դժվարություններ

Խնդիր կամ խոչընդոտ		Տվյալ խոչընդոտին հանդիպած ՏՏԿ-ների և թույլտվության գործընթաց անցած ՏՏԿ-ների ընդհանուր թվի հարաբերություն տոկոսային արտահայտությամբ
1	Թույլտվության գործընթացի վերաբերյալ իրավական ակտերի անորոշություն	50.0
2	Թույլտվության տրամադրման ոչ պարզ և ոչ թափանցիկ ընթացակարգ ու տեղեկատվության պակաս	50.0
3	Համապատասխան պաշտոնյաների կողմից արհեստական դժվարությունների ստեղծում	35.7
4	Թույլտվության համար անհրաժեշտ փաստաթղթերի վերաբերյալ տեղեկատվության պակաս	21.4
5	Թույլտվության համար պահանջվող բարձր վճարներ	21.4
6	Թույլտվության համար անհրաժեշտ փաստաթղթերը կազմելու փորձի և իրազեկության պակաս	7.1

Ապրանքների, արտադրանքների¹² և ծառայությունների համապատասխանության հավաստման (հավաստագրման) ընթացակարգեր

SSԿ-ների 82.7 տոկոսը վերջին երեք տարիների ընթացքում ձեռք է բերել արտասահմանյան սարքեր ու սարքավորումներ՝ արտադրությունում օգտագործելու նպատակով: Այդ կազմակերպությունների 11.6 տոկոսը նշել է, որ ձեռք բերված սարքավորումները ենթակա են եղել պարտադիր հավաստագրման: Դրանք այն կազմակերպություններն են, որոնք այսօր մասնագիտացած են այնպիսի բնագավառներում, ինչպիսիք են ինտերնետային ծառայությունների մատուցումը, SS ծառայությունների և խորհրդատվության մատուցումը, մասնահարմարեցված ծրագրերի (ծրագրակազմերի) մշակումը, տվյալների հենքերի կառավարման համակարգերի մշակումը (ՏՀԿՀ), ցանցային համակարգերի և կապի ապահովումը:

Ըստ հարցման ժամանակ հնչած պատասխանների՝ պարտադիր հավաստագրման ենթակա սարքավորումներ ունեցող կազմակերպությունների միայն 80 տոկոսն է ձեռք բերել պահանջվող համապատասխանության հավաստագրեր: Վերջիններիս կեսը հավաստագիր ստանալու համար հայտ է ներկայացրել Հայաստանում, մեկ քառորդն օգտագործել է օտարերկրյա հավաստագիր, իսկ մնացած քառորդը երկու եղանակներն էլ կիրառել է:

Հայաստանում սարքերի ու սարքավորումների համար համապատասխանության հավաստագիր ստանալու համար ծախսեր կատարել են SSԿ-ների մոտ 5 տոկոսը¹³:

Հետազոտության արդյունքների համաձայն, SSԿ-ների մոտ 30.7 տոկոսն իր արտադրական գործունեության ընթացքում առնչվում է որակի վերահսկման համակարգերի հետ (Աղյուսակ 10). SSԿ-ների 19.2 տոկոսը ներդրել է այդպիսի համակարգեր, իսկ 11.5 տոկոսի մոտ ներդրման աշխատանքները դեռ ընթացքում են: Հարկ է նշել, սակայն, որ որակի վերահսկման համակարգեր օգտագործողներից ոչ բոլորն են հավաստագրել այդ համակարգերը (ըստ ISO 9001 : 2000 ստանդարտի պահանջների):

¹² Այսուհետ «ապրանքներ և արտադրանքներ» տերմինները վերաբերում են, և՛ ծրագրերին ու ծրագրակազմերին, և՛ ներմուծվող կամ արտադրվող սարքերին ու սարքավորումներին, որոնք կիրառելի են SS ոլորտում:

¹³ այդպիսի ծախսերի վերաբերյալ միջինացված տեղեկատվության առանձին ներկայացումը նպատակահարմար չգտնվեց, քանի որ պատասխանել էին ոչ մեծաթիվ SSԿ-ներ, ընդ որում հայտնելով էականորեն տարամիտվող գումարների մասին:

Աղյուսակ 10. Որակի կառավարման համակարգերի հավաստագրման իրավիճակ

Հավաստագրման ընթացքը		Տոկոս՝ որակի վերահսկման գործընթացում ներգրավված ՏՏԿ-ների ընդհանուր թվից
1	Հավաստագրումն ավարտված է	31.2
2	Հավաստագրումն ընթացքի մեջ է	18.7
3	Չի հավաստագրվել	50.1

ՏՏԿ-ների թողարկած արտադրանքների և մատուցած ծառայությունների համապատասխանության հավաստման (հավաստագրման) առնչությամբ հարկ է նշել, որ ՏՏԿ-ների գերակշիռ մասի (մոտ 70 տոկոսի) արտադրանքներն ու ծառայությունները ենթակա չեն պարտադիր հավաստագրման (Աղյուսակ 11): Այնուամենայնիվ, հավաստագրման ենթակա արտադրանքներ (ծառայություններ) ունեցող ՏՏԿ-ների 13.5 տոկոսը դեռ չի հավաստագրել իր արտադրանքները (ծառայությունները), իսկ դրանց մի փոքր մասը՝ 5.8 տոկոսը, կամավոր հավաստագրում է անցել, այն դեպքում, երբ չունեն պարտադիր հավաստագրման ենթակա արտադրանքներ (ծառայություններ):

Աղյուսակ 11. ՏՏԿ-ների թողարկած արտադրանքների կամ մատուցած ծառայությունների հավաստագրման իրավիճակ

	Հավաստագրման վիճակ	ՏՏԿ-ների թիվը՝ տոկոսով ամբողջի նկատմամբ
1	Անհրաժեշտ է, բայց դեռ չի հավաստագրվել	13.5
2	Անհրաժեշտ է և հավաստագրվել է	11.5
3	Անհրաժեշտ չէ, բայց հավաստագրվել է	5.8
4	Անհրաժեշտ չէ	69.2

ՏՏԿ-ները մասն նշել են, որ կնախընտրեին հավաստագրել արտադրական հոսքագծերը (հավաստագրման գործընթացում ընդգրկված ՏՏԿ-ների 77.8 տոկոսը) և ոչ թե առանձին արտադրատեսակները կամ ծառայությունները (հավաստագրման գործընթացում ընդգրկված ՏՏԿ-ների 44.4 տոկոսը):

Հավաստագրման գործընթացն անցած այդ ոչ մեծաթիվ կազմակերպությունների փորձի հիման վրա դուրս բերված՝ հավաստագրման տևողության ու դրա հետ կապված ծախսերի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է ստորև (Աղյուսակ 12).

Աղյուսակ 12. Հավաստագրման հետ կապված ծախսերը, միջինացված արժեքներ

Հավաստագրման առարկան		Միջինացված արժեքներ			
		Օրերի քանակ	Պաշտոնական վճարներ	Իրավաբանի, միջնորդի վճարներ	Այլ ծախսեր
1	Որակի կառավարման համակարգեր	45	2,666,667.0	-	-
2	Արտադրանքներ կամ ծառայություններ	72	1,446,667.0	-	-

Հավաստագրման հետ կապված ծախսերը (պաշտոնական վճարները) բացարձակ առումով շատ ավելի բարձր են վարչական մյուս գործընթացների, մասնավորապես, պետական գրանցման, շինարարական աշխատանքների հետ կապված ծախսերից: Նշենք նաև, որ հավաստագրման գործընթաց անցած ՏՏԿ-ների կեսից ավելին (55.6 տոկոսը) այդ գործընթացը խնդրահարույց չի համարում: Ըստ մնացած ՏՏԿ-ների պատասխանների՝ հավաստագրման հիմնական դժվարությունները բարձր պաշտոնական վճարներն (հավաստագրման գործընթաց անցած ՏՏԿ-ների 33.3 տոկոս) ու փաստաթղթեր պատրաստելու, կազմելու փորձի և իրազեկության պակասն են (հավաստագրման գործընթաց անցած ՏՏԿ-ների 33.3 տոկոս):

Խնդիրները. նկատառումներ և լուծման առաջարկներ

Խնդիր 1.1. կազմակերպությունների պետական գրանցման որոշակի բարդություններ

Նկատառումներ.

Հետազոտության, ինչպես նաև փորձագիտական քննարկումների արդյունքները ցույց են տվել, որ կազմակերպությունների պետական գրանցման ընթացակարգերը չեն համարվում առավել խնդրահարույց հարցեր, չնայած նշված մի քանի թերությունների: Նշված թերությունների կանոնակարգումը, ըստ ՏՏԿ-ների հնարավոր է լուծել առգիծ (online) ծառայությունների մատուցմամբ: Վերջինս ներառում է որոշակի դրական կողմեր որոնցից է՝ առգիծ ինֆորմացիայի ստացման հնարավորությունը, ինչպես նաև կազմակերպությունների՝ առգիծ գրանցումը, որի ժամանակ առավելագույնս կնվազի անմիջական շփումը պետական ծառայողների հետ և, հետևաբար, չարաշահումների հնարավորությունը: Նշված կերպով առգիծ գրանցման գործընթացի իրականացումն

այժմ բավականին իրատեսական է «Էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո¹⁴:

Հիշենք նաև, որ ՏՏԿ-ների 70 տոկոսից ավելին ՄՊԸ-ներ են, որոնց պետական գրանցման համար կառավարությունը սահմանել է տիպային կանոնադրության ձև: Իրական կյանքում այդ տիպային ձևերը շատ մատչելի չեն:

Բացի այդ, փորձագետները նշում են նաև, որ օտարերկրյա մասնակցությամբ ընկերությունների գրանցման ընթացակարգերում գոյություն ունեն փաստաթղթերի ցանկի և դրանց ներկայացման որոշ դժվարություններ:

Առաջարկություններ

1. Տեղեկատվական բացի վերացման համար գրքույկներ հրատարակել ու նաև ՋԼՄ-ների և ինտերնետի միջոցով հասանելի դարձնել այդ տիպային կանոնադրությունը և այլ ձևեր: Դա թույլ է տալու նաև մոտեցնել առ-գիծ եղանակով պետական գրանցման ծառայությունների մատուցման սկիզբը,
2. Օտարերկրյա մասնակցությամբ ընկերությունների գրանցման ընթացակարգերը ենթարկել հետագա օպտիմալացման

Խնդիր 1.2. Հավաստագրման, թույլտվությունների, լիցենզավորման հարցերում իրազեկվածության պակաս

Նկատառումներ.

Հարցման մասնակիցների պատասխանները ցույց տվին, որ իրականում հարկավոր է նախ տարբերակել մի շարք հասկացություններ՝ հասկանալով յուրաքանչյուր ինտիտուտի դերը: Խոսքը վերաբերում է լիցենզավորմանը, թույլտվությունների ինստիտուտին, համապատասխանության հավաստագրմանը¹⁵: Այսպես, շատ պարզ ներկայացնելով կատարվի հետևյալը.

1. Լիցենզավորում.

Այն կատարվում է համաձայն «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի դրույթների և վերաբերում է գործունեության տեսակներին¹⁶: Այդ օրենքի 43-րդ հոդվածի 10-րդ

¹⁴ ՀՀ ՊՏ թիվ 7, 26 հունվարի 2005թ

¹⁵ Որոշակի տեղեկատվություն պարունակվում է սույն նյութի հավելված 2-ում: Ի լրումն դրա, հաշվի առնելով վերջին ժամանակներս օրենսդրության մեջ կայացած փոփոխությունները, պարզաբանումներ են ներկայացվում Նկատառումներ հատվածում:

¹⁶ Հարցման անցկացման ժամանակ այդ նոր ցանկը դեռ ուժի մեջ չէր, հետևաբար ՏՏԿ-ների պատասխանների մեջ դրա վերաբերյալ անդրադարձ չկար:

կետում շարադրված են այդ տեսակները՝ «Հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության) բնագավառ» ընդհանուր անվանումով¹⁷: Նոր ցանկը.

ա) կրում է «էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի¹⁸ և «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային ստորագրության մասին» ՀՀ օրենքի¹⁹ պահանջների ազդեցությունը,

բ) դյուրացնում է լիցենզավորման գործընթացը, քանի որ մի քանի դեպքում բարդից անցում է կատարվում պարզ ընթացակարգով լիցենզիա ստանալուն,

գ) սակայն, դրա հետ միաժամանակ կատարվում է մասնագիտական պահանջների որոշակի խստացում.

- մեծանում են որոկավորման ստուգման դեպքերը: Չարմանալի է, որ այժմ դա պահանջվում է նույնիսկ պարզ ընթացակարգի պարագայում,
- գրեթե բոլոր գործունեության տեսակների համար մտցվում է հանրային ծառայությունների կարգավորման հանձնաժողովին (*ի դեպ, սա դարձավ միակ դեպքը, երբ պարզ ընթացակարգով լիցենզիա ստանալու համար պետք է դիմել ոչ թե ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն, այլ ՀԾԿ*) հաշվետվություններ և տեղեկություններ ներկայացնելու պահանջ,
- նախկին մեկ դեպքի փոխարեն (դա հեռախոսային ծառայությունների մատուցումն է), այժմ բոլոր վեց լիցենզավորվող գործունեության տեսակների դեպքում մտնում է ոչ թե ընկերության, այլ յուրաքանչյուր գործունեության վայրի համար առանձին լիցենզավորման պահանջը:

2. Թույլտվություններ.

SS ոլորտին թույլտվությունների ինստիտուտը բնորոշ չէ:

Թույլտվությունների ինստիտուտը գալիս էր «Հեռահաղորդակցության մասին» ՀՀ օրենքից որը իր ուժը կորցրեց 2005 թվականի հուլիսի 8-ին և վերաբերում էր²⁰.

¹⁷ Ներկայումս գործող՝ հեռահաղորդակցության բնագավառում լիցենզավորվող գործունեության տեսակների վերջին ցանկը սահմանվեց 16.12.2005թ. ընդունված «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով (տես ՀՀ ՊՏ թիվ 5/ 2006թ. 25 հունվարի 2006թ.): Այն ուժի մեջ մտավ 2006 թվականի հունվարի 5-ից:

¹⁸ Ընդունվել է 2005 թվականի հուլիսի 8-ին, տես ՀՀ ՊՏ 54, 24 օգոստոսի 2005թ.:

¹⁹ Ընդունվել է 2004 թվականի դեկտեմբերի 14-ին, տես ՀՀ ՊՏ 7, 26 հունվարի 2005թ.:

²⁰ Տես ՀՀ կառավարության 20 նոյեմբերի 1999թ. «Հայաստանի Հանրապետությունում ռադիոհաճախակալությունների բաշխման, ռադիոէլեկտրոնային միջոցների ու բարձր հաճախականության սարքավորումների օգտագործումը կարգավորելու մասին» թիվ 694 որոշումը (ՀՀ ՊՏ 1999/30 (96), 06.12.99): Այն գործում էր, մասնավորապես նաև սույն Վերլուծություն-Հաշվետվության պատրաստման համար անցկացված հարցման ժամանակաշրջանում: Հետագայում, «էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի ընդունումից հետո այդ կառավարության որոշումը ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ կառավարության ընդունած 9 փետրվարի 2006 թվականի N 121-Ն որոշմամբ (ՀՀ ՊՏ թիվ 11, 1 մարտի 2006)

- ռադիոէլեկտրոնային միջոցների ու բարձր հաճախության սարքավորումների ձեռքբերման, ներմուծման և շահագործման իրավունքների թույլտվությանը,
- ռադիոկապի ցանցերի արտադրության դեպքում՝ մշակման, նախագծման և արտադրության իրավունքի համար թույլտվությանը:

Թույլտվությունները տրամադրվում էին ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կողմից:

SS ոլորտի որոշ ապրանքներ հայտնվել էին այդ դաշտում միայն այն քանի համար, որ համակարգչային և այլ SS սարքերում մի քանի դեպքերում օգտագործվում են ռադիոսարքավորումներ կամ դետալներ:

Ներկայումս, թույլտվությունների ինստիտուտը գործում է միայն ռադիոհաճախականությունների օգտագործման համար սահմանափակ դեպքերում և կարգավորվում է «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքով:

3. Հավաստագրում.

Հավաստագրում կամ, որ նույնն է, սերտիֆիկացում տերմինը բխում է «Համապատասխանության գնահատման մասին» ՀՀ օրենքից²¹: Այն վերաբերում է ապրանքներին, արտադրանքին ու ծառայություններին:

Հավաստագրման ինստիտուտի ներքո կարիք կա հակիրճ հղում կատարել նաև ստանդարտացման դաշտին: Ստանդարտացման օրենսդրության ներքո ՀՀ օրենքներով կամ ՀՀ կառավարության որոշումներով սովորաբար սահմանում են տեխնիկական կանոնակարգեր, այսինքն՝ պահանջների ստանդարտ համակարգ արտադրանքի կամ ծառայության համար: Համապատասխանության սերտիֆիկատը հավաստում է, որ արտադրանքը համապատասխանում է տեխնիկական կանոնակարգին: Դա հնարավոր դարձնելու համար ՀՀ կառավարությունը սահմանում է սխեմաներ և դրանց նույնականացման նշագրեր²²: Փաստորեն, բոլոր այն դեպքերում, երբ կան տեխնիկական կանոնակարգեր, ապա համապատասխանության հավաստումը պարտադիր է²³:

Նշենք, որ տեխնիկական կանոնակարգերին վերաբերող առավել թարմ այդպիսի նյութը, որ անմիջականորեն կապված է SS ոլորտին, դա ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 15-ի «Ռադիոսարքավորումների և հեռահաղորդակցության

²¹ Ընդունվել է 2004 թվականի մայիսի 26-ին, տես ՀՀ ՊՏ 2004/34 (333), 30.06.04 հոդ. 795:

²² ՀՀ կառավարության 12.08.2004թ. թիվ 1170-Ն որոշում, տես ՀՀ ՊՏ 48/2004թ., 8 սեպտեմբերի 2004թ.:

²³ Այդպիսի ապրանքների ցանկը սահմանված է ՀՀ կառավարության 29 հուլիսի 2004թ. թիվ 1149-Ն որոշմամբ, տես ՀՀ ՊՏ 2004/47(346), 01.09.04, հոդ. 1042:

վերջնակետային սարքավորումների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 2228-Ն որոշումն է²⁴: Նշենք, որ դրանում ներգրավվեցին նաև համակարգչային թվային հաշվիչ մեքենաները: Հետևաբար սույն Վերլուծություն-Հաշվետվության ամփոփման պահին²⁵ գործող օրենսդրության համաձայն այդ սարքավորումները ՀՀ տարածքում.

- չեն կարող իրացվել առանց համապատասխանության պարտադիր հավաստման,
- պետք է ուղեկցվեն համապատասխանության սերտիֆիկատով և, ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված կարգով պետք է մակնշված լինեն համապատասխանության նշանով:

Կա նաև կամավոր հավաստման դրույթ, երբ ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերով կամ քաղաքացիա-իրավական պայմանագրով սահմանված են պահանջներ, որոնց հավաստման համար էլ կատարվում է համապատասխանության այդ գնահատումը: Կամավոր է կատարվում, մասնավորապես, որակի վերահսկման համակարգի համապատասխանության հավաստումը (օրինակ, ISO-ի կապակցությամբ): Որակի համակարգի հավաստագրումը չի կարող փոխարինել արտադրանքի պարտադիր հավաստագրմանը:

Առաջարկություն

Հրապարակել համապատասխան բրուշուր, պարզաբանում, որը պայմանական տիպային օրինակի վրա կներկայացնի, թե ինչ տեխնիկական պահանջների հետ է առնչվելու որևէ կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր, եթե ցանկանա գործունեություն ծավալել ՏՏ ոլորտում:

Ցանկալի է, որ այդ նյութը ունենա նաև քարտեզ, նշելով համապատասխան կազմակերպությունների տվյալները, ունենա գրպանիկ, որտեղ տեղադրված լինեն դիմումների ձևերը և այլն:

Խնդիր 1.3. Լիցենզավորման հետ կապված խնդիրներ

Նկատառումներ.

Խնդիրը կայանում է նրանում, որ կարիք է լինում լիցենզիա ստանալ նաև այն դեպքում, երբ ՏՏԿ-ն իր ներքին օգտագործման համար է ձեռք բերում որոշակի

²⁴ Տես ՀՀ ՊՏ թիվ 3, 18 հունվարի 2006թ.:

²⁵ 17 ապրիլի 2006 թվական

սարքավորում և ոչ թե դրանով մատուցելու է «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 10-րդ կետում շարադրված գործունեության տեսակներից որևէ մեկը: Այդ իմաստով պարզ չէ, թե ինչ է նշանակում «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43 –րդ հոդվածի վեցերորդ մասի գրառումը. «սույն հոդվածի աղյուսակի հինգերորդ սյունակում “Ա” տառով նշված գործունեության տեսակներով զբաղվելու համար չի պահանջվում լիցենզիա, եթե դրանք իրականացվում են ոչ ձեռնարկատիրական (տնտեսական) գործունեության նպատակով»:

Նկատենք, որ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում կատարված վերջին փոփոխությունների և լրացումների օրենքով այդ նշված հինգերորդ սյունակի առումով փոփոխություններ տեղի չունեցան:

Առաջարկություն

Հրապարակել պարզաբանում այն մասին, թե ինչ են նշանակում «նշված գործունեության տեսակներով զբաղվելու համար չի պահանջվում լիցենզիա, եթե դրանք իրականացվում են ոչ ձեռնարկատիրական (տնտեսական) գործունեության նպատակով» բառերը:

Բացի այդ, հաշվի առնելով այն, որ օրենքի վերջին փոփոխություններով լիցենզավորվողների ցանկից հանվեցին սարքերի ներմուծման և արտադրության լիցենզավորումը, իսկ դրա փոխարեն մտան նոր սահմանումներով գործունեության այլ տեսակներ, ապա ցանկալի է այդ պարզաբանումն ընդլայնել այնպես, որ այն ընդգրկի նաև այդ նոր տեսակների վերաբերյալ դրույթներ:

Խնդիր 1.4. Թույլտվությունների դաշտի սահմանափակումներ

Նկատառումներ.

ՏՏԿ–ների զարգացմանը նաև առավելապես խոչընդոտ է հանդիսանում ռադիոհաճախականություններ տրամադրող գործակալության ոչ թափանցիկ քաղաքականությունն ազատ ռադիոհաճախականությունների տրամադրման հարցում:

«Մենք հիշում ենք հավատարմության արժանի, թափանցիկ, օրենսդրական հավասար և կարգավորող միջավայրի կարևորությունը: Այդպիսով, մենք կրկնում ենք, որ Միջազգային Հեռահաղորդակցության միությունը և այլ ռեգիոնալ կազմակերպությունները, պետք է քայլեր ձեռնարկեն որպեսզի երաշխավորեն բոլոր երկրների հավասարաիրավ մուտքը ռադիոհաճախականությունների սպեկտր և նրանց ռացիոնալ, տնտեսապես արդյունավետ օգտագործումը՝ հիմնվելով համապատասխան միջազգային պայմանագրերի վրա»:

WSIS
Թունիս 2005

Կա նաև կարծիք, որ մասնագիտական իմաստով հաճախականությունների կարգավորումը հասկանալի չէ ռադիոհաճախականությունների ոլորտում, ինչը տրամաբանական և ընդունելի է հեռուստահաղորդումների կարգավորման համար:

Առաջարկություն

- 1) ազատ հաճախականությունների վերաբերյալ տվյալների հրապարակման հարցում ապահովել թափանցիկ մեխանիզմ,
- 2) իրագործել հաճախականությունների առևտրականացում (կոմերցիալիզացիա): Դա նշանակում է ստեղծել աշխատանքային խումբ, կազմված բարձրակարգ մասնագետներից, որոնք հստակորեն կտարանջատեն առևտրականացման ենթակա հաճախականությունները՝ պետությանն անհրաժեշտ հաճախականություններից,

Խնդիր 1.5 Համապատասխանության հավաստագրման խնդիրներ

Նկատառումներ.

Հետազոտության արդյունքներից և փորձագետների կարծիքներից դատելով, կարելի է հավաստագրման գործընթացը համարել առավել խնդրահարույց: Հավաստագրման գործընթացների վերաբերյալ ՏՏԿ-ներն ունեն իրազեկության պակաս: Նշվում է նաև, որ չի հրապարակվել կամ ամեն ամիս չի հրապարակվում սերտիֆիկացման ազգային մարմնի կողմից տեխնիկական կանոնակարգերով սահմանված՝ պարտադիր հավաստագրման ենթակա արտադրանքի և ծառայությունների ցանկը²⁶: Դրանից պարզ կդառնար, թե ՏՏ ոլորտում օգտագործվող հատկապես ռ՞ր սարքավորումներն ու ընթացակարգերն են ենթակա հավաստագրման:

²⁶ Ներկայումս այդ իմաստով գործում են, և հարկավոր է հիմք ընդունել.

ա) ՀՀ կառավարության 29 հուլիսի 2004 թվականի թիվ 1149-Ն որոշումը, (որի Հավելված 1-ով սահմանվել է Հայաստանի Հանրապետությունում համապատասխանության պարտադիր հավաստման ենթակա արտադրանքի ցանկը), տես ՀՀ ՊՏ 47, սեպտեմբերի 1, 2004թ.

բ) ՀՀ կառավարության 29 հոկտեմբերի 2004 թվականի թիվ 1506 -Ն որոշումը (որի Հավելված 1-ով սահմանվել է Հայաստանի Հանրապետությունում համապատասխանության պարտադիր հավաստման ենթակա արտադրանքի ներմուծման, դրա հետզա տնօրինման կարգը, (տես ՀՀ ՊՏ 2004/64 (363), 24.11.04, հոդ. 1303):

Անշուշտ դա կարող է վեճերի և շփոթմունքների առիթ տալ, որն էլ իր հերթին՝ ՏՏ ոլորտի զարգացմանը խոչընդոտ՝ ավելորդ ժամանակային և գումարային կորուստների իմաստով:

Հետաքրքիր է համեմատել ներկրվող սարքերի ու սարքավորումների հավաստագրման գործընթացները և ՀՀ-ում արտադրված արտադրանքների հավաստագրման գործընթացները: Առաջին գործընթացի դեպքում նկատվել է բացի պաշտոնական վճարներից նաև այլ ծախսերի առկայություն (նշվել է կազմակերպությունների մոտ 1/3-ի կողմից), իսկ երկրորդի դեպքում՝ ոչ: Բարձր պաշտոնական վճարները համարվում են խնդրահարույց հարցված ՏՏԿ-ների 44.4 տոկոսի համար, իսկ հիմնական՝ 55.6 տոկոսի համար այն խնդրահարույց չէ: Հետագոտության ընթացքում ՏՏԿ-ներից ստացած տվյալների համաձայն, հավաստագրման համար հավաստագրող մարմիններին կատարված մուծումները կազմել են հավաստագրվող սարքերի ու սարքավորումների (արտադրանքների) ընդհանուր արժեքի 43.3 տոկոսը:

Քննարկումների ընթացքում հաստատվեց, որ հավաստագրումը թանկարժեք գործընթաց է, և հատկապես խնդրահարույց է եղել բարձր հաճախականության ալեհավաքների և ռադիոհաճախականություն ընդգրկող սարքերի ու սարքավորումների հավաստագրման գործընթացը: Վերջիններիս հավաստագրումը պահանջում է առավել մեծ գումարներ: Այսպիսի խնդիրների առկայությունը խոչընդոտ է հանդիսանում նույնիսկ հզոր և կայացած ընկերությունների գործունեության համար:

«Համապատասխանության գնահատման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետում խոսվում է այն մասին, որ սերտիֆիկացման մարմինը իրականացնում է ճանաչված օտարերկրյա սերտիֆիկատների վերաձևակերպումը և հանձնում է ՀՀ-ում սահմանված ձևի սերտիֆիկատ: Իրականում պարզ չէ և հրապարակված չէ այդպիսի «ճանաչվածների» ցանկը:

Վերը նշված մեխանիզմների բացակայության պայմաններում, ներմուծելով որակյալ և համաշխարհային ճանաչում ունեցող սարքեր ու սարքավորումներ, ՏՏԿ-ները ստիպված են լինում առնչվել հայաստանյան հավաստագրող մարմինների ոչ հստակ մեխանիզմի հետ:

Բացի այդ, հայտնի է, որ ՀՀ-ում գոյություն ունեն որոշ հավաստագրերի ճանաչման միջպետական համաձայնագրեր: Նշվում է, որ նման համաձայնագրեր չկան զարգացած և որակյալ արտադրանքներ մատակարարող շատ երկրների հետ: Նշենք

նաև, որ Հայաստանը պետք է շահագրգռված լինի միակողմանի իրավական ակտերով ճանաչել այլ երկրներում տրված հավաստագրերը բարձրորակ սարքերի ու սարքավորումների համար: Այս մեխանիզմը հնարավորություն կտա առավել դյուրին դարձնել հավաստագրման համակարգը՝ նաև նվազեցնելով պետական հավաստագրող կառույցի վրա ծանրաբեռնվածությունը:

SSԿ–ները նշում են, որ գոյություն ունի շփոթություն հավաստագրվող օբյեկտների նկատմամբ: Այսինքն՝ հաճախ կազմակերպությունները հավաստագրում են ISO որակի վերահսկման համակարգը, իսկ այլ դեպքում՝ հակված են միանգամից հավաստագրել հոսքագիծը: Հարցվող SSԿ-ներին պարզ չի եղել, թե այդ դեպքում հոսքագծի և/կամ որակի վերահսկման համակարգի հավաստագրման հետ միասին կա՞ նաև անհրաժեշտություն միաժամանակ հավաստագրելու սարքավորումները և արտադրանքը, թե՞ առաջինների հավաստագրված լինելը արդեն կնշանակի արտադրանքի և սարքավորումների հավաստագրում: Այդ իմաստով պետք է նշել հետևյալը.

- սերտիֆիկացումը ISO 9001:2000 ստանդարտին կամ էլ ցանկացած մեկ այլ ստանդարտին համապատասխան, վերաբերում է միայն ձեռնարկության որակի վերահսկման համակարգին, և չի տարածվում նրա կողմից թողարկվող արտադրանքի կամ ծառայության վրա,
- համաձայն «Համապատասխանության գնահատման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ կետի՝ որակի վերահսկման համակարգի (և կամ բնապահպանական կառավարման համակարգերի) հավաստագրումը Հայաստանում համարվում է կամավոր և չի կարող փոխարինել արտադրանքի պարտադիր հավաստագրմանը:

Ինչ վերաբերում է հոսքագծերին, ապա տեղին ենք համարում նշել, որ SS ոլորտում սովորաբար «հոսքագծերի» փոխարեն հանդես են գալիս հիմնականում պրոցեսներ, մասնավորապես՝ կողավորում, տեստավորում, ծրագրավորում և այլն: Այդպիսի պրոցեսների հավաստագրման համար կիրառելի է ամերիկյան CMMI (Capability Maturity Model Integration) որակի վերահսկման համակարգը, որի կիրառումը գրեթե բացակայում է ՀՀ – ն հավաստագրման համակարգում:

Սերտիֆիկացման ընթացքը կախված է ընտրված որակի մոդելից: Գոյություն ունեն քավականին մեծ տարբերություններ սերտիֆիկացման ընթացակարգերի միջև ISO 9000 և CMM/CMMI համակարգերի համար: Այնուամենայնիվ այդ ընթացակարգերն ունեն մի շարք հատկանշական ընդհանուր գծեր, որոնք կայանում են հետևյալում՝

- *Փաստաթղթերի ուսումնասիրություն: Այդ ուսումնասիրության նպատակն է արձանագրել, թե արդյոք նկարագրված պրոցեսները համապատասխանում են կիրառվող ՈԿՀ-ին:*
- *Ստուգումը, թե արդյոք պրոցեսները իրականացվում են իրենց նկարագրվածին համապատասխան, այսինքն կազմակերպությունում գործող ընթացակարգերով, աշխատանքային հրահանգներով, ձևաչափերով և օրինակներով: Այս ստուգումը իրականացվում է այդ պրոցեսները իրականացնողների հետ՝ հարցազրույցների անցկացման միջոցով, փաստաթղթային վկայությունների հավաքմամբ և վերլուծությամբ:*
- *Հայտնաբերված վկայությունների փաստաթղթավորում և ձեռնարկությունում գործող որակի վերահսկման համակարգի համապատասխանության կամ անհամապատասխանության որոշում՝ ընտրված որակի վերահսկման մոդելի համեմատ:*
- *Սերտիֆիկացման արդյունքների ձևակերպում:*

<http://www.datafort.ru/content/rus/182/1823-article.asp>

Այսպիսով, անդրադառնալով գրանցման, լիցենզավորման և հավաստագրման գործընթացներին, ակնհայտ է դառնում, որ նրանք պարունակում են որոշակի երևույթներ, որոնց առկայությունը խոչընդոտում է SS կազմակերպությունների գործունեությանը:

Այս ոլորտի զարգացման համար առավել խնդրահարույց են համարվում հետևյալ խնդիրները. SS ոլորտում լիցենզավորման, թույլտվությունների և հավաստագրման ինստիտուտների պարզ չլինելը, լիցենզավորման և հավաստագրման գործընթացների անհստակությունը (իրավական ակտերում սահմանված չէ, թե SS ոլորտում օգտագործվող հատկապես ո՞ր սարքավորումներն ու ընթացակարգերն են ենթակա հավաստագրման), հավաստագրման համար պահանջվող բարձր պաշտոնական վճարները (հատկապես բարձր հաճախության ավեհավաքների հավաստագրման ժամանակ) և իրազեկության պակասը:

Վերջին տարիներին նկատվում է հին և օգտագործված համակարգչային տեխնիկայի ներմուծման մեծ հոսք ՀՀ: Փորձագետները գտնում են, որ այս երևույթը

վաղ թե ուշ մեծ խնդիրների պատճառ է դառնալու ՀՀ-ում (ինչպես դա ակնառու է շատ զարգացած պետություններում), և որ դա նաև բնապահպանական և առողջապահական խնդիր է: Իրականում սերտիֆիկացման կամ մաքսային օրենսդրությունը չեզոք են այդպիսի հին սարքերը Հայաստան բերելու նկատմամբ:

Առաջարկություններ

1) Գյուրորեն մատչելի դարձնել (ներառյալ ԱՏԳ ԱԱ դասակարգչի կողերի տեքստային ներկայացումը) ՏՏ ոլորտում արտադրանքի և ծառայությունների ցանկ, որոնք ենթակա են պարտադիր հավաստագրման: Հարցի լուծում կարող է լինել օրինակ, ՏՏ ոլորտի բոլոր տեխնիկական կանոնակարգերի ցանկի հրապարակումը²⁷: Նպատակահարմար է պարտադիր հավաստագրում նախատեսել միայն այն սարքավորումներն ու գործընթացները, որոնք առավել վտանգավոր են և կարող են ունենալ բացասական ազդեցություն պետական և հասարակական անվտանգության, էկոլոգիական և այլ առավել կարևորագույն ոլորտների վրա: Մյուս բոլոր սարքավորումների և գործընթացների հավաստագրումը ցանկալի է սահմանել կամավոր,

2) Հստակեցնել և հրապարակել այն սայրանքատեսակների ցանկը, որոնց գծով Հայաստանում ավտոմատորեն ճանաչվելու են այլ երկրների սերտիֆիկատները: Այդ հնարավորությունը նախատեսված է «Համապատասխանության գնահատման մասին» ՀՀ օրենքով:

3) Հաշվի առնելով նշումներն այն մասին, որ տվյալ բնագավառում գոյություն ունի նաև հովանավորչություն, ապա անհրաժեշտ է նույնականացնել կոռուպցիոն ռիսկերը և փորձել դրանք նվազեցնել: Նման խնդիրը լուծելու համար հարկավոր է համապատասխան իրավական ակտերում նվազեցնել երկիմաստությունները և օրենսդրությամբ նախատեսել այնպիսի մեխանիզմներ, որով լիցենզավորող, թույլտվություն տվող և հավաստագրող մարմինները ապահովեն իրենց աշխատանքի ավելի լայն հրապարակայնությունը,

4) Նախատեսել մեխանիզմ, որ ՏՏԿ-ները հնարավորություն ունենան օպերատիվորեն հստակեցնել, թե հատկապես որն է հանդիսանում հավաստագրման օբյեկտը. ամբողջ սարքը, սայրանքը, արտադրանքը,

²⁷ Վերջերս հրապարակվեց ՏՏ ոլորտի հետ առնչություն ունեցող այդպիսի մի տեխնիկական կանոնակարգ, (տես «Ռադիոսարքավորումների և հեռահաղորդակցության վերջնակետային սարքավորումների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 2228-Ն որոշումը (ՀՀ ՊՏ 3, 18 հունվարի 2006թ.):

պրոցեսը, թե միայն դրա որոշակի հատվածը: Այս մեխանիզմը նախատեսված է օրենսդրությամբ, սակայն այն իրական պրակտիկայում լայն կիրառություն առայժմ չի գտել:

«Մենք մեծապես քաջալերված ենք այն փաստով, որ հեռահաղորդակցության և տվյալների արագազիծ ցանցերի զարգացումները շարունակաբար մեծացնում են զարգացող երկրների և անցումային շրջանում գտնվող տնտեսություններով երկրների գլոբալ ՏՀՏ ծառայությունների, շուկայում մասնակցության հնարավորությունը, հիմքում դնելով նրանց համեմատական առավելությունները: Այս նորահայտ հնարավորությունները տալիս են հզոր կոմերցիոն հիմքեր այդ երկրների ՏՀՏ ենթահամակարգերում ներդրումներ կատարելու համար: Հետևաբար, կառավարությունները պետք է գործեն այնպես, որպեսզի աջակցեն հնարավորությունների ընձեռնմանը և մրցակցային միջավայրի ստեղծմանը, ՏՀՏ ենթահամակարգերում անհրաժեշտ ներդրումներին: Միևնույն ժամանակ, պետությունները պետք է հետևեն իրենց ռազմավարություններին և չափանիշներին, որպեսզի չհիասթափեցնեն կամ չխոչընդոտեն այդ երկրների շարունակական մասնակցությանը ՏՀՏ ծառայություններին գլոբալ շուկայում:»

WSIS
Թունիս 2005

5) Ունենալ ազգային իրավական ակտեր, որոնցով միակողմանի կրնդունվեն համաշխարհային ճանաչում ունեցող կամ օտարերկրյա հավաստագրում ունեցող բարձրորակ արտադրանքների և գործընթացների հավաստագրերը:

6) Ստեղծել աշխատանքային խումբ նշված հարցերը վերջնականորեն հստակեցնելու և լուծումների համակարգված մոտեցմամբ, առաջարկություններ ձևավորելու նպատակով

I.2. Մտավոր սեփականության պահպանության հարցեր

ՏՏԿ-ները կարող են լինել մտավոր սեփականության իրավատերեր՝ ինչպես հեղինակային իրավունքի, այնպես էլ արդյունաբերական սեփականության օբյեկտների իրավատերեր:

Հեղինակային իրավունքի օբյեկտներ են հիմնականում համակարգչային ծրագրերը (մտավոր սեփականության իրավատեր ՏՏԿ-ների 64.7 տոկոսի մոտ) և արվեստի ստեղծագործությունները (ցանցակալքեր 23.5 տոկոս):

Արդյունաբերական սեփականության օբյեկտներ են ապրանքային կամ սպասարկման նշանները (23.5 տոկոս) և օգտակար մոդելներն ու արդյունաբերական նմուշները (11.8 տոկոս):

Ըստ հարցման արդյունքների՝ իրականում ՏՏԿ-ների միայն 32.7 տոկոսն է հանդիսանում մտավոր սեփականության օբյեկտի իրավատեր, իսկ մնացած 67.3 տոկոսը, տարբեր պատճառներով (Աղյուսակ 13), դուրս է այդ դաշտից:

Աղյուսակ 13. ՏՏԿ-ների՝ մտավոր սեփականության իրավատեր չլինելու պատճառներ

ՄՍ իրավատեր չլինելու պատճառ		Տոկոս*
1	Մտավոր սեփականության օբյեկտը պատկանում է պատվիրատուին	22.9
2	Մտավոր սեփականության օբյեկտը պատկանում է գլխամասային կազմակերպությանը	22.9
3	Ընդհանրապես չունեն իրավունքներ մտավոր սեփականության իրավունքի օբյեկտների նկատմամբ	48.6
4	Չգիտեն, թե ինչպես կատարել համապատասխան ձևակերպումները	5.6

* Տվյալ պատճառը նշած ՏՏԿ-ների թվի հարաբերությունը մտավոր սեփականության օբյեկտների իրավատեր չհանդիսացող ՏՏԿ-ների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ:

Հարցման արդյունքում պարզվել է, որ լիցենզային պայմանագրերի կնքման գործելակերպը գրեթե բացակայում է. հետազոտության ընթացքում արձանագրվել է լիցենզային պայմանագրերի կնքման ընդամենը 3 դեպք, որոնց վերաբերյալ ստացված տեղեկությունները ներկայացված են ստորև (Աղյուսակ 14).

Աղյուսակ 14. Տեղեկություններ լիցենզային պայմանագրերի վերաբերյալ

Լիցենզային պայմանագրերի կնքման տարեթիվը	Լիցենզային պայմանագրերի քանակը	Օգտագործման տարածքը (երկիրը)
2001	1	Հայաստան
	1	ԱՄՆ
2004	1	Հայաստան

Մտավոր սեփականության իրավատեր ՏՏԿ-ների մոտ մեկ երրորդը նշել է, որ մտավոր սեփականության օբյեկտի նկատմամբ իրավունքը ձեռք բերելու ժամանակ չեն հանդիպել որևէ դժվարության, իսկ դժվարությունների հանդիպածների տրամադրած տեղեկությունները ամփոփված են ստորև (Աղյուսակ 15).

Աղյուսակ 15. Մտավոր սեփականության իրավունքի ձեռք բերման հետ կապված դժվարություններ

Խնդիր կամ դժվարություն		Տոկոս*
1	Մտավոր սեփականության իրավունքի վերաբերյալ իրավական ակտերի անորոշություն	17.6
2	Մտավոր սեփականության իրավունքի ձեռք բերման համար անհրաժեշտ փաստաթղթերի վերաբերյալ տեղեկատվության պակաս	29.4
3	Մտավոր սեփականության իրավունքի ձեռք բերման համար անհրաժեշտ փաստաթղթեր կազմելու (լրացնելու) փորձի և իրազեկության պակաս	17.6
4	Իրավաբանների (միջնորդ կազմակերպությունների) պակաս	5.9
5	Մտավոր սեփականության նկատմամբ շնորհող/գրանցող լիազոր մարմնի աշխատակիցների կողմից արհեստական դժվարությունների ստեղծում	5.9
6	Ժամանակատար գործընթաց է	5.9
7	Դժվարանում են պատասխանել	11.8

* Տվյալ խնդիրը կամ դժվարությունը նշած ՏՏԿ-ների թվի հարաբերությունը մտավոր սեփականության օբյեկտների իրավատեր ՏՏԿ-ների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ:

Մտավոր սեփականության իրավատեր ՏՏԿ-ների 29.4 տոկոսն առնչվել է իր մտավոր սեփականության իրավունքի խախտման հետ, իսկ դրանց 70.6 տոկոսը նման խնդիր չի ունեցել: Իրենց մտավոր սեփականության իրավունքների խախտման դեպքում ՏՏԿ-ները վեճերը փորձել են կարգավորել մեծամասամբ ուղղակի բանակցությունների միջոցով (առանց իրավաբանի օգնության)՝ գերադասելով չդիմել դատարան (Աղյուսակ 16):

Աղյուսակ 16. Մտավոր սեփականության իրավունքի շուրջ վեճերի լուծման եղանակներ

Վեճի լուծման եղանակը	Իրավաբանի միջնորդությամբ, տոկոս*	Առանց իրավաբանի միջնորդության, տոկոս*
1	Բանակցությունների միջոցով	23.5
2	Դատական կարգով	-

* Տոկոս՝ մտավոր սեփականության իրավունքի խախտման հետ առնչված ՏՏԿ-ների ընդհանուր թվից:

Խնդիրները. նկատառումներ և լուծման առաջարկներ

Խնդիր 1.6. Մտավոր սեփականության իրավունքների օրենսդրության բարդություններ

Նկատառումներ.

Ամփոփելով ՏՏԿ-ների շրջանում անցկացրած հարցախույզի, ինչպես նաև փորձագետների եզրակացությունները, կարելի է որպես ընդհանրական կարծիք նշել, որ ՏՏ ոլորտում մտավոր սեփականության իրավունքների պաշտպանությունն առայժմ ցանկալի մակարդակի չի հասել: Չնայած ՏՏԿ-ների շրջանում աստիճանաբար մեծանում է հետաքրքրությունը, նրանք լավատեղյակ չեն իրենց իրավունքներին ու դրանք պաշտպանելու միջոցներին, չնայած գործող օրենսդրական դաշտը բավականին զարգացած է: Այսպիսով, մտավոր սեփականության հետ կապված խոչընդոտները հիմնականում կապված են համապատասխան գործակալության²⁸ համեմատաբար փոքր ռեսուրսներ ունենալու (դեռևս վերջնական ու ամուր ձևավորված չլինելու), ինչպես նաև բարդ, մասնագետների կողմից երբեմն նաև «թերի» որակված օրենսդրության գոյության հետ.

- ՀՀ օրենսդրությամբ բոլոր հեղինակային իրավունքները պատկանում են պատվիրատուին (կամ գլխավոր գրասենյակին): Եվրոպական երկրների օրենսդրությամբ հեղինակի համար սովորաբար նախատեսված է լինում պարտադիր համարժեք վարձատրություն (Royalty): ՀՀ օրենսդրությամբ այն չի համարվում պարտադիր: Ամերիկյան օրենսդրությունը ևս հակված է աշխատողի ստեղծած արգասիքի հիմքում տեսնել գործատուին, նրա մոտ աշխատելու-ստեղծագործելու հանգամանքը: Փորձագետները նշում են, որ հայաստանյան ՏՏ կազմակերպությունները դեռևս բավականին կախյալ վիճակում են օտարերկրյա ներդրողներից՝ այս հարցի լուծման ընթացքում սեփական քաղաքականություն կիրառելու համար,
- խոցելի է նաև ապրանքային նշանների օրենսդրությունը (տես, «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածը): Դա հնարավորություն է տալիս իրականացնել հետևյալը. որևէ կազմակերպություն, որևէ հանրահայտ ապրանքային նշանի մուտքը ՀՀ խոչընդոտելու նպատակով, նախապես այն գրանցում է հանրապետությունում,

²⁸ Խոսքը վերաբերում է ՀՀ մտավոր սեփականության գործակալությանը, որն այժմ գործում է ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության համակարգում:

- օրենքի բացթողում կարելի է համարել նաև «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում «բարեխղճության սկզբունքների խախտման» օրինակների բացակայությունը՝ մասնավորապես, այնպիսի լիցենզային պայմանագրերի կնքման վերաբերյալ, որոնք ընդգրկում են հետևյալ կարգի պայմաններ՝

ա) արգելում են լիցենզառուին վիճարկել լիցենզային պայմանագրի առարկա հանդիսացող մտավոր սեփականության օբյեկտի նկատմամբ իրավունքի օրինականությունը,

բ) պարտադրում են լիցենզառուին մտավոր գործունեության մի քանի արդյունքներ օգտագործելու պայմանագիր կնքել (փաթեթային լիցենզավորում), եթե դա չի պայմանավորված մտավոր գործունեության որոշակի արդյունքը տեխնիկապես բավարար շահագործելու կամ լիցենզավորված տեխնոլոգիայի արդյունավետությունը երաշխավորելու անհրաժեշտությամբ,

գ) պարտադրում են լիցենզառուին լիցենզային պայմանագրի առարկա հանդիսացող մտավոր գործունեության արդյունքի կատարելագործումները օգտագործելու բացառիկ իրավունքը փոխանցել կամ զիջել լիցենզատուին,

դ) պարտադրում են լիցենզառուին լիցենզավորված մտավոր գործունեության արդյունքի օգտագործման համար անհրաժեշտ սարքերն ու նյութերը գնել միայն լիցենզատուից:

Անրադառնալով ՏՏԿ-ների կողմից արտոնագրի միջոցով համակարգչային ծրագրերի պաշտպանության հարցին՝ նշենք, որ համակարգչային ծրագիրը կարող է արտոնագրատուի համարվել, եթե միայն այդ ծրագիրը կազմում է որևէ գործընթացի (պրոցեսի) բաղկացուցիչ մաս և գյուտը կարելի է նկարագրել իբրև «որոշակի» (ուրույն) համակարգչային ծրագրով կառավարվող պրոցես: Սակայն, այդ կարգի նկարագրությունը բավականին բարդ է և պահանջում է որոշակի հմտություններ: Այս հարցում ակներև է հայրենական արտոնագրային հավատարմատարների ու Մտավոր սեփականության գործակալության փորձագետների համապատասխան փորձի բացակայությունը:

Դիտարկելով հետազոտության արդյունքները, ինչպես նաև փորձագետների եզրակացությունները, կարելի է եզրակացնել, որ գործարար շրջանակներում գոյություն չունի հստակ պատկերացում «հեղինակային» և «արտոնագրային» դաշտերի և նրանց տարբերության վերաբերյալ: Նաև հստակ չեն վաճառողի և գնորդի

պարտականությունները լիցենզավորված արտադրանքի մասին խոսելիս: Քննարկումները բացահայտեցին, որ գոյություն ունեն նշված հարցերը պարզաբանող ձեռնարկներ, սակայն նրանք առայժմ գործարար շրջանակներում տարածված չեն:

Իռլանդիայի արտոնագրային գրասենյակն ունի երկու ինֆորմացիոն կենտրոններ, որոնցից մեկը գտնվում է Քիլքենի (Kilkenny) քաղաքում, իսկ մյուսը՝ Դուբլինում (Dublin): Այս կենտրոններում գործում են գրադարաններ, որոնք հազեցված են ինչպես ընտրված գրքերով և պարբերականներով, որոնք կարող են հետաքրքիր լինել գյուտարարներին, ապրանքանշանների իրավատերերին և այլ հետաքրքրված անձանց, այնպես էլ արտոնագրերի և ապրանքային նշանների օրենքների մասին նորացված տպագրություններով:

Արտոնագրային գրասենյակը նաև ունի տպագրված արտոնագրային փաստաթղթերի հսկայական հավաքածու, և՛ CD, և՛ DVD տարբերակներով, որոնց մեծ մասը տեղադրված են 4000 սկավառակ տարողությամբ ցանցային սկավառակափոխիչներում: Այսպիսով, ներկա և ապագա գիտնականներն ունեն արագորեն հավաքածուից օգտվելու հնարավորություն Դուբլինի և Քիլքենի աշխատավայրերից:

Կարևոր գործոններ են նաև հայկական շուկայի սահմանափակությունը և այն հանգամանքը, որ տեղական ՏՏԿ-ների ստեղծագործությունների նկատմամբ մտավոր սեփականության իրավունքները պատկանում են պատվիրատուներին կամ իրենց գլխամասային կազմակերպություններին, իսկ սեփական միջոցներով ստեղծված մշակումները դեռևս շատ քիչ են:

Առաջարկություններ

- 1) ԲՈՒՀ-երի և գիտահետազոտական հիմնարկների նկատմամբ օրենսդրությամբ նախատեսել գյուտերի իրավական պահպանության համար նախատեսված պետական տուրքերի վճարման զեղչեր,
- 2) քննարկել այն հնարավորությունը, որ բյուջետային օրենսդրության փոփոխություններով սահմանվի, որ արդյունաբերական սեփականության իրավական պահպանության հետ կապված տուրքերը նպատակային օգտագործվեն մտավոր սեփականության իրավունքի պաշտպանության ոլորտը բարելավելու համար,

3) քննարկել մտավոր սեփականության գործակալությունում ՏՏԿ-ների սպասարկման մասով առանձնացված ստորաբաժանում (բարձր որակավորում ունեցող մասնագետներով համալրված) ստեղծելու հնարավորությունը,

4) մշակել և լայնորեն տարածել տեղեկատվական ձեռնարկներ մտավոր սեփականության իրավունքի ձեռքբերման ու պահպանության ձևերի և ընթացակարգերի մասին, հատկապես ՏՏ բնագավառում: Դրա մեջ պետք է ներառվեն անդրադարձեր հեղինակային իրավունքի, արտոնագրման օրենսդրությունից, ինչպես նաև աշխատանքային օրենսգրքի և տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսգրքի դրույթների վերաբերյալ:

ՄԱՍ II. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏՈՒԺՈՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ

II.1. Ֆինանսական ռեսուրսների հայթհայթում

Գնահատելով սեփական ֆինանսական ներուժը՝ ՏՏԿ-ների կեսից ավելին՝ 53.8 տոկոսը, նշել են, որ իրենց կազմակերպությունների ընդլայնման ու զարգացման համար ունեն բավարար սեփական ֆինանսական միջոցներ: Այնուամենայնիվ, հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ ՏՏԿ-ներն իրենց զարգացման համար արտաքին ֆինանսական միջոցներ հայթհայթելիս հանդիպում են մի շարք խոչընդոտների: Համեմատաբար զգալի մտահոգություն են առաջացնում հատկապես վարկերի բարձր տոկոսադրույքը, երկարաժամկետ վարկերի պակասը, ինչպես նաև բանկերի կողմից դրվող՝ պարտավորությունների ապահովման պահանջները (Աղյուսակ 17):

Աղյուսակ 17. Արտաքին դրամական միջոցների ներգրավման ժամանակ հանդիպող դժվարությունների գնահատում. միջինացված արժեքներ

Խնդիր կամ դժվարություն		1-խնդիր չէ, 4-մեծ խնդիր է
1	Բարձր տոկոսադրույքներ	2.83
2	Երկարաժամկետ բանկային վարկերի պակաս	2.65
3	Պարտավորության ապահովության պահանջներ բանկերի և այլ ֆինանսական հաստատությունների կողմից	2.04
4	Բանկերից բացի այլ ֆինանսավորողների (օրինակ՝ ներդրողների) պակաս	1.98
5	Ֆինանսական վարձակալության (լիզինգի) համար ֆինանսավորման պակաս	1.96
6	Առանց պարտավորության ապահովման վարկեր ստանալու հնարավորության պակաս՝ գրանցված վարկային պատմության առկայության պարագայում	1.92
7	Խրթին թրթավարություն և ձևականություններ բանկերում	1.87
8	Ոչ բավարար տեղեկատվություն ֆինանսական ծառայությունների դաշտի վերաբերյալ	1.77
9	Բանկերի (ֆինանսական հաստատությունների) հետ հատուկ կապեր ունենալու կարիք	1.6
10	Հովանավորչություն և այլ ոչ ֆորմալ վերաբերմունք բանկերի պաշտոնյաների կողմից	1.46
11	Արտահանման գործարքների համար ահրաժեշտ ֆինանսավորման պակաս	1.27

Խնդիրները, նկատառումներ և լուծման առաջարկներ

Խնդիր 2.1. *Ֆինանսական ռեսուրսներ հայթհայթելու դժվարությունը, արտարժույթային տատանումների ազդեցություն*

Նկատառումներ

Ելնելով հետազոտության ժամանակ ձեռք բերված տեղեկատվությունից, ինչպես նաև փորձագիտական քննարկման արդյունքներից կարելի է նշել, որ ՏՏԿ–ների համար ֆինանսական ռեսուրսների հարցը խնդրահարույց է, հատկապես երկարաժամկետ վարկավորման պակասը, բարձր տոկոսադրույքները կարճաժամկետ պայմանագրերի իրականացման համար վարկերի ապահովումը: Նշվում է նաև պարտավորությունների ապահովման պահանջի ցանկալի ավելի ճկուն կիրառման մասին. այսպես, կազմակերպությունը չունենալով համապատասխան գրավի առարկա, բայց ցուցաբերելով ակնհայտ կայուն գործունեություն և ունենալով իրատեսական բիզնես-պլան, չի կարողանում օգտվել վարկային ծրագրերից: Փաստորեն բացակայում են այնպիսի մեխանիզմներ, որոնք թույլ կտային այդպիսի պարագայում պարզեցնել վարկավորման գործընթացը:

2005թ. WSIS–ի Թունիսյան գագաթաժողովը ընդունեց դրույթ, որ անդամները ստեղծեն ազգային և միջազգային մակարդակներում աջակցում է օտարերկրյա ուղղակի ներդրումներին, տեխնոլոգիաների տեղաբաշխմանը աջակցող մթնոլորտ, սահուն դարձնելով միջազգային համագործակցությանը ֆինանսավորման և առևտրի ոլորտներում:

Որպես հնարավոր զարգացման ուղղություն նշվեց, որ ՀՀ կենտրոնական բանկը (ԿԲ) սկսել է զբաղվել հանարավոր վարկառու կազմակերպությունների ռեյտինգավորմամբ: Նշվեց, որ այն կունենա բարերար ազդեցություն, եթե լինի ոչ միայն ինֆորմացիայի հավաքագրում, այլ նաև վարկերի տրամադրման կայուն մեխանիզմի գործիք:

Փորձագետները նշում են, որ ՏՏ ոլորտի համար առավել խնդրահարույց հարցերից է արտարժույթի փոխարժեքի կտրուկ տատանումները: Վերջինիս հիմնական պատճառն այն է, ինչպես և բոլոր արտահանողների համար, որ ՏՏԿ–ներն արտահանելով արտադրանքը կամ ծառայությունը, եկամուտները ստանում են արտասահմանում, իսկ ծախսերը՝ հիմնականում կատարում են ՀՀ–ում: Սա շատ էական խնդիր է հանդիսանում հատկապես փոքր, սկսնակ և միջին

ձեռնարկությունների համար, որոնց համար տարադրամի տատանումներից առաջացող անկայուն վիճակը կարող է սնանկացման պատճառ հանդիսանալ:

Հարկ է նշել որ ՀՀ-ում գործարար շրջանակներում դեռևս չեն մշակվել ու չեն գործում արտարժույթի փոխարժեքի կտրուկ տատանումներից ապահովագրվելու մեխանիզմներ, որպիսին կարող էր լինել, մասնավորապես ֆորվարդային տեսակի պայմանագրերի գործիքի օգտագործումը և այլն:

Ներդրումների համար ֆինանսական միջոցների հավաքագրման և այդ իմաստով SS ոլորտի զարգացման կարևոր պայման է հանդիսանում արժեթղթերի շուկայի ակտիվ գործելը, ինչպես նաև ինվեստիցիոն հիմնադրամների և վենչուրային կազմակերպությունների գործունեության հնարավորությունները: Վերջինիս կիրառման խոչընդոտներից է համապատասխան օրենսդրության ոչ բավարար մշակված լինելը:

Առաջարկություններ

- 1) փոխվատահության ապահովման նպատակով մշակել և պիլոտային ձևով կիրառել SSԿ-ների և բանկերի համագործակցության նոր պրակտիկ մեխանիզմ, օրինակ, երաշխիքների տրամադրման կամ ռեյտինգավորման միջոցով,
- 2) քննարկել այն հնարավորությունը, որ SSԿ-րի համար .հասույթի ցուցանիշը, համատեղ միջազգային նախագծերի իրագործման դեպքում, ձևավորվի ոչ թե սովորական եղանակով, այլ հիմնական նախագիծը ավարտելուց հետո: Մասնավորապես դա կարող է կապվել ընդհանուր նախագծի արդյունքների մասին արտասահմանից համապատասխան հավաստում ստանալու հետ և այլն: Այդպիսի արտասահմանյան փորձ առկա է միջազգային գնանշում ունեցող ապրանքատեսակների հետ աշխատելու պարագայում և դա սովորաբար իրականացվում է այսպես կոչված «Credit note» ինստիտուտի (փաստաթղթի) միջոցով: Հայաստանում ևս հարկային նպատակով այդպիսի աստիճանավորված ձևով հասույթի որոշման կարգ վերջերս գործարկվեց հանքարդյունաբերության ոլորտում: Դա օգտակար կլինի ինչպես հարկի վճարման ժամկետային արտոնության իմաստով, այնպես էլ արտարժույթային փոխարժեքի ռիսկերի կառավարման համար:
- 3) մշակել ու զարգացնել որոշակի գործիքներ, պայմանագրի տեսակներ՝ արտարժույթի փոխարժեքի տատանումներից ապահովագրվելու կամ դրա ազդեցությունը կառավարելի դարձնելու համար:

4) նպաստել ինվեստիցիոն հիմնադրամների և վեճուրային կազմակերպությունների օրենսդրության մոտալուտ զարգացմանը և ընդունմանը:

II.2. Որակյալ աշխատուժի ձեռք բերման դժվարություններ

Ինչպես և կարելի էր սպասել, աշխատուժի վերաբերյալ ՏՏԿ-ներից ստացված տվյալներից երևում է, որ ՏՏ ոլորտում միջին աշխատավարձը բավականին բարձր է. նույնիսկ ոչ մասնագիտական (օժանդակ) անձնակազմի աշխատավարձը գերազանցում է Հայաստանի Հանրապետությունում մասնավոր հատվածում ձևավորված միջին վիճակագրական աշխատավարձի չափը (Աղյուսակ 18)²⁹:

Նախորդող երեք տարիների ընթացքում ՏՏԿ-ների մեծամասնության մոտ (53.8 տոկոսի) աշխատողների քանակը զգալիորեն աճել է: Նշված ժամանակահատվածում այդ ՏՏԿ-ներում աշխատողների թվի աճը կազմել է միջինում 89.6 տոկոս, իսկ այն ՏՏԿ-ներում, որտեղ աշխատողների թիվը նվազել է, անկումը կազմել է միջինում 33.8 տոկոս:

Աղյուսակ 18. ՏՏԿ-ների աշխատողների քանակը և միջին աշխատավարձն ըստ ստորաբաժանումների. միջինացված արժեքներ

Ստորաբաժանումներ		Աշխատողների թվաքանակ		Միջին աշխատավարձ	
1	Արտադրական	22		147,278.0	
2	Նվազ.-առավելագ.	1	120	25,000.0	400,000.0
3	Շուկայավարձան (մարկետինգի)	2.6		110,263.0	
4	Նվազագ.-առավելագ.	1	8	20,000.0	300,000.0
5	Ֆինանսա-տնտեսական (վարչական)	4.6		176,207.0	
6	Նվազագ.-առավելագ.	1	20	20,000.0	500,000.0
7	Օժանդակ անձնակազմ	5		61,905.0	
8	Նվազ.-առավելագ.	1	50	15,000.0	160,000.0
9	Ընդամենը	34.2		123,151.0	
10	Նվազ.-առավելագ.	2	190	23,333.0	325,333.0

Չնայած ՏՏԿ-ներում աշխատողների թվի աճին, հարցված կազմակերպությունների մեկ երրորդը բավարարված չէ իր ստորաբաժանումների մասնագիտական համալրման

²⁹ Հավանական է իրական տվյալները նույնիսկ մի փոքր ավելի մեծ են, քանի որ սոցիոլոգիական հարցումների ժամանակ մարդիկ, որպես կանոն, հակված են պակասացնել իրենց եկամուտները և գերազնահատել իրենց ծախսերը:

մակարդակով: ՏՏԿ-ների ղեկավար աշխատակիցների կարծիքով, այսօր մի շարք մասնագիտությունների գծով մասնագետների սուր պահանջ կա, հատկապես որակյալ ծրագրավորողների, ՏՏ ճարտարագետների և շուկայագետների: Մասնագիտությունների հաջորդ խումբը, որոնց պակասը մտահոգում է ՏՏԿ-ներին, դա ծրագրերի ղեկավարները, հաշվապահներն ու իրավաբաններն են (Աղյուսակ 19): Նշենք, որ ՏՏ գործի ճիշտ կառավարման համար ՏՏԿ-ներն առավել կարևորում են համակարգչային ծրագրերի կառավարիչների ու շուկայագետների մասնագիտությունը, այնինչ փորձագետների մեծ մասը նշում է ընդհանրապես ՏՏ գործի կառավարիչների մասին (ովքեր տիրապետում են գործարարության կանոններին և, միաժամանակ, ՏՏ գործի լավ գիտակ են):

Կարևոր հանգամանք է նաև այն, որ ՏՏԿ-ների մոտ մեկ երրորդը (32.7 տոկոսը) բավարարված չէ իր ներկա մասնագետների որակավորման մակարդակով: ՏՏԿ-ների ղեկավար աշխատակիցները համարում են, որ իրենց աշխատակիցները կարիք ունեն զգալիորեն բարելավելու հետևյալ որակները. ծրագրային լեզուների իմացություն, ծրագրերի կառավարում, շուկայավարում, նոր տեխնոլոգիաների իմացություն, տեսական գիտելիքներ, ինչպես նաև օտար լեզվի իմացություն:

Աղյուսակ 19. Անհրաժեշտ մասնագետների ցանկ

Մասնագետ		Տվյալ մասնագիտությունը նշած ՏՏԿ-ների թվի հարաբերությունը մասնագետների պակաս ունեցող ՏՏԿ-ների թվին տոկոսային արտահայտությամբ
1	Ծրագրի ղեկավար	5.8
2	ՏՏ ճարտարագետ	11.5
3	Ծրագրավորող	17.3
4	Շուկայագետ	15.4
5	Հաշվապահ	5.8
6	Իրավաբան	9.6
7	Այլ	1.9

Որակյալ մասնագետների սակավությունից կամ նրանց ծառայությունների թանկ լինելուց ելնելով՝ ՏՏԿ-ների կեսից ավելին (57.7 տոկոսը) գերադասում է այդ մասնագիտություններով մշտական աշխատակիցներ պահելու փոխարեն նրանց ծառայությունները գնել պարբերական հիմունքներով՝ ըստ անհրաժեշտության: Այդ մոտեցումը շատ հաճախ կիրառվում է իրավաբանական և հաշվապահական ծառայությունների, ինչպես նաև ծրագրային ապահովման պահանջները բավարարելու համար (Աղյուսակ 20):

Աղյուսակ 20. SSԿ-ների կողմից պարբերական հիմունքներով գնվող ծառայություններ

Ծառայություն		Տվյալ ծառայությունը գնող SSԿ-ների թվի հարաբերությունը SSԿ-ների ընդհանուր թվին տոկոսային արտահայտությամբ
1	Իրավաբանական	32.7
2	Հաշվապահական	9.6
3	Ծրագրային ապահովման	13.5

Հետազոտության արդյունքները փաստում են, որ SS ոլորտին բնորոշ է նաև կազմակերպություններից աշխատողների արտահոսքի բարձր մակարդակը: Հարցմանը մասնակցած գրեթե ամեն 2-րդ SSԿ-ում նախորդ տարվա ընթացքում աշխատողների արտահոսք է նկատվել, որը մեկ կազմակերպության հաշվով միջինում կազմել է 3.3 մարդ:

SSԿ-ներն իրենց անձնակազմերի համալրման համար կիրառում են ինչպես պաշտոնական մրցույթների հայտարարման, այնպես էլ ծանոթություններով և անձնական շփումներով աշխատակիցներ հավաքագրելու միջոցներ: Առաջին միջոցին դիմել է հարցմանը մասնակցած SSԿ-ների 65.4 տոկոսը, իսկ երկրորդին՝ 42.3 տոկոսը: Հարկ է նշել նաև, որ ԲՈՒՀ-երի ուսանողների շրջանում կատարվող ընտրությունը որպես աշխատակիցների հավաքագրման եղանակ բավականին տարածված է և արդյունավետ է գործում SS ոլորտում: Ընտրության այդ եղանակին դիմել են SSԿ-ների 21 տոկոսը:

SSԿ-ներում ներգրավված աշխատուժի սեռատարիքային կազմի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ ներգրավված աշխատողները բավականին երիտասարդ են. աշխատողների միջին տարիքը 29 տարեկան է: Մյուս կողմից, տղամարդկանց թիվը մոտ 2.5 կես անգամ գերազանցում է կանանց թվին. աշխատողների 71.2 տոկոսը տղամարդիկ են, իսկ 32.8 տոկոսը՝ կանայք:

Խնդիրները. նկատառումներ և լուծման առաջարկներ

Խնդիր 2.2. Մասնագիտական աշխատանքային ռեսուրսներ հայթհայթելու դժվարությունը.

Նկատառումներ.

Ակնհայտ է, որ SS ոլորտի զարգացման կարևորագույն խոչընդոտներից է հանդիսանում որակյալ աշխատուժի սակավությունը: Վերջինիս մեջ իր ազդեցությունն ունի ընդհանրապես հանրապետությունում ինժեներատեխնիկական, աշխատունակ տարիքային խմբի մարդկային ռեսուրսների սակավությունը: Այսպիսով, խնդիր է առաջանում կիրառել ռեսուրսների ճիշտ տեղաբաշխման և կառավարման մեթոդներ, որը թույլ կտա բարձրացնել ձեռնարկությունների արդյունավետությունը: Համարվում է, որ դրա լավագույն ձևերից կլինի CMMI որակի վերահսկման համակարգերի համատարած ներդրումը (դրանք գրեթե բացակայում են ՀՀ ՏՏԿ-ներում՝ առաջին անգամ ներկայացված լինելով պրոֆեսիոնալ հանրությանը միայն 2004թ-ին):

Փորձագետները սուր և խիստ արդիական համարելով SS ոլորտում անհրաժեշտ որակյալ մասնագետներ ունենալու խնդիրը, միաժամանակ նշել են տեղական ԲՈՒՀ-երի անկարողությունն այդ խնդրի լուծման համար: Խնդրի լուծման ուղղությամբ կարևոր քայլեր են համարվում խոշոր ՏՏԿ-ների (օր.՝ Լայքոս, Սինոպսիս), միջազգային կազմակերպությունների, ՁԻՀ-ի ու խոշոր ԲՈՒՀ-երի (ԵՊՀ, ԵՊՃՀ) իրականացրած համատեղ կրթական ծրագրերը: Ընդգծվում է, որ հարկավոր է նոր ձևեր գտնել զարգացնելու համագործակցությունը ԲՈՒՀ-երի, գիտահետազոտական հիմնարկների և ՏՏԿ-ների միջև: Նշվում է, որ կարիք կա այդ ուղղությամբ ընթացող զարգացումներին աջակցումը և դրա համակարգումը պետության կողմից:

Առաջարկություններ

- 1) Ուսուցման ու վերապատրաստման հարցերում շահագրգիռ կողմերին ոչ միշտ կարող է հարմար լինել համատեղ ծրագրերի համար ընտրել նոր կառույց ստեղծելու ձևը: Նպատակահարմար է նրանց առաջարկել մի քանի հնարավորություններ, մասնավորապես «առանց իրավաբանական անձ ձևավորելու համատեղ գործունեություն իրականացնելու» մոդելը (համատեղ գործունեության պայմանագիր. ՀԳՊ): Դա հարմար է ինչպես իրավական, այնպես էլ հաշվապահական ու հարկային նկատառումներով: Առաջարկվում է ստեղծել ՀԳՊ տիպային պայմանագիր՝ հարմարեցված ԲՈՒՀ-ի, ՏՏԿ և այլ

կառույցների միջև ՏՏ ոլորտում համատեղ գիտա-կրթական ծրագրեր իրականացնելու համար:

2) Դեռևս 2001 թվականի 18-ին ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացած «ՀՀ ինֆորմացիոն (տեղեկատվական) տեխնոլոգիաների արդյունաբերության զարգացման հայեցակարգի մասին» նյութի 4-րդ բաժնում նախատեսվում էր ոլորտի համար նախատեսել համապատասխան փոփոխություններ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում: Նպատակահարմար կլինի, օգտագործելով այդ ձեռք բերված «պայմանավորվածությունը», պլատֆորմը, մշակել ու ներկայացնել «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին նախագիծ՝ նախատեսելով հարկվող շահույթի նվազեցում այն ծախսումների չափով, որ ՏՏԿ-ները կկատարեն կադրերի պատրաստման և վերապատրաստման համար, ինչպես նաև ԲՈՒՀ-երի և գիտահետազոտական հիմնարկների հետ համատեղ ծրագրերում, ներառյալ, սակայն չբավարարվելով միայն ՀԳՊ-ով:

3) Մինչ այդ, որպես առաջնային քայլ, որ կարող է իրականացնել հենց ՀՀ կառավարությունը, առաջարկվում է փոփոխություններ մտցնել ՀՀ կառավարության 1998թ. նոյեմբերի 27-ի «Հարկման նպատակով համախառն եկամտից իրականացվող նվազեցումների որոշ տեսակների առավելագույն թույլատրելի չափեր սահմանելու մասին» թիվ 753 որոշման մեջ՝ հանելով ՏՏԿ-ների համար հարկային նպատակով սահմանափակումները՝ աշխատակիցներին արտասահման՝ կադրերի պատրաստման կամ վերապատրաստման, կամ գործուղման ուղարկելու, արտասահմանում գովազդի, մարքեթինգային կամ ներկայացուցչական ծախսումներ կատարելու կապակցությամբ:

ՄԱՍ III. ՆԵՐՄՈՒԾՈՒՄ ԵՎ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ, ՀԱՐԿԵՐ

III.1. Ապրանքների ներմուծում, արտադրանքի և ծառայությունների արտահանում

Ապրանքների ներմուծում.

ՏՏԿ-ների կեսից ավելին (51.9 տոկոսը) զբաղվում է ապրանքների ներմուծմամբ ինչպես սեփական օգտագործման, այնպես էլ հետագա վաճառքի նպատակով: Աղյուսակ 21-ը պատկերացում է տալիս ՏՏԿ-ների կողմից ներկրվող ապրանքների, ինչպես նաև դրանց ներմուծման նպատակների վերաբերյալ:

Աղյուսակ 21. ՏՏԿ-ների կողմից ներկրվող ապրանքներ

Ապրանքներ սեփական օգտագործման համար		Տոկոս*	Ապրանքներ վաճառքի համար	Տոկոս*
1	Տպիչ սարք, պատճենահանման սարք, հեռապատճեն, տեսաձրիչ	11.1	Տպիչ սարք, պատճենահանման սարք, հեռապատճեն, տեսաձրիչ	14.8
2	Համակարգչային սարքեր ու սարքավորումներ (տեսասարքեր, մշակիչներ, այլ պիտույքներ)	40.7	Համակարգչային տեխնիկա (տեսասարքեր, մշակիչներ, այլ պիտույքներ)	18.5
3	Պահեստամասեր	22.2	Պահեստամասեր	14.8
4	Հեռահաղորդակցության սարքեր, պահեստամասեր, կապի միջոցներ	11.1	Հեռահաղորդակցության սարքեր, պահեստամասեր, կապի միջոցներ	3.7
5	Արբանյակային համակարգեր, կայաններ	7.4	Արբանյակային համակարգեր, կայաններ	7.4
6	Մալուխներ, նյութեր	7.4	Մալուխներ, նյութեր	7.4
7	Սպասարկիչներ	7.4	Սպասարկիչներ	3.7
8	Մոդեմ	11.7	Մոդեմ	3.7
9	Դյուրակիր համակարգիչներ	3.7	Դյուրակիր համակարգիչներ	3.7
10	Ինտերնետային կանխագրով հեռախոսասարքեր	3.7	Ինտերնետային կանխագրով հեռախոսասարքեր	3.7
11	Հսկիչ համակարգիչներ	3.7	Հսկիչ համակարգիչներ	3.7
12	Ծրագրակազմեր	3.7	Ծրագրակազմեր	7.4
13	Ռ-ադիո սարքեր	3.7	Ռ-ադիո սարքեր	3.7
14	Մարշրուտիզատոր	7.4	Մարշրուտիզատոր	3.7
15	Հատուկ հեռախոսներ	3.7	Ցանցային սարքավորումներ	3.7

Ապրանքներ սեփական օգտագործման համար		Տոկոս*	Ապրանքներ վաճառքի համար	Տոկոս*
16	Կուտակիչ սարքեր	3.7	Կուտակիչ սարքեր	3.7
17	Ռ-ադիոդետալներ	3.7	Ռ-ադիոմասեր	3.7
18	Գրականություն	3.7	Գրականություն	3.7
19	Ռ-ադիոմոդեմներ	3.7	Թվային կողպեքներ	3.7
20	dag քարտեր	3.7	Պլաստիկ քարտեր	3.7
21	Ֆոտոսարքեր	3.7	Հաշվիչ սարքեր հեռահաղորդակցման համար	3.7
22	Հսկիչ սարքեր	3.7		
23	Տեսամագնիտաֆոններ	3.7		
24	Տեսամոնտաժի շղթագիծ-սալիկներ	3.7		
25	Գերիզոր սպասարկիչներ	3.7		

*Տվյալ ապրանքը ներմուծող ՏՏԿ-ների թվի և ներկրմամբ զբաղվող ՏՏԿ-ների ընդհանուր թվի հարաբերություն՝ տոկոսով:

Համակարգիչներն ու դրանց պարագաները ներկրվող հիմնական ապրանքներն են, ընդ որում՝ ՏՏԿ-ները դրանք ներկրում են ավելի շուտ սեփական օգտագործման, քան վաճառքի համար: Ներկրվող ապրանքների մեջ հաջորդ մեծ մաս ունեցողներն են կազմակերպչական (գրասենյակային) սարքերն ու բազմաբնույթ պահեստամասերը: Աղյուսակ 21-ում նշված ապրանքները, նախորդ տարվա տվյալներով, մեկ կազմակերպության հաշվով ներկրվել են տարեկան միջինում 37.3 անգամ (նվազագույնը 1 անգամ, առավելագույնը՝ 365 անգամ):

Մաքսային վարչարարությանը վերաբերող տեղեկությունները ցույց են տալիս, որ ներմուծման մեջ ներգրավված ՏՏԿ-ների գերակշիռ մասը (81.4 տոկոսը) ապրանքների մաքսազերծման ընթացքում կարողանում են վճարելով հասանելիք մաքսային վճարները, ինքնուրույնաբար հայտարարագրել և ներմուծել ապրանքը: Մեկ կազմակերպության հաշվով այդ ծախսերը տարեկան կտրվածքով միջնաթվով ներկայացված կազմել են 670,000.0 ՀՀԴ, ինչը համաձայն հետազոտության մասնակիցների հաղորդած տվյալների, այդ ՏՏԿ-ների տարեկան ընդհանուր ծախսերի մոտ 4.0 տոկոսն է (Աղյուսակ 22):

SSԿ-ների համապատասխանաբար 18.5 տոկոսը և 11.1 տոկոսն ունեցել են դժվարություններ ինքնահայտարարագրման հարցում, կամ թույլ են տվել սխալներ, կրելով լրացուցիչ ծախսեր տուգանքների և այլ տեսակի վճարների տեսքով:

Աղյուսակ 22. Մաքսագերծման հետ կապված ծախսեր, միջինաթվերով ներկայացված

Պաշտոնական մաքսային վճարներ		Այլ ծախսեր		Տուգանք	
Գումար	տոկոս SSԿ-ի տարեկան ընդհանուր ծախսերի	Գումար	տոկոս SSԿ-ի տարեկան ընդհանուր ծախսերի	Գումար	տոկոս SSԿ-ի տարեկան ընդհանուր ծախսերի
670,000.0	4.0	200,000.0	5.0	100,000.0	0.5

Ինչպես ցույց է տալիս հետազոտությունը, SSԿ-ների գրեթե կեսի (48.1 տոկոսի) ներմուծած ապրանքներից սահմանին գանձվում է մաքսատուրք: SSԿ-ների 37 տոկոսի մոտ ապրանքների ներմուծման ժամանակ մաքսատուրք վճարելու երևույթը մասնակի բնույթ ունի: Ներմուծվող ապրանքները Հայաստանի սահման հասնելուց հետո մինչև դրանց մաքսագերծման ավարտի ժամանակահատվածը միջինում կազմում է 4.8 օր (ամենաերկար դեպքը 21 օր է եղել):

Ավելացված արժեքի հարկի կապակցությամբ հարկ է նշել, որ ներմուծման գործարքներ իրականացնող SSԿ-ների 73.1 տոկոսը ներմուծված բոլոր ապրանքների համար ենթակա է սահմանի վրա ԱԱՀ-ով հարկման: Գնահատելով սահմանի վրա ԱԱՀ գանձման գործընթացը՝ SSԿ-ները հիմնականում չեն խրախուսում այդ գործառույթը (Աղյուսակ 23): Հատկապես նշվում է սահմանի վրա ԱԱՀ-ի գանձման հետևանքով առաջացող շրջանառու միջոցների սղության մասին: Այլ պարագայում SSԿ-ները պատրաստ են «տնտեսվող» շրջանառու միջոցներն ուղղել նոր տեխնոլոգիաների ձեռքբերմանը (հարցվածների 50 տոկոսը), նոր սարքերի ձեռքբերմանը (հարցվածների 55.6 տոկոսը), արտադրության ընդլայնմանը (հարցվածների 22.3 տոկոսը), աշխատակազմի ընդլայնմանը (հարցվածների 11.1 տոկոսը), աշխատավարձերի բարձրացմանը (հարցվածների 11.1 տոկոսը) և այլ նպատակների:

Աղյուսակ 23. SSԿ-ների վերաբերմունքը սահմանի վրա ԱԱՀ-ի գանձման նկատմամբ

Վերաբերմունք		Տոկոս՝ ներկրմամբ զբաղվող SSԿ- ների ընդհանուր թվից
1	Այն ստեղծում է բարդություններ շրջանառու միջոցների հետ կապված	66.7
2	Այն բերում է ժամանակի կորստի	37.0
3	Այն չի խթանում նոր ապրանքների ներկրումը	7.4
4	Դժվարացել են պատասխանել	18.5

Արտադրանքի (և ծառայությունների) արտահանում

SSԿ-ների ուղիղ կեսը արտահանում է արտադրանք կամ ծառայություններ, ընդ որում՝ արտահանում են հիմնականում համակարգչային ծրագրեր և ցանցակալքեր (Աղյուսակ 24): Արտահանվող մյուս արտադրանքներն ու ծառայությունները փոքր տոկոս են կազմում:

Աղյուսակ 24. Արտահանվող արտադրանք (ծառայություններ)

Արտահանվող արտադրանք (ծառայություններ)	Տոկոս*
Ցանցակալքեր	23.1
Համակարգչային ծրագրեր և ծրագրակազմ	61.5
Գովազդային հոլովակներ	7.7
Համակարգչային գրաֆիկա	7.7
Համակարգչային տեխնիկա (դեսպանատներ և այլն)	3.8
Համակարգչային տեխնիկայի սպասարկում	7.7
Խորհրդատվական ծառայություններ	3.8
SS ծառայություններ և խորհրդատվություն	7.7
Համակարգչային ծրագրակազմ	3.8

* Տվյալ արտադրանքն արտահանող SSԿ-ների թվի և արտահանմամբ զբաղվող SSԿ-ների ընդհանուր թվի հարաբերություն՝ տոկոսային արտահայտությամբ:

Հաշվի առնելով արտահանվող արտադրանքների ու ծառայությունների բնույթը՝ բնական է, որ արտահանումը կատարվում է առավելապես ինտերնետի միջոցով (արտահանող SSԿ-ների 88.5 տոկոսը), իսկ ամենաքիչ կիրառվող միջոցը

փոխադրամիջոցներով արտահանումն է: Ի լրումն ինտերնետի, ՏՏԿ-ներն արտադրանքներ (ծառայություններ) են արտահանում փոստով կամ ծանոթների ու գործուղվող աշխատակիցների միջոցով (Աղյուսակ 25):

Աղյուսակ 25. ՏՏ արտադրանքների և ծառայությունների արտահանման եղանակներ

	Արտահանման եղանակ	Տոկոս*
1	Փոխադրամիջոցներով	3.8
2	Ինտերնետի միջոցով	88.5
3	Փոստով	11.5
4	Ծանոթ մարդկանց կամ գործուղվող աշխատակիցների միջոցով	15.4

*Արտահանման տվյալ եղանակն օգտագործող ՏՏԿ-ների թվի և արտահանմամբ զբաղվող ՏՏԿ-ների ընդհանուր թվի հարաբերություն՝ տոկոսային արտահայտությամբ:

Տարվա ընթացքում ՏՏԿ-ների իրականացրած արտահանման գործարքների հաճախականությունը մեկ կազմակերպության հաշվով միջինում կազմում է 22.2 անգամ (նվազագույնը 1 անգամ, առավելագույնը՝ 110 անգամ): Արտահանման միտումների մասին հավաքված տվյալները ցույց են տալիս, որ նախորդ երեք տարիների ընթացքում արտահանող ՏՏԿ-ների 57.6 տոկոսի մոտ արձանագրվել է արտահանման ծավալների աճ, ընդամենը 3.8 տոկոսի մոտ՝ նվազում, իսկ մնացածի մոտ վիճակն էականորեն չի փոփոխվել: Նշված ժամանակահատվածում արտահանման աճ ունեցած ՏՏԿ-ների մոտ աճը միջինում կազմել է 65.3 տոկոս, իսկ նվազում ունեցածների մոտ նվազումը՝ 60 տոկոս:

Ելնելով արտահանվող արտադրանքների և ծառայությունների, ինչպես նաև դրանց արտահանման բնույթից՝ արտահանող ՏՏԿ-ների կեսից ավելին (53.8 տոկոսը) արտահանման հետ կապված ծախսեր չի կատարում, իսկ ծախսեր կատարած ՏՏԿ-ների արտահանման հետ կապված ծախսերը միջնաթվով արտահայտված կազմել են 322,500.0 ՀՀ դրամ: Կատարվող ծախսերը կապված են հիմնականում ինտերնետային կապի համար կատարվող վճարումների հետ:

Արտահանման գործընթացում, ԱԱՀ-ի գերավճարի վերադարձման հարցի հետ առնչվել է ՏՏԿ-ների ոչ զգալի մասը (15.4 տոկոսը): Վերջիններիս 62.5 տոկոսը դիմում է ներկայացրել գերավճարները ետ ստանալու համար, իսկ մնացածը չեն դիմել՝ բացատրելով դա դիմելուց հետո վերադարձման համար գործառույթների և դրանց արդյունքների անորոշություններով: ԱԱՀ-ի գերավճարները ետ ստանալու համար

դիմում ներկայացրածները, ինչպես վկայում են հարցման արդյունքները, չեն կատարել դրա հետ կապված ծախսեր³⁰: Գերավճարների վերադարձման գործընթացը տևել է միջինում 32 օր, և վերադարձման ենթակա գումարներն ամբողջությամբ հաշվանցվել են կազմակերպություններին, առանց դատական միջամտության:

Արտադրանքների և ծառայությունների բնույթի, ինչպես նաև դրանց արտահանման եղանակների պատճառով արտահանմամբ զբաղվող ՏՏԿ-ների մեծ մասն ընդհանրապես չեն առնչվում արտահանման մաքսային ընթացակարգերի հետ: Հարցումից ստացած տվյալների համաձայն, արտահանման ընթացակարգի որևէ առանձին տարր չի բնութագրվում որպես խնդրահարույց կամ դժվարին:

Նետաքրքիր է նշել, որ լիովին հակառակ պատկեր է տիրում ներմուծման ընթացակարգերին վերաբերող գնահատականներում. ներմուծման ընթացակարգի բոլոր տարրերը խնդրահարույց են ՏՏԿ-ների համար (Աղյուսակ 26):

Աղյուսակ 26. Ներմուծման և արտահանման ընթացակարգերի գնահատումների համադրում

Ընթացակարգ	Ներմուծում	Արտահանում
	1-խնդիր չէ, 4-մեծ խնդիր է	1-խնդիր չէ, 4-մեծ խնդիր է
1 Հաշիվ-ապրանքագրին ներկայացվող պահանջներ	2.44	1.0
2 Մաքսային ծածկագրի որոշում	2.48	0.92
3 Մաքսային արժեքի որոշում	2.96	0.92

Փորձագիտական հարցազրույցների ընթացքում ևս որպես ամենախնդրահարույց են համարվել ԱԱՀ-ի սահմանի վրա գանձումը ու դրա հետ մեկտեղ՝ ԱԱՀ-ի գերավճարների ետ ստանալու դժվարությունները, մաքսային պաշտոնյաների կողմից օրենքների ու կանոնակարգերի «յուրովի» մեկնաբանությունները, կողմնորոշիչ գներ կիրառելու գործելակերպը: Մասնավորապես, որպես ոլորտի առանձնահատկություն նշվեց, որ երբեմն տեխնոլոգիական արագ առաջընթացի հետևանքով միջազգային շուկայում որևէ ապրանքի գինը նշանակալիորեն ընկնում է, սակայն մաքսային կոմիտեի աշխատակիցները դեռևս երկար ժամանակ շարունակում են «նախկին» կողմնորոշիչ գներով որոշել ներմուծվող ապրանքի մաքսային արժեքը: Դա իր հերթին խաթարում է ՏՏ շուկան ու խոչընդոտում նոր տեխնոլոգիաների ներմուծմանը:

³⁰ Ինչպես ակնկալվում էր, ՏՏԿ-ները դժկամությամբ էին պատասխանում իրենց գործունեության դրամական կողմին վերաբերող հարցերին, կամ, ավելի շուտ, ՏՏԿ-ները հակված չէին այդպիսի տեղեկություններ տրամադրելու:

Խնդիրները, նկատառումներ և լուծման առաջարկներ

Խնդիր 3.1. ներմուծման ժամանակ «կողմնորոշիչ գների» կիրառում

Նկատառումներ.

Մաքսային մարմինների պաշտոնյաների կողմից օրենքների ու կանոնակարգերի «յուրովի» մեկնաբանությունների իմաստով առավել խնդրահարույց է դիտարկվել կողմնորոշիչ գներ կիրառելու գործելակերպը: Դա տեղի է ունենում, երբ մաքսագերման համար թերի է համարվում ներմուծվող ապրանքի հաշիվ ապրանքագիրը (invoice-ը): Փաստորեն, ՏՏԿ-ներն առավելապես տուժում են, երբ ման պայմաններում հիմք չեն ընդունվում գործարքի գները: Ներմուծողների համար պարզ չէ, թե ինչպես են դրանք որոշվում և կա՞ն արդյոք դրանց որոշելու հստակ և օբյեկտիվ մեխանիզմներ՝ սահմանված ՀՀ իրավական ակտերով: Կողմնորոշիչ գների մեխանիզմի կիրառումը խոչընդոտում է ՏՏԿ-ների զարգացմանը նաև այն պատճառով, որ այն բավականին ճկուն չէ, որպեսզի կարողանա հետևել ՏՏ ապրանքների, սարքերի, սարքավորումների շուկայում տեղի ունեցող հաճախակի փոփոխություններին: Այդ իսկ պատճառով տվյալ մեխանիզմի կիրառումը խաթարում է ՏՏ շուկան ու խոչընդոտում նոր տեխնոլոգիաների ներմուծմանը:

Նշենք, որ ՀՀ կառավարության 12 մայիսի 2005թ. «2005-2008 թվականների հարկային և մաքսային բարեփոխումների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 756-Ն որոշմամբ ՀՀ կառավարությունը նախատեսում է գործարքի գնի մեթոդով մաքսային արժեքի որոշման տեսակարար կշիռը մեծացնել 5 տոկոսով:

Իրականում արժե ուշադրություն դարձնել նաև հետևյալի վրա.

- մաքսային մարմնի աշխատակիցները ունեն իրենց հիմնավորումները, այդ թվում՝ մաքսային օրենսգրքով ամրապնդված, թե ինչու չեն հիմք ընդունում գործարքի համար դուրս գրված հաշիվ-ապրանքագիրը: Նշենք, որ մի քանի դեպքերում այդպիսի «ադմինիստրատիվ գնահատման» անհրաժեշտությունը գալիս է չարաշահումների և մաքսային վճարները արհեստականորեն փոքրացնելու դեմ պայքարից:
- եթե զուգահեռ տանելու լինենք ՀՀ հարկային օրենսդրության հետ, ապա կտեսնենք, որ ա) վերջինումս նմանատիպ «ադմինիստրատիվ գնահատականի» կարգը սահմանված է առանձին ՀՀ կառավարության որոշմամբ, բ) հարկային նպատակով հիմք ընդունվող՝ հաշիվ-ապրանքագրի

մեջ ներառվող վավերապայմանների թվարկման վերաբերյալ ՀՀ կառավարության թիվ 525 որոշումը³¹ թույլ է տալիս դրանց վերաբերվել «ըստ էության», այլ ոչ թե ուշադրություն դարձնել ձևական բացթողումներին,

- հաշիվ ապրանքագրերը, թերի համարվելով ՀՀ օրենսդրության պահանջներից, կարող են ամբողջական լինել այդ հաշիվ ապրանքագրերը (invoice-ները) տրամադրող երկրի օրենսդրության տեսանկյունից: Հաշվի առնենք նաև այն, որ հաճախ գործ ենք ունենում այնպիսի խոշոր համաշխարհային ընկերությունների հետ, որոնք ունեն ամբողջ աշխարհով մեկ ապրանքների մատակարարման իրենց կայացած սխեմաները, դուրս գրվող հաշվարկային փաստաթղթերի ֆորմատները, և դժվար թե հայաստանյան գնորդների համար նրանք այդ ձևավորված մոտեցումների մեջ կատարեն փոփոխություններ:

Առաջարկություններ.

- 1) ներդնել ու ընդլայնել էլեկտրոնային հաշիվ ապրանքագրերի կիրառման մեխանիզմը՝ ՀՀ ներմուծվող ապրանքների մաքսագերծման ժամանակ գործարքի գնի մեթոդի ավելի լայն կիրառում ապահովելու համար,

Ֆինլանդիայում և Շվեդիայում գործում է ֆինանսական էլեկտրոնային հաշիվ ապրանքագրերի ծառայությունը: Վերջինիս միջոցով հաճախորդները կարող են ստանալ և ուղարկել հաշիվ ապրանքագրերը էլեկտրոնային տեսքով: Այսպիսով, գործարարները կարող են այլևս չկիրառել թղթային հաշիվ ապրանքագրեր, որը նշանակալիորեն կկրճատի հաշիվ ապրանքագրերի հետ կապված կազմակերպչական ծախսերը: Օգտագործելով հաշիվ ապրանքագրային ծառայությունը՝ հնարավոր է կրճատել փոստային ծախսերը, ինչպես նաև կրճատել սխալների և չներկայացված հաշիվների քանակը:

Մեքսիկայում դեռևս 2000թ.-ին ընդունվել է էլեկտրոնային առևտրի մասին օրենք, որին հաջորդել են մի շարք լրացուցիչ օրենքների առաջարկություններ: Վերջիններիս նպատակն է եղել ապահովել այդ օրենքի փոխգործելիությունը այլ թվային համակարգերի հետ: Այդ օրենքներից ամենակարևոր համարվողն էր էլեկտրոնային հաշիվ ապրանքագրերի մասին օրենքը, որը հանելու էր կոմերցիոն գործառնությունների ժամանակ փաստաթղթային հաշիվ ապրանքագրերի կիրառման պահանջը:

³¹ Տես ՀՀՊՏ 1998/21 (54), 10.09.98

2) պարզեցնել ՀՀ մաքսային օրենսդրության պահանջները հաշիվ ապրանքագրերի նկատմամբ: Այսինքն, եթե հաշիվ ապրանքագրերի պահանջները ապահովված են «ըստ էության», ապա կիրառել գործարքի գնի մեթոդը: Այդ նպատակով հրապարակել մանրամասն պաշտոնական պարզաբանում՝ SS ոլորտի համար տիպային դեպքերի օրինակներով,

3) գիտակցելով, որ կողմնորոշիչ գները դեռևս լայն կիրառելի են մաքսավորների կողմից, անհրաժեշտ է մշակել գների որոշման ճկուն և օբյեկտիվ մեխանիզմներ, մասնավորապես.

3.1) կողմնորոշիչ գների հաճախակի վերանայում,

3.2) կողմնորոշիչ գների որոշում օբյեկտիվ և հանրամատչելի, և որ ամենակարևորն է, մասնագիտացված աղբյուրներից (օրինակ, բորսաներ, հիմնական մատակարարման վայրերի կատալոգներ և այլն),

3.3) ՀՀ կառավարության վերը նշված 12 մայիսի 2005թ. թիվ 756-Ն որոշման մեջ նախատեսել, որ SS ոլորտի համար ներմուծվող ապրանքների համար (ըստ կողերի) այդ ցուցանիշը մեծացվի ոչ թե 5 այլ 25 տոկոսով:

Խնդիր 3.2. ներմուծման ժամանակ ավելացված արժեքի հարկի գանձումը սահմանին.

Նկատառումներ.

Դժվար է միանշանակորեն գնահատել դրա ազդեցությունը SS ոլորտի զարգացման համար: SSԿ-ների մեծ մասը բողոքում են շրջանառու միջոցների օտարումից, ժամանակի ծախսումից: Նաև հնչում է կարծիք, որ սահմանին գանձումների հետ գործ ունենալը երբեմն առաջացնում է լրացուցիչ օրերով պահուստավորման կարիք կամ մաքսային գործակալ վարձելու կարիք, որը նորից հանգեցնում է ծախսերի: Ասվում է, որ դրա բացակայության դեպքում կստեղծվեր հնարավորություն ներկրել նոր տեխնոլոգիաներ, նոր սարքավորումներ և կստեղծվեր հնարավորություն էլ ավելի ընդլայնելու SS ոլորտը:

Միաժամանակ, հարցման մասնակիցների մոտ 25 տոկոսն այն չի համարել խնդիր, իսկ փորձագետների մեջ նույնիսկ հակառակ կարծիք կար: Հայտնի է, որ շատ երկրներ որպես ֆիսկալ-բյուջետային քաղաքականության գործիք, օգտագործում են սահմանին ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) գանձումը: Նաև պետք է հաշվի առնել, որ սահմանին ԱԱՀ չվճարելը չի նշանակում ընդհանրապես չվճարել, հատկապես եթե հաշվի առնենք այն, որ արտահանմամբ զբաղվում են SSԿ-րի միայն կեսը: Սահմանին

ԱԱՀ վճարելը ծանր կլինի արտահանողների համար, եթե նրանք էական դժվարություններ ունենան սահմանին և երկրի ներսում կատարած գնումների համար հետագայում ԱԱՀ-ի առաջացող գերավճարը ետ ստանալու հարցում: Հետագոտությունը չի պատասխանում այն հարցին, թե արտադրանք և ծառայություն արտահանողների որ մասն ունի այս՝ ներմուծման հետ կապված խնդիրը: Այդ իմաստով փաստորեն իրականում շրջանառու միջոցների «սառեցման» գործոնն այնքան էլ ազդեցիկ չէ³², իսկ խնդրի սրացումը հիմնականում կկապվի ԱԱՀ գերավճարների ադսորբցիայի դժվարության հետ: Նկատենք նաև, որ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 25 հոդվածը և «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 33 հոդվածը, դրանց կիրառումն ապահովող այլ նորմատիվ ակտերն ավելի պարզ գործընթացներ են նախատեսում, երբ ԱԱՀ գերավճարն առաջացել է փաստացի բանկային վճարումների հետևանքով և երբ կազմակերպությունը համաձայն է այդ գումարը հաշվանցել այլ հարկատեսակների գծով հարկային պարտավորությունների հաշվին, այլ ոչ թե ետ ստանալ:

Հայաստանում ԱԱՀ-ն սահմանին գանձելու կարգը սկսեց միանշանակորեն կիրառվել 1997 թվականից: Ներկայումս, հատկապես 2005 թվականի օրենսդրական փոփոխություններից հետո ստեղծվել է մեխանիզմ սահմանին հաշվեգրվող ԱԱՀ գումարը հետագա մեկ կամ երկու տարվա ընթացքում վճարելու համար³³: Այս պահին այդ արտոնությունից օգտվող ապրանքատեսակների ցանկում SS ոլորտի համար բնորոշ սարքավորումներ կամ պահեստամասեր ներառված չեն:

Առաջարկություններ.

1) ավելի խորացնել հետագոտությամբ ստացված տվյալները՝ լրացնելով դրանք վիճակագրական և այլ փորձագիտական հասցեական տվյալներով, նպատակ ունենալով հստակ պատկերացնել, թե SS ոլորտի շահերը որոնք են այդ հարցում: Անհրաժեշտության դեպքում դիմել ՀՀ կառավարությանը՝ հիմնավորված ձևով որոշակի «զիջումներ» ստանալու հիմնավորմամբ: Դա կարող է լինել երկու ուղղությամբ.

1.1) մաքսատուրքի, որն ավելի ազդեցիկ կլինի: Դա ավտոմատորեն կազդի նաև ԱԱՀ այս բարձրացված հարցի վրա, քանի որ համաձայն օրենքի ԱԱՀ

³² Այն ուղղակի ազդեցություն կունենար, եթե խոսք գնար ներմուծման ժամանակ մաքսատուրք չվճարելու մասին: Մաքսատուրքը, ի տարբերություն անուղղակի հարկերի, հանդիսանում է ձեռքբերման արժեքի մաս, որպես չփոխհատուցվող պարտադիր վճար:

³³ Տես «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6.1. հոդված:

հարկվող շրջանառության բաղադրատարրերից մեկը ներմուծվող ապրանքների համար հենց մաքսատուրքի գումարն է,

1.2) ավելացված արժեքի հարկի: Ամբողջովին կամ, որ ավելի իրատեսական է, մասնակի, լոկ ընտրված սպեցիֆիկ սարքավորումների խմբի համար: Մասնակի արտոնությունը կարող է արտահայտվել, մասնավորապես «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6.1. հոդվածի ԱՏԳ ԱԱ³⁴ ծածկագրերի մեջ ՏՏ ոլորտի համար կարևոր սարքավորումների կողերը լրացնելու միջոցով: Ավելի մեծ արտոնություն կարելի է համարել, համապատասխան լրացուցիչ հիմնավորումների պարագայում, հետևյալը.

1.2.1) 6.1. հոդվածի արտոնությունը կիրառել լրիվ հնարավորությամբ, անկախ ներմուծվող ապրանքների գումարային չափից: Հիշենք, թե ինչպես է սովորաբար աշխատում 6.1. հոդվածը. ներմուծման դեպքում սահմանին հաշվեգրված «Ա» չափով ԱԱՀ-ն կարող է չգանձվել և թողնվել մեկ տարվա ընթացքում գանձելու: Ընդ որում, եթե համապատասխան ծածկագրով ներմուծվող ապրանքների գումարը գերազանցում է 70 մլն. դրամը, ապա ԱԱՀ վճարման հետաձգումը երկու տարի է, այլ ոչ թե մեկ: Եթե այդ հետաձգման թույլատրված ժամկետի ընթացքում կազմակերպությունը ունենում է հաշվարկային «Ա»-ից ավելի հաշվեգրված և/կամ վճարված ԱԱՀ (այսինքն՝ երկրի ներսի կրեդիտ կամ էլ արտահանումից հաշվարկային ձևով հաշվարկված մեծություն), ապա նա այլևս կարիք չունի վճարել մաքսային սահմանին հետաձգված հարկը: Առաջարկի իմաստը հետևյալն է. ՏՏ ոլորտի կազմակերպությունների համար թույլ տրվի մաքսային սահմանին ԱԱՀ-ն հետաձգել միանգամից երկու տարով՝ անկախ ներմուծվող ապրանքների գումարային մեծությունից: Լրացուցիչ հիմնավորման պահանջը այն է, թե արդյոք ՏՏԿ-ներն ունեն դրա խիստ անհրաժեշտությունը: Կարելի է հիմք ընդունել (հետազոտությամբ ստացված և այլ) մի քանի ցուցանիշներ. ներմուծման մեկ գործարքի չափը, ներմուծումով զբաղվող և այսպիսի խնդիր ունեցող ՏՏԿ-ների քանակը, դրանց համար ֆինանսական հոսքերի համար կարևոր շեմային մակարդակը և այլն:

³⁴ «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» դասակարգչի հապավումն է

1.2.2) ԱԱՀ չզանձում նախատեսել ընդհանրապես: Դրա եղանակը կլինի ՏՏ ոլորտի համար կրիտիկական նշանակություն ունեցող ապրանքների ծածկագրերը մտցնել ոչ թե օրենքի 6.1. հոդվածում, այլ մի այլ օրենքում, որը վերաբերում է սահմանին ԱԱՀ չզանձման դեպքերին. ՀՀ օրենք «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ 0 տոկոս մաքսատուրքի դրույքաչափ ունեցող և ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնցից ավելացված արժեքի հարկը մաքսային մարմինների կողմից չի հաշվարկվում և գանձվում»:

2) ՏՏ ոլորտի համար ԱԱՀ-ի սահմանին զանձման հարցի լուծման վերաբերյալ ավելի բարենպաստ ռեժիմ հնարավոր է կիրառել ներմուծվող սարքավորման՝ ֆինանսական լիզինգի ձևով ձեռք բերման միջոցով: Նպատակահարմար է ոլորտի ձեռնարկությունների համար բրոշյուրի հրատարակման միջոցով նկարագրել այդպիսի հնարավորությունը: Վերջինս ունի նաև հարկային ավելի բարենպաստ հետևանքներ:

Խնդիր 3.3. արտահանման ժամանակ ԱԱՀ գերավճարների ետ ստացումը³⁵

Նկատառումներ.

Արտահանման մեջ 88.5 տոկոսը ծառայություններ են, հետևաբար թերևս իմաստ ունի արտահանման վերլուծության ժամանակ առանձնացնել արտադրանքը և ծառայությունները: Ծառայությունների արտահանումն ունի էական առանձնահատկություններ: Ծառայությունների արտահանում ասելով պետք է դրա տակ դնել այն իմաստը, որ այն ունի երկրի վճարային հաշվեկշռի համար³⁶: Այսինքն՝ դա այն դեպքն է, երբ ստեղծված վիրտուալ նյութը, օրինակ մշակված ցանցակալքը, վաճառվում է ՀՀ ոչ ռեզիդենտի: Ոչ ռեզիդենտ հասկացությունն այն չէ, ինչ օգտագործվում է ուղղակի հարկերին վերաբերող հարկային օրենսդրության մեջ: Հետևաբար և համապատասխանաբար ֆիզիկապես ՀՀ սահմանը հատելով արտահանման դեպքը կիրառելի կլինի միայն արտադրանքի, նյութական արգասիքի համար: Դրա հետ կապված, եթե ապրանքների դեպքում ԱԱՀ վերադարձի համար

³⁵ ԱԱՀ գերավճար առաջանում է ոչ միայն արտահանման ժամանակ ԱԱՀ գրո տոկոս դրույքաչափ կիրառելու հետևանքով: Այլ պատճառներով առաջացող ԱԱՀ գերավճարների հետ կապված վերլուծություն և առաջարկություն տես սույն նյութի 4-րդ բաժնում:

³⁶ Տվյալ վերլուծության շրջանակներից դուրս համարելով չի վերլուծվի «ծառայությունների ներմուծում» հասկացությունը: Սակայն տեղին է նշել, որ ծառայությունների դեպքում հնարավոր չէ կիրառել «ժամանակավոր ներմուծում» և/կամ «ներմուծում վերամշակման համար» մաքսային ռեժիմները, ինչը հնարավոր է անել ՏՏ ոլորտում համակարգչային տեխնիկայի արտադրության համար սարքեր ներմուծելու ժամանակ:

(այսինքն՝ արտահանման այդ գործարքների նկատմամբ Հայաստանում ԱԱՀ զրո տոկոս կիրառելու համար) հստակ հիմք է «արտահանումը թույլատրված է» նշագրումը մաքսային փաստաթղթերի վրա, ապա էլեկտրոնային պրոդուկտների, այսինքն ծառայությունների դեպքում դա հնարավոր չէ և ԱԱՀ զրո տոկոսի կիրառման համար հարկավոր է ունենալ այլ հիմք: Այստեղ ՏՏԿ-ները փորձում են խնդրիքը լուծել երկու եղանակով.

ա) պատվիրատու ոչ ռեզիդենտի հետ կազմում են ծառայությունների «ընդունման-հանձնման» կատարողական ակտ: Դժվարություն է առաջանում, երբ ծառայությունները առ-գիծ են: Հաճախ ՏՏԿ-ն իրականում տարվա ընթացքում կարիք չունի այդպիսի կատարողականի հաշվապահական հաշվառման կամ այլ նպատակով: Փաստորեն արհեստականորեն այդպիսի կատարողականներ պետք է ստեղծվեն՝ ԱԱՀ գումարի ետ ստացման հնարավորության ստեղծման նպատակով³⁷:

բ) էլեկտրոնային պրոդուկտը ֆիզիկապես, որևէ կրիչով, անցկացնում են մաքսային սահմանով, որ պետությունն ինքը մաքսային ձևակերպումների միջոցով ֆիքսի դրա՝ ՀՀ տարածքից արտահանումը: Դա թերևս ճիշտ չէ ընդհանրապես, քանի որ կրիչը ստիպված արժեքավորում են, այն հանգեցնում է կրկնակի վիճակագրական հաշվառման, գործարքի բովանդակությունն ու ձևը չեն համապատասխանում իրար և այլն:

Ջրո տոկոս դրույքաչափով ծառայությունների իրացումը ձևակերպելու՝ վերը նշված տեխնիկական դժվարություններից հետո ՏՏԿ-ները առնչվում են դրա ածանցյալ խնդրի՝ ԱԱՀ գերավճարի ետ ստացման դժվարության հետ: Այդ խնդիրը գոյություն ունի ոչ միայն ՏՏ, այլ բոլոր ոլորտների համար: Դա բացատրվում է ՀՀ պետական բյուջեի դժվարություններով, հարկային մարմինների դժկամությամբ՝ դժվարությամբ հավաքագրված հարկային գումարները «պակասացնելու», վերադարձման համար դիմումների սպասարկման բյուրոկրատական հանգամանքներով:

Եթե միջոլորտային համեմատություն անենք, ապա կտեսնենք, որ նյութական արտադրության ոլորտում ԱԱՀ գերավճարի ու նրա ետ ստացումն ավելի վատթար ազդեցություն կարող է ունենալ, քան արտահանման միտված ՏՏ ոլորտում: Դա կապված է նրա հետ, որ ՏՏ ոլորտում տեսակարար ավելացված արժեքն ավելի մեծ է սովորաբար, քան նյութական ոլորտում:

³⁷ Չի բացավում, որ հարկային մարմինները պնդեն այդպիսի կատարողականի համար՝ նպատակ ունենալով մաս հետաձուտ լինել ՏՏԿ-ների կողմից «շահութահարկի նվազագույն չափ» ինստիտուտի կիրառմանը:

Առաջարկություններ.

1. Հասնել նրան, որ հարկային մարմինները ընդունեն էլեկտրոնային կատարողականները: Պետք է հուսալ, որ դա ավելի մոտենալու է էլեկտրոնային հաղորդակցության և ստորագրությունների մասին օրենսդրության զարգացման պարագայում: Այդ առումով նպատակահարմար է համագործակցել ՀՀ ԿԱ ՀՊԾ հետ, հրապարակելու առանձին հարկային հրահանգչական նյութ՝ ՏՏ ոլորտի համար
2. ԱԱՀ գումարների ետ ստացման դյուրացման համար, ի լրումն այն ամենի, ինչ որ կառավարությունն այժմ կատարում է խնդրի գլոբալ կարգավորման համար, քննարկել հետևյալ հասցեական քայլերի հնարավորությունը.
 - 2.1. այն պարագայում, երբ ԱԱՀ գերավճարների կուտակումը կապված չէ Հայաստան ապրանք ներմուծելիս սահմանին ԱԱՀ վճարած լինելու հետ (կամ այն դեպքում կամ քանի դեռ չեն կատարվել համապատասխան փոփոխություններ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6.1. հոդվածում), ապա առաջարկվում է ՀՀ կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ 1923-Ն որոշման³⁸ մեջ փոփոխություններ մտցնել, նախատեսելով ԱԱՀ վերադարձի տեղեկանքի պարզեցված մեխանիզմով տրամադրում ՏՏԿ-ների, Հայաստանից արտահանումների ծավալը իրենց ընդհանուր շրջանառության մեջ նախորդ տարում 70 տոկոսից ավելի կազմելու և ներկայումս ևս ԱԱՀ գերավճարում արտահանման դերակատարում լինելու դեպքում: Այս խնդիրն ակտուալ է, քանի որ արտահանող ՏՏԿ-ների 57.6 տոկոսի մոտ առկա է եղել արտահանման աճ: Որպես սույն առաջարկի ենթաառաջարկ կարելի է համարել հետևյալը. թույլ տալ, որպեսզի գերավճարի հաշվանցման կամ վերադարձի հարցերին վերաբերող՝ վերը նշված 1923-Ն որոշումից ՏՏԿ-ները կարողանան ըստ ցանկության օգտվել ոչ թե եռամսյակը լրացած լինելու պարագայում, այլ նաև ամեն ամիս: Դրա համար նրանք պետք է ազատ լինեն ներկայացնելու ամսական ԱԱՀ հաշվետվություններ, նույնիսկ եթե նրանց նախորդ տարվա շրջանառության գումարը չի գերազանցել 60 մլն. դրամը (տես «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 32 հոդված):

³⁸ Տես ՀՀՊՏ 2005/11 (383), 08.02.05, հոդ. 194

2.2. Հարկային մարմինների համար 2.1. կետում նշվածը իրագործելու որոշակի երաշխիքներ ստեղծելու համար առաջարկվում է կիրառել նոր գործիքներ.

2.2.1. հարկային մարմնի կողմից հավատարմագրված խորհրդատվական - հաշվապահական կազմակերպությունների կողմից այդ ՏՏԿ հարկային հաշվետվությունները պատրաստած լինելը.

Արևմտյան մի շարք երկրներում գործում է հարկային մարմինների և հարկ վճարողներին օժանդակող խորհրդատվական ընկերությունների միջև գործող համագործակցության այնպիսի ձև, երբ հարկային մարմինը սահմանում է խիստ չափանիշներ և իրականացնում դրան համապատասխան մասնագիտական հավատարմագրում: Այդպիսի հավատարմագրված կազմակերպությունների օժանդակությամբ պատրաստած հարկային հաշվետվությունները խորը ստուգման չեն ենթարկվում:

2.2.2. եթե հարկային հաշվետվությունները պատրաստվել են ՀՀ կառավարության լիազոր մարմնի կողմից հավատարմագրված պրոֆեսիոնալ հաշվապահական միության անդամի կողմից, որն ունի նաև այդ միության համապատասխան որակավորումը³⁹,

2.2.3. եթե ՏՏԿ-ն անցել է հաշվապահական հաշվետվությունների աուդիտ ՀՀ-ում լիցենզավորված աուդիտորի կողմից⁴⁰:

Խնդիր 3.4. արտադրանքի կամ սարքավորումների արտահանման (վերաարտահանման) դժվարություններ

Նկատառումներ.

ՏՏԿ-ները արտադրանքի, սարքավորումների արտահանման (վերաարտահանման) ժամանակ ունենում են երկու տեսակի խնդիրներ, մասնավորապես.

- երբ գործ են ունենում ՀՀ ծագման սերտիֆիկատ չունեցող ապրանքների արտահանման (այսինքն վերաարտահանման) հետ,
- երբ գործ են ունենում երկակի նշանակության ապրանքների, հիմնականում սարքավորումների արտահանման հետ:

³⁹ Նման հավատարմագրման ինստիտուտ նախատեսված է «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքով, որը վերաբերելու է հաշվապահի ու աուդիտորի որակավորման հարցը ոչ կառավարական կազմակերպության փոխանցելուն:

⁴⁰ Մետք է նշել, որ այս պահին ՀՀ կառավարությունն այդ հարցում դեռևս չի կողմնորոշվել և իր այդ ֆունկցիան դեռևս ոչ մի կազմակերպության չի փոխանցել՝ հանձնարարելով այն իրականացնել ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանը:

⁴⁰ Այս առաջարկի օգտին է խոսում «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքում վերջերս կատարված և լրացումների ոգին. օրենսդիրը խստացրեց այդ դաշտի կարգավորումը. մեծ պատասխանատվության միջոցներ սահմանեց կեղծ աուդիտորական եզրակացության համար և այլն (տես ՀՀ ՊՏ թիվ 5, 25 հունվարի 2006թ.):

Մասնավորապես. ՀՀ-ում վերամշակված արտասահմանյան արտադրատեսակի արտահանումը հանդիպում է բազմաթիվ խոչընդոտների: Խնդիր է հանդիսանում նաև երաշխիքային սպասարկում ունեցող և ներմուծելուց հետո անսարք դարձած թանկարժեք սարքավորումների արտահանումը: Այսպիսով, խնդրահարույց է համարվում «ժամանակավոր ներմուծում», «ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար», «ժամանակավոր արտահանում», «ժամանակավոր արտահանում՝ վերամշակման համար» մաքսային ռեժիմների պրակտիկ կիրառումը:

Սինգապուրի մաքսային օրենսդրությունը թույլ է տալիս առանց որևէ վճարի արտահանել վերանորոգման կամ երաշխիքային սպասարկման ենթակա սպրանքները՝ դրանց ներմուծումից երեք ամսվա ընթացքում: Նշված թույլատրված ժամկետից հետո այդպիսի սպրանքների արտահանումը ենթակա է մաքսավճարների գանձման:

Ռումինիայից արտահանված սպրանքները կարող են փոխարինվել/վերանորոգվել երաշխիքային ժամկետի ընթացքում: Վնասված սպրանքները կարող են արտահանվել կամ վերաներմուծվել մաքսային վճարների զեղչերով: Սպրանքների վերաներմուծման կամ փոխարինման/վերանորոգման զեղչերից օգտվելու համար սպրանքները պետք է լինեն երաշխիքային ժամկետում և պետք է լինեն նույն տարի-ֆային դասակարգման մեջ՝ ունենալով նույն տեխնիկական բնութագրերը:

Օրինակ, «ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» ռեժիմի ժամանակ հարցաշատ են լինում, թե ինչպես է պետք կիրառել սպրանքի վերափոխման աստիճանը որոշելու մեխանիզմը: Սովորաբար դա որոշվում է արտադրանքի արտադրության ավելացված արժեքի տոկոսի կամ արտաքին տնտեսական գործունեության սպրանքների անվանացանկի դասակարգչի ԱՏԳ ԱԱ միջոցով (ստուգելով, թե սպրանքի վերամշակման հետևանքով կողում քանի նիշ է փոխվում): Վերջերս նոր տեխնիկական խնդիրներ սկսեցին առաջանալ՝ կապված նույնականացման տվյալների ամրագրման թերթիկը կիրառության մեջ դնելու հետ⁴¹:

Խնդիրներ են առաջանում նաև ՀՀ-ից ժամանակավոր արտահանման դեպքում սարքը արտասահմանում երաշխիքային սպասարկման ենթարկելու ժամանակ. խոսքը վերաբերում է ոչ միայն նույնականացման և սարքերը «փոխարինելու» հարցին, այլ նաև, երկակի նշանակության սպրանքների ցանկի հետ համադրման հարցին,

⁴¹ Տես ՀՀ կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 1-ի ՀՀ մաքսային սահմանով «ժամանակավոր ներմուծում», «ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար», «ժամանակավոր արտահանում» և «ժամանակավոր արտահանում՝ վերամշակման համար» մաքսային ռեժիմներով տեղափոխվող սպրանքների նույնականացման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1593-Ն որոշումը: ՀՀՊՏ թիվ 67, 26 հոկտեմբերի 2005թ

երաշխիքային ժամկետների ընթացքում ՀՀ ետ վերադարձումն ապահովելու հարցին և այլն:

Մի շարք դեպքերում, եթե ըստ էության ապահովված են պահանջները որ ներկայացվում են, մասնավորապես, «ժամանակավոր արտահանում՝ վերամշակման համար» ռեժիմի կիրառման համար, ապա դրա կիրառումը չպետք է առաջացնի դժվարություններ: Դժվարությունը նորից վարչարարության, տեղեկատվության պակասի մեջ է: Պետք է նշել, որ ՀՀ մաքսային մարմինները սկսել են կիրառել ինքնահայտարարագրման և էլեկտրոնային ձևով հայտարարագիրը լրացնելու մեխանիզմ, որի իրական արդյունքները կլինեն մոտակա ժամանակներս:

Դոմոդեդովո օդանավակայանի (բեռնային) մաքսային կետում թողարկվել է առաջին էլեկտրոնային մաքսային դեկլարացիան: Այս իրադարձությունը հանդիսանում է մեծամասշտաբ ծրագրի արդյունք, որն իրականացվել է «Դոմոդեդովո Տերմինալ»-ի աշխատակիցների, Դոմոդեդովյան մաքսատան և արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների հետ համատեղ: Ծրագրի առաջին մասնակիցը, որը միացել է էլեկտրոնային դեկլարացիայի համակարգին, դարձել է Major Cargo Service ընկերությունը: Մոսկովյան ավիացիոն շղթայից «Դոմոդեդովո» միջազգային օդանավակայանն առաջինն է ներդրել ապրանքների էլեկտրոնային դեկլարացիայի ձևը: Ապրանքների էլեկտրոնային դեկլարացիայի համակարգը զգալիորեն արագացնում է և պարզեցնում է մաքսային ձևակերպումների համակարգը, նվազեցնում է ծախսերը մաքսային ընթացակարգերը անցնելիս, և արտաքին տնտեսական գործունեությանը զբաղվողներին թույլ է տալիս չգտնվել մաքսատանը: AVIA.RU; 09.12.05

Առաջարկություններ.

1) ՏՏ ոլորտի կազմակերպությունների համար նկարագրել «ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» և «ժամանակավոր արտահանում՝ վերամշակման համար» մաքսային ռեժիմների կիրառման հնարավորությունները՝ պարզեցված ուղեցույց-բրոշյուրի հրապարակման միջոցով,

2) միաժամանակ, ԱՊՀ երկրների շրջանակում գործող՝ ազատ առևտրի համաձայնագրի համաձայն, եթե Հայաստանից արտահանվող արտադրանքը չունի հայաստանյան ծագում, ապա ՌԴ (և այդ բազմակողմ համաձայնագիրը ստորագրած այլ երկրներ) արտադրանքը մտնելիս նա կարող է կիրառել մաքսային վճարներ: Առաջարկվում է ուսումնասիրել, կատարել համապատասխան վերլուծություններ՝

նպատակ ունենալով պարզել այն բանի նպատակահարմարությունը և հնարավորությունը, որ SS ոլորտի արտադրանքը, որը վերամշակվել է ՀՀ-ում, սակայն ոչ բավականաչափ է ՀՀ ծագման սերտիֆիկատ շնորհելու համար, ստանա արտոնություն և ԱՊՀ շրջանակներում օգտվի արտոնյալ մաքսային ռեժիմից ճիշտ նույն կերպ, ինչպես որ ՀՀ ծագում ունեցող SS արտադրանքը,

3) ԱՏԳ- ԱԱ դասակարգիչը և դրա պարզաբանումների հատորյակները դարձնել հանրամատչելի և այն տեղադրել նաև ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի էլեկտրոնային կայքում (www.customs.am): Հիշենք, որ ՏՏԿ-ներն այն օգտագործելու են ոչ միայն ապրանքների ներմուծման ժամանակ, այլ նաև պարտադիր հավաստագրման ենթակա ապրանքների իդենտիֆիկացման համար,

4) մշակել երկակի նշանակության սարքավորումների արտահանման թույլտվությունների օրենսդրական դաշտը՝ նպատակ ունենալով նկարագրել ՏՏ ոլորտի հետ հատման հնարավոր կետերը, ապա հրապարակել համապատասխան պարզաբանում-ուղեցույց:

Այդ ուղեցույցում նպատակահարմար է միաժամանակ ներառել օժանդակող պարզաբանումներ նաև.

- Հայաստանից արտահանման ոչ սակագնային կարգավորման այլ հարցերի գծով
- «ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» ռեժիմի պարագայում ՏՏ ոլորտի արտադրանքը, պարագաները հետագայում արտահանելիս ծագման սերտիֆիկատի պահանջների, ինչպես նաև նույնականացման պրոցեդուրայի ժամանակ հանդիպող հարցերի գծով

III.2. Հարկային հարաբերություններ

Հետազոտության արդյունքների համաձայն, ՏՏԿ-ները հարկային հարաբերություններում ամենից հաճախ առնչվում են պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների և եկամտահարկի հետ, որոնց հետևում են շահութահարկը, ԱԱՀ-ն և գույքահարկը (Աղյուսակ 27):

Աղյուսակ 27. SSԿ-ների նկատմամբ կիրառվող հարկատեսակներ

Հարկատեսակ		Տոկոս*
1	Սոցիալական ապահովագրության պարտադիր վճար	96.2
2	Եկամտահարկ	90.4
3	Շահութահարկ	69.2
4	ԱԱՀ	65.4
5	Գույքահարկ	44.2
6	Պարզեցված հարկ	17.3
7	Հաստատագրված վճար	9.6

* Տվյալ հարկատեսակով հարկվող SSԿ-ների թվի և SSԿ-ների ընդհանուր թվի հարաբերություն՝ տոկոսային արտահայտությամբ

SSԿ-ների կեսից ավելին (51.9 տոկոսը) նշել է, որ դժվարությունների չի հանդիպում հարկային հարաբերություններում: SSԿ-ների մյուս մասի պատասխաններից կարելի է եզրակացնել, որ հարկատեսակներից ամենախնդրահարույցը ԱԱՀ-ն է, որին հետևում են սոցիալական վճարներն ու շահութահարկը (Աղյուսակ 28):

Աղյուսակ 28. Գնահատականներ հարկատեսակների խնդրահարույց լինելու մասին

Հարկատեսակ		Տոկոս*
1	ԱԱՀ	34.6
2	Շահութահարկ	15.4
3	Սոցիալական ապահովագրության պարտադիր վճար	15.4
4	Եկամտահարկ	11.5
5	Գույքահարկ	3.8
6	Պարզեցված հարկ	5.8

* Տվյալ հարկատեսակը նշած SSԿ-ների թվի և SSԿ-ների ընդհանուր թվի հարաբերություն՝ տոկոսային արտահայտությամբ:

Հարկային հարաբերություններում հանդիպող դժվարությունների պատճառները ավելի հաճախ կապվում են վարչարարության հետ: Մասնավորապես, SSԿ-ները հարկային դաշտի խնդիրները մեծամասամբ կապում են հարկային օրենսդրության հայեցողական կամ կամայական մեկնաբանման, ինչպես նաև հարկային

կանխավճարների պահանջներին և ԱԱՀ-ի գերավճարները վերադարձնելուն առնչվող խնդիրների հետ (Աղյուսակ 29): Որպես դժվարությունների լուրջ պատճառ են դիտարկվում նաև օրենքներում և ենթաօրենսդրական ակտերում հակասական դրույթների առկայությունը:

Աղյուսակ 29. Հարկային հարաբերություններում հանդիպող դժվարություններ

	Խնդիրը կամ դժվարությունը	Տոկոս*
1	Հարկային մարմինների կողմից օրենսդրության կամայական մեկնաբանություն	60.0
2	Օրենքներում առկա հակասություններ	28.0
3	ԱԱՀ գերավճարի ետ ստանալու դժվարություն	16.0
4	Ենթաօրենսդրական ակտերում առկա հակասություններ	12.0
5	Փաստաթղթաշրջանառության ծավալի չիմնավորված մեծ լինելը	20.0
6	Հարկային կանխավճարի պահանջներ	8.0
7	Հարկերի դրույքաչափեր	4.0

* Տվյալ խնդիրը կամ դժվարությունը նշած ՏՏԿ-ների և դժվարությունների հանդիպած ՏՏԿ-ների ընդհանուր թվի հարաբերություն՝ տոկոսային արտահայտությամբ

Ըստ էության, ՏՏԿ-ների ղեկավար աշխատակիցների համար ամենամտահոգիչ հարցերից մեկը հարկային վարչարարությունն է: Ստորև բերվող աղյուսակում ամփոփված է ՏՏԿ-ների ղեկավար աշխատակիցների վերաբերմունքը հարկային վարչարարության առանձին տարրերի նկատմամբ: Միջինացված գնահատականներից երևում է, որ ՏՏԿ-ներին լրջորեն մտահոգում են հարկային վարչարարության գրեթե բոլոր կողմերը (Աղյուսակ 30): Վարչարարության առավել խնդրահարույց տարրերն են հարկային մարմինների կողմից ՏՏԿ-ներին ներկայացվող կանխավճարների պահանջը, թարմ տեղեկատվության դժվարամատչելիությունն ու հարկային կանոնակարգերի և դրույքաչափերի հաճախակի փոփոխությունները: Դրանց հետևում են հարկային հաշվետվությունների բարձր հաճախականությունն ու ստուգումների հետ կապված դժվարությունները:

Աղյուսակ 30. Հարկային վարչարարության առանձին տարրերի գնահատում. միջինացված արժեքներ

Վարչարարության տարրը, խնդիրը կամ դժվարությունը		1-խնդիր չէ, 4-մեծ խնդիր է
1	Ոչ օրինական պահանջ հարկերի կանխավճարի համար	2.88
2	Հարկային պահանջների վերաբերյալ թարմ տեղեկատվության մատչելիություն	2.73
3	Կանոնակարգերի և դրույքաչափերի հաճախակի փոփոխություններ	2.71
4	Հաշվետվությունների բարձր հաճախականություն	2.21
5	Ստուգումներ	2.04
6	Հարկային ձևեր/լրացում	1.94
7	Հարկերի հաշվարկ	1.79
8	Վճարումների հաճախականություն	1.87
9	Վճարման մեթոդներ	1.52

Ստուգումներ

ՏՏԿ-ների կարծիքով, տարբեր պետական մարմինների անցկացրած ստուգումներն ու դրանց հետ կապված ընթացակարգերը նույնպես խնդրահարույց են ու բացասաբար են անդրադառնում գործարար միջավայրին: 2004 թվականի տվյալներով ՏՏ ոլորտում մեկ կազմակերպությանն ընկել է տարեկան միջինում երկու ստուգում (նվազագույնը՝ զրո, իսկ առավելագույնը՝ 10 ստուգում): Ամենահաճախ և ամենաերկար ստուգումներ կատարող գերատեսչություններն էին՝ հարկային պետական ծառայությունը (65.4 տոկոս դեպքերում) և սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամը (51.9 տոկոս⁴²):

⁴² Սույն նյութի պատրաստման և հրատարակման պահին արդեն իսկ Սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի մարմինները ստուգումներ չեն իրականացնում կազմակերպություններում սոցիալական ապահովագրության պարտադիր վճարների կապակցությամբ, քանի որ այդ ֆունկցիան օրենքով փոխանցվել է հարկային մարմիններին:

Աղյուսակ 31. Ստուգումների ամփոփ նկարագիր. ներկայացված միջնաքվերով

Ստուգող մարմին		Ստուգումների քանակ		Յուրաքանչյուր ստուգման տևողությունը օրերով		Յուրաքանչյուր ստուգման ստուգողների միջին քանակ		Տույժեր.	
1	Պետական հրդեհային հսկողության մարմիններ	1		1		2			
	<i>Նվազ.-առավելագ.</i>	<i>0</i>	<i>4</i>	<i>1</i>	<i>7</i>	<i>1</i>	<i>3</i>		
2	Հարկային պետական ծառայություն	1		5.0		2.0		150,000	
	<i>Նվազ.-առավելագ.</i>	<i>0</i>	<i>4</i>	<i>1</i>	<i>180</i>	<i>1</i>	<i>5</i>	<i>0</i>	<i>4,500,000.0</i>
3	Ազգային վիճակագրության ծառայություն	1		3.0		2.0			
	<i>Նվազ.-առավելագ.</i>	<i>0</i>	<i>3</i>	<i>1</i>	<i>7</i>	<i>2</i>	<i>4</i>		
4	Սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամ	1.0		3.0		2.0		6.100.0	
	<i>Նվազ.-առավելագ.</i>	<i>1</i>	<i>3</i>	<i>1</i>	<i>15</i>	<i>1</i>	<i>4</i>	<i>0</i>	<i>250,000.0</i>

Ստուգումների ենթարկված ՏՏԿ-ների 46.35 տոկոսը նշել է, որ ստուգումների ընթացքում հայտնաբերվել են օրենսդրության խախտումներ: 21.1 տոկոսի դեպքում այդ խախտումները չեն արձանագրվել որոշակի քննարկումների միջոցով ազդեցության հետևանքում: Մնացած ՏՏԿ-ների նկատմամբ ստուգման արդյունքում հայտնաբերված խախտումներն արձանագրվել են (ինչպես ասում են՝ «ակտ է կազմվել»): Ընդ որում, դրանց միայն մի փոքր մասն է (14.3 տոկոսը) ստուգման արձանագրությունը բողոքարկել ստուգող մարմնի վերադասի մոտ և բողոքի բավարարում ստացել:

Խնդիրներ, նկատառումներ և լուծման առաջարկներ

Խնդիր 3.5. *ՀՀ տարածքում խոշոր գնումների հետևանքով⁴³ առաջացող ԱԱՀ գերավճարի ետ ստացման պրոբլեմ*

Նկատառումներ.

Իրականում գերավճարներ առաջանում են ոչ միայն զրո տոկոս դրույքաչափով ՀՀ տարածքում գործարք անելիս կամ արտահանելիս, այլ նաև որոշ այլ պարագաներում. մեծ տեխնիկական վերակառուցում, դրա հետ կապված շինարարական աշխատանքների կամ անշարժ շինության գնում: Այդ պարագայում հարցը կարգավորվում է ոչ թե սույն նյութի III-րդ մասի 1-ն ենթամասի խնդիր 3.3-ում նշված՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածից բխող՝ ՀՀ կառավարության թիվ 1923-Ն որոշմամբ, այլ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 33 հոդվածից բխող՝ ՀՀ կառավարության 11 մայիսի 2002 թվականի թիվ 502 որոշմամբ⁴⁴: Իրական պրակտիկայում այստեղ ևս կազմակերպությունները հանդիպում են այդ գերավճարը ետ ստանալու դժվարությունների:

Փորձագետները նշում են, որ ՀՀ-ում ԱԱՀ-ի գերավճարների գումարները հիմնականում վերադարձվում են խոշոր և կայացած կազմակերպություններին: Փորձագետները նշում են, որ կառավարությունը հաճախ չէ, որ հրապարակում է տեղեկատվություն, թե ԱԱՀ-ի գերավճարների ետ ստացող քանի կազմակերպություններ են եղել: Դա նշանակում է, որ միայն գումարային գնահատականը չի կարող լավ բնութագրիչ հանդիսանալ ԱԱՀ-ի գերավճարի ետ վերադարձման հարցում՝ կառավարության ճկունության հարցի գնահատման համար: Պետք է նաև նշել, որ հաճախակի լինում են դեպքեր, երբ հարկային մարմինը գերավճարի հետ կապված ուսումնասիրությունների-ստուգումների ընթացքում կարող է ծախսել ավելին, քան կկազմեր գերավճարի ետ վերադարձման ենթակա գումարը: Տվյալ երևույթը, ակնհայտորեն, շահավետ չէ երկու կողմերի համար էլ: Վերոհիշյալ խնդրի համար որպես առաջընթաց, փորձագետները նշում են, որ ՀՀ կառավարության օղակներում քննարկվում է ԱԱՀ-ի գերավճարների ետ վերադարձման ավտոմատ համակարգի ներդրման հնարավորությունը:

⁴³ Արտահանման հետ կապված առաջացող ԱԱՀ գերավճարի վերաբերյալ առաջարկություններ ներկայացվել են սույն նյութի III.1 մասում:

⁴⁴ ՀՀ ՊՏ 2002/17 (192), 05.06.02

Առաջարկություն.

Առաջարկվում է ստեղծվող՝ ԱԱՀ-ի գերավճարների վերադարձման ավտոմատ համակարգում նախատեսել աստիճանային շեմի սկզբունք, երբ փոքր գումարները կվերադարձվեն առանց հարկային մարմնի կողմից ուսումնասիրություն իրականացնելու: Ընդ որում, եթե գումարները մեծ լինեն, սակայն պայմանավորված լինեն SS ոլորտում կատարված ներդրումներով, որպես հիմնական միջոց անշարժ գույքի կամ հոսքագծի ձեռք բերմամբ կամ CMA կամ CMM համակարգերի ներդրումով, ապա այդ դեպքում թույլատրվի այդ գումարների ետ վերադարձը կամ հաշվանցումը ստանալ մեկ ամսվա ընթացքում:

Խնդիր 3.6. *Հարկային պահանջների վերաբերյալ թարմ տեղեկատվության մատչելի չլինելը, օրենքների և այլ նորմատիվ ակտերում հակասությունները*

Նկատառումներ.

SSԿ-ները խնդրահարույց են համարում նաև օրենքների կամայական մեկնաբանումը, հակասությունները: Սակայն այս երևույթը, փորձագետների կարծիքով, մեծամասամբ կապված է իրավագրման տեխնիկայի հետ, որը կիրառվում է ՀՀ ԱԺ-ում: Այսպես օրինակ, իրավական ակտերում կարելի է հանդիպել «կիրառվում է «այս դրույթը», եթե օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ»: Իրականում հստակ չէ, թե օրենսդրությամբ որևէ բան նախատեսված է, թե՞ ոչ: Վերջինս նաև պատճառ է հանդիսանում օրենքներում և ենթաօրենսդրական փաստաթղթերում հակասական դրույթների ի հայտ գալու համար, ինչպես որ նշել են, և՛ SSԿ – ները և՛ փորձագետները:

Հետազոտության տվյալների համաձայն SSԿ-ները նշել էին, որ խնդիր է հանդիսանում նաև թարմ տեղեկատվության դժվարամատչելիությունն ու հարկային կանոնակարգերի հաճախակի փոփոխությունները: Վերջինիս հետևանքով առաջացած խնդիրներից կարելի է նշել SSԿ-ների մոտ բիզնեսի պլանավորումների դժվարանալը:

Պետք է նշել, որ Ծաղկաձորյան կլոր սեղանի ժամանակ ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության մասնագետները տեղեկացրին, որ ծառայության ինտերնետային կայքում (www.taxservice.am) նշված ինֆորմացիան հաճախակի թարմացվում է:

Առաջարկություն.

Ժամանակակից լավագույն տեխնոլոգիաների կիրառմամբ ստեղծել ՀՀ օրենսդրությանը վերաբերող նոր տեղեկատվական վիրտուալ համակարգ, որը

հատակորեն կներառի բոլոր օրենսդրական ակտերը ՀՀ-ում և նրանց հղումների ցանկը, կապահովի արագ փնտրում, ներառելով տնտեսական դատարանների որոշումները, այլ օգտակար իրավական և/կամ տեղեկատվական նյութեր: Ի դեպ, ՏՏԿ-ներն այս հարցում կարող են հենց իրենց ներուժը օգտագործել՝ նմանատիպ ծրագիր իրականացնելու համար:

Խնդիր 3.7. Հարկային կանխավճարների պահանջը

Նկատառումներ.

Խնդիր է հանդիսանում նաև դեռևս հաշվետու ժամանակաշրջանը ավարտված չլինելու պարագայում հարկային կանխավճարների պահանջը: Դ-ա և սկզբունքորեն հանգեցնում է ՏՏԿ-ների մոտ դրամական միջոցների սղության: Այս հարցի վերաբերյալ փորձագետները նշում են, որ երկրում վերջին մի քանի տարում արձանագրված երկնիշ տնտեսական աճի պայմաններում նպատակահարմար կլիներ պակասեցնել դրամական միջոցների՝ այդպիսի մեխանիզմով լրացուցիչ հավաքագրման գործընթացը: Այդ գումարները, մասնավորապես, տվյալ դեպքում կարող էին ծառայել ՏՏ ոլորտի զարգացման համար:

Առաջարկություն.

Հնարավորինս աջակցել ՏՏԿ-ներին՝ վերացնելով կամ պակասեցնելով հարկային կանխավճարների պահանջները:

Բացի վարչարարական այդ խնդրից, ՏՏԿ-ների ֆինանսական հոսքերի բարելավմանն ուղղված քայլ կարելի է կատարել նաև «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 47.1 հոդվածի համաձայն գանձվող շահութահարկի նվազագույն չափի կիրառման հարցում, այսինքն, եթե այդ հոդվածի 4-րդ կետում թվարկված ոլորտների շարքում ներառվի նաև ՏՏ ոլորտը:

Խնդիր 3.8. Հարկային պարզաբանումներ ստանալու դժվարությունը.

Նկատառումներ.

Արևմտյան մի շարք երկրներում գործում է հարկային մարմինների և հարկ վճարողներին օժանդակող խորհրդատվական ընկերությունների, նրանց շահերը ներկայացնող ասոցիացիաների միջև գործող որոշակի համագործակցության ֆորմատ: Այն արտահայտվում է մասնավորապես պարբերական ֆորումների ձևով: Ժամանակ առ ժամանակ ոչ մեծաթիվ խորհրդատվական-հաշվապահական ընկերությունները հանդիպում են հարկային մարմնի՝ պարզաբանումներ տալու իրավասություն ունեցող

պաշտոնյաների հետ: Այն երկուստեք օգտակար է լինում. հարկային մարմինները ստանում են կենդանի արձագանք «դաշտում» առկա իրավիճակի մասին, իսկ խորհրդատվական-հաշվապահական ընկերությունները տեղեկանում են «վերջերս շատ հարցադրումներ առաջացրած» մի քանի հարցերի շուրջ հարկային մարմնի դիրքորոշման մասին: Ամբողջ էֆեկտը արագության և ուժերի համախմբման մեջ է: Դրա շնորհիվ խորհրդատվական ընկերությունները դառնում են հարկային մարմնի «դեսպանը»՝ տարածելով նրա դիրքորոշումը: Խորհրդատվական ընկերությունները ստանում են նաև այդպիսի հանդիպումների արձանագրությունը: Դա թույլ է տալիս էժանացնել վարչարարությունը: Օրենքով նկարագրվում է այդպիսի բանավոր պարզաբանման ստատուսը. սովորաբար այն չի ունենում այնպիսի պաշտոնական պարզաբանման կարգավիճակ, որ կարող է դատարանում օգտագործվել որպես ապացույց, այլ լոկ ունի «ուղղորդող» նշանակություն: Այնուամենայնիվ, դրա ժամանակ հարկային մարմինը պետք է հետամուտ լինի որոշակի մասնագիտական հետևողականության և նրա դիրքորոշումը բանավոր հնչեցնելու իրավունք ունի այն պաշտոնյան, ով հետագայում ընդգրկված է լինելու գրավոր պաշտոնական պարզաբանումների, հրահանգչական նյութերի հրապարակման գործում:

Հաշվի առնելով, որ ՀՀ կառավարության որդեգրած քաղաքականության մեջ խոսվում է հարկային արտոնություններ տալուց խուսափելու մասին, ապա տեղին կլինի նախատեսել այլ տեսակի հարկային օժանդակության մասին, որը հարկային արտոնություն չէ, սակայն կարող է օժանդակել ՏՏԿ-ին՝ հարկային «բեռը» կրելու հարցում:

Առաջարկություններ

1) Առաջարկվում է վերը նշված տեսակի ֆորում գործարկել նաև Հայաստանում:

Առաջին փորձը սկսել ՏՏ ոլորտից, քանի որ այդպես թերևս նաև հարկային մարմնի համար հեշտ կլինի սկզբնական շրջանում հարմարվել այդ նոր գործիքին: Այդ նպատակով.

1.1) հարկային մարմինը կարող է իր կազմում առանձնացնել մի խումբ, որ կզբաղվի ՏՏ ոլորտով,

1.2) մի քանի խորհրդատվական ընկերություններ, որոնց հաճախորդների կազմում զգալի են ՏՏԿ-ները, կարող են դառնալ այդ ֆորումի անդամ: Ֆորումի անդամ և/կամ համակարգող կարող են հանդես գալ Տեղեկատվական

տեխնոլոգիաների զարգացման ազգային խորհուրդը (SSՁԱԽ) և/կամ

Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միությունը (ԻՏՁՄ):

- 2) ՏՏԿ-ների կողմից իրականացվող հիմնական ստանդարտ գործառույթների համար ստեղծել պարզաբանող տիպային սխեմաներ, որոնք ցույց կտան բոլոր հարկային հետևանքները՝ տվյալ տեսակի գործարք (գործունեություն) իրականացնելու դեպքում: Այստեղ կարելի կլինի խնդրել նաև պետական մարմինների մասնագետների ընդգրկումը՝ ՏՏ ոլորտի համար այդպիսի ուղեցուցի պատրաստման համար: Այն պետք է լինի իրական միջավայրում՝ ներառելով անդրադարձներ տնտեսական օրենսադրության մյուս հատվածներին ևս, որոնց ֆոնի վրա կներկայացվեն գործարքների հարկային հետևանքները:

Խնդիր 3.9. Հաշվետվությունների «բեռ», ստուգումներ

Նկատառումներ.

Ի մի բերելով հետազոտության արդյունքներն ու սեմինարի մասնակից փորձագետների կարծիքները՝ կարելի է եզրակացնել, որ ՏՏԿ-ներն ունեն բավականին խնդիրներ կապված հարկային հարաբերությունների հետ: Սակայն հարկ է նշել, որ որոշ փորձագետների կարծիքով ՏՏ ոլորտում, տնտեսության մյուս ճյուղերի հետ համեմատ, ավելի քիչ են հարկային դժվարությունները, քանզի հարկային պաշտոնյաների համար այս ոլորտը դեռևս բավարար ճանաչելի չէ, մասնավորապես փորձառության պակասի պատճառով՝ հաշվի առնելով այն, որ գործարքների զգալի մասը կատարվում է էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով:

Միաժամանակ, շարունակում են տարբեր մարմինների կողմից տարատեսակ հաշվետվությունների պահանջները, որոնց քանակն էլ շարունակում է աճել⁴⁵: «Էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրության» մասին ՀՀ օրենքի ընդունումից հետո արդիական է դարձել էլեկտրոնային տարբերակով հաշվետվությունների ներկայացման հարցը: Արդեն իսկ երկու հարկային տեսչություններ (ակցիզային հարկ վճարողներին սպասարկողը և բանկերին ու այլ ֆինանսական կազմակերպություններին սպասարկողը) սկսել են զբաղվել այդ նպատակի համար համապատասխան մեխանիզմների ձևավորմամբ: Էլեկտրոնային տարբերակով հաշվետվություններ ներկայացնելու առավելություններից է հարկային տեսչության պաշտոնյաների հետ անհատական շփման նվազեցումը: Փորձագետները

⁴⁵ Պետք է նշել, որ սույն նյութի պատրաստման և հրատարակման ժամանակ արդեն ուժի մեջ էին մտել «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» ՀՀ օրենքի փոփոխությունները, որով հաշվետվությունների ներկայացման եռամսյակային ժամկետը փոխարինվեց ամսականով:

նշում են, որ դա կարող է նվազեցնել այդքան խնդրահարույց, ոչ պաշտոնական վճարների առիթները:

Առաջարկություններ

- 1) Քննարկել տարբեր պետական մարմինների տվյալների բազաների ունիֆիկացման հնարավորությունը: Գրական արդյունքի պարագայում այն թույլ կտա փոքրացնել ՏՏԿ-ի բեռը՝ մեկ հաշվետվություն ներկայացնելով բավարարել մի քանի պետական մարմիններին հաշվետվություն ներկայացնելու ռեզիդենտների պարտականությունը:
- 2) ՏՏ ոլորտի աջակցություն՝ տեղեկատվական տեխնոլոգիաների, մասնավորապես էլեկտրոնային հաշվետվությունների համակարգի ներդրմամբ պետական մարմիններում:

Խնդիր 3.10. Հաշվարկային փաստաթղթերի ձեռք բերման խնդիր

Նկատառումներ.

Այս խնդիրը ավելի սրվեց 2006 թվականից, թեև պատմությունը սկսվել էր ավելի վաղուց: ՏՏԿ-ները և ընդհանրապես տնտեսավարող սուբյեկտները գնալով ավելի շատ են դժվարություններ ունենում իրենց գնումների համար հաշվարկային փաստաթղթեր ձեռք բերելու համար կամ ունեն որոշակի սահմանափակումներ: Այդ դաշտում առկա են նաև իրավական ակտերի միջև տրամաբանական անհամապատասխանություններ:

ՏՏ ոլորտի համար դրա ազդեցությունը կարող է համարվել փոքր ինչ ավելի մեծ, եթե համարենք, որ.

ա) ՏՏ կիրառման համար անձինք ավելի հաճախակի են առիթ ունենում կատարելու ոչ մեծածավալ գնումներ. պահեստամասեր, էլեկտրոնային կրիչներ, սկավառակներ, ոչ բարդ համակարգչային ծրագրեր և այլն,

բ) ՏՏԿ-ներն իրենք Հայաստանում դեռ շատ մեծ չեն և չի էլ ակնկալվում, որ անպայման մեծ կազմակերպություններ են գործելու այս դաշտում: Այս ոլորտի կրթական ու վերապատրաստման ծրագրի ինտենսիվացումից հետո էլ ավելի կարող է տեղի ունենալ այդ դաշտում անհատների, այդ թվում անհատ ձեռնարկատերերի տեսակարար կշռի աճ: Այսօր էլ կարելի է ՏՏ շուկայում նկատել ոչ ֆորմալ անհատական ծառայություններ: Դրա համար բավարար է բացել, օրինակ, Դելովոյ Էքսպրես «Деловой Экспресс» շաբաթերթի որևէ համար և կարդալ դրա ամենշաբաթյա հայտարարությունների բաժինը: Կարծում ենք, որ այդ երկրորդային աշխատուժը

նպատակահարմար կլինի հնարավորինս բերել հաշվառման դաշտ, խրախուսել նրանց՝ ՓՄՉ դառնալը և այլն:

Այդ իմաստով առկա են մի քանի խոչնդոտներ, այսպես.

- Հայաստանում համապատասխան օրենքի հիման վրա մի շարք ոլորտներում պարտադիր կիրառման ենթակա են հսկիչ դրամարկղային մեքենաները, սակայն շահութահարկի հաշվարկման նպատակով անձինք ունեն տարվա ընթացքում մեկ միլիոն դրամի սահմանափակում՝ այդ տեսակի հաշվարկային փաստաթղթով նվազեցում կատարելու համար,
- այդպիսի սահմանափակում չկա պարզեցված հարկով աշխատողների համար: Սակայն իրականում պարզեցված հարկով աշխատողները չեն կարող օգտվել այդպիսի «անսահմանափակ» արտոնությունից, քանի որ 2005 թվականի հունվարի 1-ից, «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարվեցին և նրանց համար նվազեցումների ինստիտուտը դադարեց որևէ նշանակություն ունենալ: Այն այժմ հետաքրքիր է միայն անհատ ձեռնարկատեր պարզեցված հարկ վճարողին՝ այն էլ ոչ թե եկամտահարկի, այլ միայն իր անձնական սոցիալական ապահովագրության պարտադիր վճարների հաշվարկման համար,
- «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 23 հոդվածի՝ 2006 թվականից գործող տեքստը չի խրախուսում կանխիկ գնումներ կատարելը, եթե նույնիսկ այդ գնումի չափը 1200 դրամ է: Դրա մեջ եղած 200 դրամ ԱԱՀ-ն այժմ այլևս հնարավոր չի լինի հաշվանցել: Դրա համար կարիք կլինի, որ այդ 1200 դրամի համար տնտեսավարող սուբյեկտը կատարի մի քանի քայլանի բարդ սխեմա. խնդրի որ խանութում դուրս գրվի հաշվարկային փաստաթուղթ՝ հաշիվ-ապրանքագրի տեսքով, սպա իր բանկային հաշվից կատարի դրա բանկային փոխանցումը, սպա դրա օրինակը և իր կողմից կնքած-ստորագրած հաշիվ-ապրանքագրի օրինակը ներկայացնի վաճառողին: Ամենահետաքրքիրն այն է, որ նույնիսկ հսկիչ-դրամարկղային մեքենայի կտրոնով հիմնավորվող գնման համար ևս թույլ չտրվեց մանր գնումների համար (մինչև 2005 թվականի վերջը կարելի էր ԱԱՀ-ն հաշվանցել՝ մինչև 100 հազար դրամ կանխիկ գնումների պարագայում) ԱԱՀ հաշվանցում կատարել,
- եկամտահարկի մասին օրենսդրության պահանջն է (առնվազն դրանում կա մեծ տարրըներցում, ինչն առիթ է տալիս անհարկի քննարկումներ անցկացնել տարբեր մակարդակի հարկային մարմինների հետ), որ եթե տնտեսավարող սուբյեկտը օգտվում

է անհատ ձեռնարկատիրոջ ծառայությունից կամ նրանից գնում է կատարում, ստանալով հսկիչ-դրամարկղային մեքենայի կտրոն, ապա բոլոր այդպիսի գործարքների մասին առանձին-առանձին պետք է հատուկ բլանկով տեղեկություններ ներկայացնի հարկային մարմիններին: Ստացվում է, որ այդ նպատակով տնտեսավարող-գնորդները պետք է կամ ցանկացած ծառայության կամ ապրանքի գնում կատարելուց հետո անմիջապես տեղում ուսումնասիրեն հոմ կտրոնը և եթե դրանից ակնհայտ դառնա վաճառողի՝ անհատ ձեռնարկատեր լինելը, ապա գործարքը դրանով չավարտեն, այլ շարունակեն՝ վաճառողից խնդրելով տրամադրել այլ տեղեկություններ, որ անհրաժեշտ են հետագայում հարկային մարմին տեղեկություններ ներկայացնելու համար, կամ էլ թերևս խուսափեն այդպիսի վաճառողներից գնումներ կատարելուց:

Այս խնդրի որոշակի տարատեսակն է այն իրավիճակը, երբ Հայաստանյան ՏՏԿ-ների և/կամ այլ ոլորտի կազմակերպությունների պաշտոնատար անձինք մեկնում են արտասահման և այնտեղ կատարում գնումներ: Երբեմն դրանք լինում են ոչ մեծածավալ սարքեր, ինչը հնարավոր է լինում բերել որպես օդանավի ուղևորի ուղեբեռ, այլ ոչ թե արտասահմանից կազմակերպել բեռնառաքում: Այդ դեպքում Հայաստան հասնելիս նրանք հաճախ չգիտենալով կանոնները, սահմանին մաքսային հայտարարագրման չեն ենթարկում իրենց բերած սարքը և հետագայում ունենում դժվարություններ.

- այդ փաստաթղթի ռեկվիզիտները կարող են չբավարարել ՀՀ հարկային օրենսդրությամբ սահմանված պահանջներին՝ ծախսերը հիմնավորող դիտարկելու համար,
- դա կարող է որակվել որպես մաքսանենգություն,
- եթե առկա չէ սահմանն անցնելու հավաստումը, ապա ոչ միայն դժվար է լինելու հարկային նպատակով այդ արտասահմանյան ծախսը հետագայում նվազեցնելը, այլ նաև կարող է ծագել այդ գումարից աղբյուրի մոտ շահութահարկ պահելու պահանջ, որպես ոչ ռեզիդենտին եկամտի վճարում:

Առաջարկություն

- 1) Կապված արտասահմանից կազմակերպության համար սարք կամ այլ գույք բերելու հարցի հետ.

Հրապարկել մի ոչ պաշտոնական պարզաբանում. «Ինչպես հայտարարագրել կազմակերպության համար արտասահմանից օդանավով որպես ուղեբեռ բերվող համակարգիչը կամ այլ գույքը»: Այն պետք է պարունակի դրույթներ.

ա) ինչպես արտասահմանում գնում կատարելիս արդեն իսկ հնարավորինս հոգալ (բնական է, որ դա ոչ միշտ հնարավոր կլինի) այդ փաստաթղթերի՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին բավարարելու համար,

բ) ինչպես ընտրել մաքսային «կարմիր ուղին» և ինչպես լրացնել մաքսային հայտարարագիրը

գ) ինչպես վարվել, եթե կազմակերպությունը դեռևս չունի մաքսային «գործ» (թղթապանակ) և այլն:

2) Կապված այլ նկարագրված խնդիրների հետ. քանի դեռ էլեկտրոնային առևտուրը տարածված չէ, պոստ տերմինալներով քարտային առևտուրը ամենուր հնարավոր չէ, և քանի որ ամբողջ վերը նշվածը հանգեցնում է տնտեսության հաշվառման դաշտի էլ ավելի թուլացմանը, անարդար մրցակցությանը և գնագոյացմանը, ֆորմալ հատվածի նկատմամբ որոշակի դիսկրիմինացիայի, ապա նպատակահարմար է խրախուսել փաստաթղթերով աշխատելը, սակայն և այն չդարձնել չափազանց ռեսուրսատար: Այդ նպատակով առաջարկվում են հետևյալ միջոցները.

2.1) վերականգնել «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի այն դրույթը, որ փաստացի ծախսեր կատարած լինելու պարագայում կազմակերպություններին թույլ տրվի իրենց հասույթների կամ, որ ավելի նպատակահարմար է, ծախսերի որոշակի տոկոսով կարողանան ծախս նվազեցնել, եթե նույնիսկ իրենց չի հաջողվել ապահովել ՀՀ հարկային օրենսդրությամբ նախատեսված հաշվարկային փաստաթուղթը: Առաջարկվում է ծախսերի 0.5 տոկոսի չափը հիմք ընդունել,

2.2) փոփոխություններ մտցնել «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածում՝ նախատեսելով, որ հսկիչ դրամարկղային մեքենաների կտրոններով ծախսերը հիմնավորած լինելու պարագայում թույլատրվի սահմանափակ հաշվանցում (դեբետագրում): Այդ սահմանափակումը սահմանել որպես ամեն գործարքի համար 50 հազար դրամ, իսկ ամսականը՝ 3 մլն դրամ:

2.3) այդ նույն ձևով փոփոխություններ մտցնել «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում, նախատեսելով, որ հսկիչ դրամարկղային մեքենաների կտրոններով ծախսերը հիմնավորած լինելու պարագայում թույլատրվի սահմանափակ

նվազեցում կատարել: Պետք է հիմք ընդունել նույն չափերը. ամեն գործարքի համար 50 հազար դրամ և ամսական՝ 3 մլն դրամ:

Վերջին երկու առաջարկությունների արդյունքում կապահովի նաև կոռելացված մոտեցում «Գրամարկդային գործառնությունների մասին» ՀՀ օրենքի՝ կանխիկ դրամով գնումների դիմաց վճարումների սահմանափակման համապատասխան դրույթի հետ:

Բնական է, որ նույնը զուգահեռաբար պետք է կիրառվի նաև անհատ ձեռնարկատերերի եկամտահարկի և սոցալ հատկացումների հարկվող բազաների հաշվարկման կանոններում: Այդ նպատակով պետք է փոփոխություններ կատարվեն «Եկամտահարկի մասին» և «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» ՀՀ օրենքներում,

2.4) փոփոխություններ մտցնել «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքում, նախատեսելով, որ հսկիչ դրամարկդային մեքենաների կտրոններով անհատ ձեռնարկատիրոջից առևտուր անելիս կամ նրանից ծառայություններ գնելիս դրա գծով հարկային մարմինին տեղեկություններ ներկայացնելու կարիք չկա:

ՄԱՍ IV. ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ, ԱՅԼ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐԱԿԱՆ, ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԵՏԱԳԱ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐՑԵՐ

IV.1. Օրենսդրության կիրառման վարչարարության գնահատումներ

Ընդհանրացնելով ՏՏԿ-ների վերաբերմունքը գործարար միջավայրի պետական կանոնակարգման վերաբերյալ, հարկ է նախ նշել, որ ՏՏԿ-ների ղեկավար աշխատակիցների մեծ մասը (67 տոկոսը) բավարարված չէ իրենց գործունեությանն այս կամ այն կերպ առնչվող վարչարարությունից ու կանոնակարգերից (Աղյուսակ 32):

Աղյուսակ 32. Գործող կանոնակարգերից և վարչարարությունից ՏՏԿ-ների ղեկավար աշխատակիցների բավարարվածության աստիճան

Բավարարվածության աստիճան		Տոկոս՝ ՏՏԿ-ների ընդհանուր թվի նկատմամբ
1	Բոլորովին բավարարված չէ	36.5
2	Բավարարված չէ	11.5
3	Մասամբ բավարարված չէ	19.2
4	Մասամբ բավարարված է	15.4
5	Բավարարված է	9.7
6	Լիովին բավարարված է	5.8
7	Դժվարանում է պատասխանել	1.9

Փորձագետների շրջանում անցկացված հարցազրույցներից պարզվեց, որ նրանց մեծամասնությունը օրենսդրությունը համարում է բավական նպաստավոր ու զարգացման դրական միտումներ ունեցող (այսպես են կարծում հատկապես պետական պաշտոնյաները): Նրանք խնդիրը տեսնում են.

- օրենքների կիրառման մեխանիզմների,
- իրավական ակտերի միջև անհամապատասխանությունների և հակասությունների,
- օրենսդրական փաստաթղթերի կամայական մեկնաբանությունների,

- վարչարարության անկատարության մեջ:

Փորձագետների մի մասը (մասնավորապես պետական պաշտոնյաներ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ) համարում է, որ գործող օրենսդրությունը հնարավորություն է տալիս հարթելու նման հակասություններն ու թյուր մեկնաբանությունները: Նաև համարվում է, որ օրենսդրության լավ իմացության ու խնդրին պատշաճորեն հետամուտ լինելու դեպքում գործարարները կարող են շատ ու շատ հարցեր լուծել իրենց օգտին: Իմացության պակասը, հետամուտ լինելու կամքի բացակայությունն ու թերահավատությունը պետական կառույցների ու պաշտոնյաների անաչառության նկատմամբ հաճախ բարդացնում են իրավիճակը: Գեռևս ձևավորված չէ սովորույթ, թե ինչ քայլերի միջոցով կարելի է կարգավորել օրենսդրական փաստաթղթերում առկա հակասությունները և ստանալ իրավական ակտերի դրույթների առնչությամբ պարզաբանումներ ու մեկնաբանություններ:

Ի լրումն վերն արդեն նշված՝ հարկային և (կամ) մաքսային վարչարարության առկա իրավիճակի, արտարժույթի փոխարժեքի հաճախակի և անկանոն տատանումների, ՏՏԿ-ները խնդրահարույց են համարում նաև.

- գործարար միջավայրի վրա ուղղակիորեն կամ անուղղակիորեն ազդող մի շարք բնագավառներում վարվող պետական քաղաքականությունը և (կամ) կարգավորման ձևը,
- կառավարման մարմինների ոչ թափանցիկ գործելակերպը, աշխատուժի շուկայի կարգավորված չլինելը և այլն (Աղյուսակ 33):

Աղյուսակ 33. Պետության կողմից կարգավորվող ոլորտների գնահատում. միջինացված արժեքներ

Կանոնակարգումը կամ դրա առարկան		1-խնդիր չէ, 4-մեծ խնդիր է
1	Արժույթային (տարադրամի փոխարժեքի) կարգավորում	3.15
2	Կառավարման մարմինների գործելակերպ (ոչ թափանցիկ գործելակերպ)	2.73
3	Հարկային հարաբերությունների կարգավորում (վարչարարություն)	2.71
4	Աշխատուժի շուկայի կանոնակարգում	2.62
5	Բարձր հարկային դրույքաչափեր	2.58
6	Արտաքին առևտրային հարաբերությունների կարգավորում (մաքսային ընթացակարգեր և վարչարարություն)	2.38
7	Հիմնական միջոցների ձեռք բերման հետ կապված կանոնակարգեր	1.62

Կանոնակարգումը կամ դրա առարկան		1-խնդիր չէ, 4-մեծ խնդիր է
8	Հակահրդեհային կանոնակարգեր	1.56
9	Ստանդարտներ և հավաստագրում	1.52
10	Կազմակերպությունների պետական գրանցում	1.38

SSԿ-ների 61.5 տոկոսը համարում է, որ ներկայումս ՏՀՏ ոլորտում անառողջ մրցակցային մթնոլորտ է տիրում: SSԿ-ներն անառողջ մրցակցային մթնոլորտի գոյությունը, այլոց հետ մեկտեղ, կապում են նաև վարչարարական ու կանոնակարգային խնդիրների և անկատար օրենսդրության հետ (Աղյուսակ 34): Կարևոր է նշել, որ SSԿ-ները հստակորեն չեն նկարագրում կամ ձևակերպում, թե որտեղ և ինչպես է արտահայտվում ոլորտում առկա անառողջ մրցակցությունը. նրանք առավելապես քննարկում են դրա պատճառները:

Աղյուսակ 34. SS ոլորտում անառողջ մրցակցության պատճառները

Անառողջ մրցակցության պատճառներ		Տոկոս*
1	Պետական պաշտոնյաների հովանավորչություն որոշ SSԿ-ների նկատմամբ	9.4
2	Ոչ ֆորմալ հարաբերություններ	12.5
3	Կապի, հեռահաղորդակցության մենաշնորհ	12.5
4	Օրենսդրության անկատարություն	12.5
5	Որոշ մասնագետների բացակայություն և եղած մասնագետների ցածր որակավորում	12.5
6	Ծանոթության գործոնի ազդեցություն	6.3
7	Տնտեսության ծանր վիճակը. անկայուն գներ	3.1
8	Ոլորտի վերաբերյալ տեղեկատվության պակաս. առկա իրավիճակի վերլուծությունների պակաս կամ բացակայություն	12.5
9	Պատվիրատուների ցածր գնով առաջնորդվելը՝ որակ գնահատելու համար գիտելիքների պակասի պատճառով, պատվիրատուների թույլ իմացությունը շուկայի վերաբերյալ	6.3
10	Պետության անորոշ դիրքորոշումը SS ոլորտի նկատմամբ	6.3
11	Տեղական շուկայի սահմանափակություն	6.3
12	Հարկային և մաքսային մարմինների կողմից օրենսդրական ակտերի կամայական մեկնաբանություններ	3.1
13	Դժվարանում է պատասխանել	3.1

* Տվյալ պատճառը նշած SSԿ-ների հարաբերությունը մրցակցությունն անառողջ համարող SSԿ-ների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ

SS ոլորտում մրցակցության վերաբերյալ փորձագետների հնչեցրած կարծիքները որոշակիորեն տարբերվում են SSԿ-ների կարծիքներից: Մասնավորապես, փորձագետները SS ոլորտում մրցակցության առողջ կամ անառողջ լինելու որևէ միտում չեն նշում, քանզի համարում են, որ SSԿ-ների մեծ մասը աշխատում է արտաքին շուկայի համար, և ներքին շուկայում մրցակցություն որպես այդպիսին բացակայում է: Այնուամենայնիվ, ներքին շուկայի մասին խոսելիս, փորձագետները հաճախ հիշատակում են SSԿ-ներից մասնագետների արտահոսքը, ինչպես նաև մրցակցության դրսևորման այն ձևը, երբ SSԿ-ները «մարդ են փախցնում» միմյանցից՝ որակյալ մասնագետների սակավության պատճառով:

Զարգացմանը խոչընդոտող գործոնների մասին խոսելիս SSԿ-ները դրանց շարքում այստեղ ևս նշում են անառողջ մրցակցության պատճառներից շատերը (Աղյուսակ 35): Զարգացման խոչընդոտների մասին խոսելիս հարցման մասնակիցներն ամենից հաճախ անդրադառնում են որակավորված մասնագետների սակավությանը, կապի թանկությանն ու հեռահաղորդակցության մեծաշնորհին⁴⁶: Դրանց հաջորդում են օրենսդրական ու կանոնակարգային դաշտի անկատարությունը և ոչ պատշաճ վարչարարությունը, ինչպես նաև ներքին շուկայի սահմանափակությունն ու վերջում՝ պետական աջակցության ցանկալից ցածր աստիճանը (հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ կառավարությունը SS ոլորտը հայտարարել էր որպես տնտեսության գերակա ճյուղերից մեկը):

Աղյուսակ 35. Հայկական SS ոլորտի զարգացմանը խոչընդոտող գործոններ

SS ոլորտի զարգացմանը խոչընդոտող գործոններ		Տոկոս*
1	Մասնագետների ոչ բավարար որակավորվածություն(բարձրակարգ մասնագետների պակաս)	25.0
2	Ինտերնետային կապի, հեռահաղորդակցության ցածր որակ	17.3
3	Ինտերնետային կապի, հեռահաղորդակցության բարձր գներ	13.5
4	Օրենսդրության առկա թերությունները, հակասությունները	13.5
5	SS ոլորտը կարգավորող հատուկ օրենքների բացակայություն	5.8
6	Պետական աջակցության ոչ ցանկալի (բավարար) մակարդակ	11.5
7	Հարկային օրենսդրության անկատարություն	13.5
8	Հարկային և մաքսային մարմինների կողմից իրավական ակտերի կամայական մեկնաբանություններ	13.5

⁴⁶ Ի դեպ, ներկայումս հեռահաղորդակցության ոլորտի մեկ այլ հատվածում այդ մեծաշնորհն արդեն վերացված է, մասնավորապես գործում է GSM կապի երկրորդ օպերատորը:

SS ոլորտի զարգացմանը խոչընդոտող գործոններ		Տոկոս*
9	Ներքին շուկայի սահմանափակություն	11.5
10	Բուհերի շրջանավարտների ցածր մասնագիտական մակարդակ	7.7
11	Ֆինանսների և այլ միջոցների սակավություն	5.8
12	ՀՀ արտարժույթի անկանխատեսելի տատանումներ	5.8
13	Ներդրումների ցածր մակարդակ	5.8
14	SS զարգացման համաշխարհային միտումների մասին թույլ իմացություն և տեղեկատվության պակաս	3.8
15	Կապի, հեռահաղորդակցության մենաշնորհ	7.7
16	Գործող կազմակերպությունների փոքր չափերը, թուլությունը	1.9
17	Դրսի հետ կապի բացակայություն	1.9
18	Հարկերի հետ ստացման դժվարություն	1.9
19	Գրասենյակի վարձակալման բարձր վճարներ	1.9
20	Դժվարանում են պատասխանել	1.9

* Տվյալ խոչընդոտող գործոնը նշած SSԿ-ների թվի հարաբերությունը SSԿ-ների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ:

IV.2. Համագործակցության հնարավորություններ և զարգացման տեսակետներ

Համագործակցության դաշտի մասին

Հարցման տվյալները ցույց են տալիս, որ SSԿ-ները գիտակցում և ընդունում են համագործակցության և համաձայնեցված գործողությունների կարևորությունը ոլորտի հետագա զարգացման հարցում: Այդուհանդերձ, չնայած SS ոլորտում բավական բարձր է համագործակցության մակարդակը, SSԿ-ները համարում են, որ համագործակցության հետագա ընդլայնման անհրաժեշտություն կա և պատրաստակամ են այդ անելու: Ընդ որում՝ խոսքը գնում է ոչ միայն ներճյուղային, այլ նաև միջճյուղային ու միջազգային համագործակցության, մասնավոր-պետություն համագործակցության և օժանդակ այլ կազմակերպությունների հետ համագործակցության մասին:

Ուսումնասիրվել են SS ոլորտում համագործակցության մի քանի ձևեր. տեղական SSԿ-ների միջև, տեղական և օտարերկրյա SSԿ-ների միջև, SSԿ-ների և այլ ճյուղերի կազմակերպությունների միջև (Աղյուսակ 36-ից Աղյուսակ 40): Տեղական SSԿ-ների

միջև համագործակցությունը առավելապես կենտրոնանում է սարքերի համատեղ առքուվաճառքի, քվեորսության (լոբինգի), ինտերնետային կապի ու ծառայությունների գնման ու վաճառքի վրա: Տեղական և օտարերկրյա ՏՏԿ-ները մեծամասամբ համագործակցում են ծրագրերի և ծրագրակազմերի համատեղ մշակման կամ դրանց առքուվաճառքի, տեղական շուկայում օտարերկրյա ՏՏԿ-ների ներկայացուցչությունն ապահովելու, ինչպես նաև սարքերի, ծառայությունների ու ծրագրակազմերի առքուվաճառքի հարցերում: ՏՏԿ-ների և կրթական ու գիտահետազոտական հիմնարկների միջև համագործակցությունը գլխավորապես ուղղված է ՏՏ մասնագետների պատրաստմանն ու որակավորման բարձրացմանը (համատեղ դասընթացներ ու կրթական ծրագրեր, ուսումնավարժանք ու վերապատրաստում, սեմինարներ ու հավաքներ): ՏՏԿ-ները գործուն համագործակցության եզրեր ունեն նաև միջազգային կազմակերպությունների հետ: Այդ համագործակցությունն ընդգրկում է ՏՏԿ-ների մասնակցությունը զանազան ծրագրերում, որոնցում առկա են տեղեկատվական տեխնոլոգիաներին ուղղակիորեն կամ անուղղակիորեն առնչվող բաղադրիչներ, խորհրդատվություն ու ծառայությունների մատուցում միջազգային կազմակերպություններին:

Տեղական ՏՏԿ-ների միջև համագործակցությունն ըստ հարցման արդյունքների արտահայտվել է հետևյալով.

Աղյուսակ 36. Համագործակցություն տեղական ՏՏԿ-ների միջև⁴⁷

Համագործակցության ոլորտ կամ ձև		Տոկոս *
1	Համատեղ քվեորսություն (լոբինգ) կամ շահերի պաշտպանություն համապատասխան պետական ատյաններում	12.5
2	Ծրագրերի և ծրագրակազմերի համատեղ մշակում	6.3
3	Սարքերի ու սարքավորումների առք ու վաճառք	34.4
4	Համատեղ ցուցահանդեսների կազմակերպում	3.1
5	Համագործակցություն Windows-ի կայացման խնդրին առնչվող ծրագրերի իրականացման հարցում	3.1
6	Ինտերնետում ծառայությունների մատուցում	6.3
7	Ինտերնետային կապի համատեղ գնում	12.5
8	Հեռահաղորդակցման ծառայությունների մատուցում	9.4

⁴⁷Տեղին է նշել, որ հարցմանը մասնակցած ՏՏԿ-ները որոշ դեպքերում նույնականացրել են համագործակցությունը՝ արտադրանքների կամ ծառայությունների առուվաճառքի հետ (արտադրող-արտադրող կամ արտադրող-սպառող առևտրային հարաբերությունների հետ):

Համագործակցության ոլորտ կամ ձև		Տոկոս* *
9	Պատվերների փոխանակում	6.3
10	Ինտերնետային կապի և համակարգչային տեխնիկայի մատակարարում	3.1
11	Հոստինգի (hosting) առուվաճառք	3.1

*Տվյալ համագործակցության ձևը նշած ՏՏԿ-ների թվի հարաբերությունը տեղական ՏՏԿ-ների հետ համագործակցող ՏՏԿ-ների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ

Տեղական և օտարերկրյա ՏՏԿ-ների միջև համագործակցությունն ըստ հարցման արդյունքների արտահայտվել է հետևյալ կերպ.

Աղյուսակ 37. Համագործակցություն տեղական և օտարերկրյա ՏՏԿ-ների միջև

Համագործակցության ոլորտ կամ ձև		Տոկոս* *
1	Սարքավորումների ներկրում և վաճառք	6.4
2	Սարքավորումների, ծառայությունների, ծրագրերի ու ծրագրակազմի գնում	21.3
3	Ծրագրերի ու ծրագրակազմերի մշակում	17.0
4	Ալյանսի անդամ, պաշտոնական գործընկեր	6.4
5	Պլաստիկ քարտերի համակարգի սպասարկում	2.1
6	Տեղական շուկայում ներկայացուցչության ապահովում (միջնորդներ, քաշխողներ, ծառայությունների մատուցման կենտրոններ)	21.3
7	Ինտերնետային կապի համատեղ գնում	4.3
8	Հաստոցների ծրագրավորում	2.1
9	Բանկային ծառայությունների ավտոմատացում	2.1
10	Արբանյակային համակարգերի ստեղծում և ծառայությունների մատուցում	4.3
11	Դոմեյնի (domain) և հոստինգի (hosting) առք ու վաճառք	8.5
12	Պատվերների մատակարարում	2.1
13	Անլար ցանցերի ապահովում	2.1

* Տվյալ համագործակցության ձևը նշած ՏՏԿ-ների թվի հարաբերությունը օտարերկրյա ՏՏԿ-ների հետ համագործակցող ՏՏԿ-ների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ

ՏՏ և այլ ոլորտի կազմակերպությունների միջև համագործակցությունն ըստ հարցման արդյունքների արտահայտվել է հետևյալով.

Աղյուսակ 38. Համագործակցություն SSԿ-ների և այլ ճյուղերի միջև

Համագործակցության ոլորտ կամ ձև		Տոկոս*
1	Ծրագրերի (software) գրում, մշակում	17.1
2	Հեղինակային իրավունքների օրենքի, ԱԱՀ-ի ետ վերադարձման ընթացակարգերի վերաբերյալ lobbng	2.4
3	Հեռուստահովակների, գովազդի պատվերների կատարում	19.5
4	Պլաստիկ քարտերի համակարգի սպասարկում	7.3
5	Տեխնիկական և խորհրդատվական սպասարկում, օգնություն	7.3
6	Վեբ-կայքերի ստեղծում և սպասարկում	12.2
7	Պատվերների մատակարարում	2.4
8	Փոխադարձ ծառայությունների մատուցում	2.4
9	Համակարգչային դիզայնի պատվերների իրականացում,	2.4
10	Առդիտորական ծառայություններից օգտվելը	2.4
11	Տպագրական ծառայությունների պատվիրում, հայտարարությունների տպագրում	4.9
12	Վիճակագրական մեթոդների կիրառմամբ վերլուծության ծրագրերի տեղադրում և սպասարկում	9.8
13	Գովազդային հոլովակների պատրաստում	9.8

* Տվյալ համագործակցության ձևը նշած SSԿ-ների թվի հարաբերությունը այլ ճյուղերի կազմակերպությունների հետ համագործակցող SSԿ-ների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ

Կրթական և գիտահետազոտական հաստատությունների միջև համագործակցությունն ըստ հարցման արդյունքների արտահայտվել է հետևյալով.

Աղյուսակ 39. Համագործակցություն կրթական ու գիտահետազոտական հաստատությունների հետ

Համագործակցության ոլորտ կամ ձև		Տոկոս*
1	Ուսանողների վերապատրաստում՝ հետազայում ընդգրկելով կազմակերպության գործունեության մեջ	17.6
2	Համատեղ գիտատեխնիկական հետազոտություններ, փոխադարձ խորհրդատվական ծառայություններ, փորձի փոխանակում, գիտական հոդվածների հրատարակում, կոնֆերանսներ	14.7
3	Աշխատակազմի վերապատրաստում (պատրաստում)	8.8
4	Ցանցակայքի պատրաստում և սպասարկում	2.9
5	Մեմբերների կազմակերպում, ուսանողներին կազմակերպության աշխատանքների հետ ծանոթացում	5.9
6	Մարքերի, սարքավորումների մատակարարում	14.7
7	Ինտերնետային կապի վաճառք	2.9
8	Դասավանդում բուհերում	11.8
9	Համակարգչային գրաֆիկայի բաժնի զարգացում	2.9
10	Արբանյակային համակարգի ստեղծում և շահագործում	2.9
11	Պատկերանիշերի (logo) և տպագիր մամուլի տրամադրում	2.9
12	Մասնագետների ապահովում	11.8

* Տվյալ համագործակցության ձևը նշած SSԿ-ների թվի հարաբերությունը կրթական ու գիտահետազոտական հաստատությունների հետ համագործակցող SSԿ-ների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ

ՏՏԿ-ների և միջազգային կազմակերպությունների միջև համագործակցությունն ըստ հարցման արդյունքների արտահայտվել է հետևյալով.

Աղյուսակ 40. Համագործակցություն միջազգային կազմակերպությունների հետ

Համագործակցության ոլորտ կամ ձև		Տոկոս*
1	Մասնակցություն Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի՝ ՎՋԵԴ (EBRD), ծրագրի շրջանակներում խորհրդատվական և դրամաշնորհային ծրագրերին	10.3
2	Համակարգչային տեխնիկայի և ծառայությունների մատակարարում և խորհրդատվություն	27.6
3	Բազմամիջոցների (բազմամիջավայր), սեղմապնակների (ՍՊ) պատրաստում	17.2
4	Ցանցակայքերի ստեղծում և սպասարկում	3.4
5	Պետական սահմանին կառավարման համակարգերի համատեղ ներդրում	3.4
6	Արբանյակային համակարգի ստեղծում և շահագործում	3.4
7	Տեխնիկական աջակցություն սոցիալական ոլորտի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրմանն ու մշակմանը	10.3
8	Շտեմարանների կառուցում և սպասարկում	3.4

* Տվյալ համագործակցության ձևը նշած ՏՏԿ-ների թվի հարաբերությունը միջազգային կազմակերպությունների հետ համագործակցող ՏՏԿ-ների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ

ՏՏԿ-ների և պրոֆեսիոնալ միությունների, աջակցող կառույցների միջև համագործակցությունն ըստ հարցման արդյունքների արտահայտվել է հետևյալով.

Ինչպես երևում է Աղյուսակ 41-ից, ինչպես ճանաչվածության, այնպես էլ համագործակցության լայնության առումով առաջին տեղում է Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամը (ՉԻՀ-ը), որին ճանաչում է ՏՏԿ-ների 94.2 տոկոսը և որի հետ համագործակցել է ՏՏԿ-ների մոտ 60 տոկոսը:

Մեծ ճանաչում ունեցող հաջորդ կազմակերպություններն են (ըստ հերթականության) Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միությունը (ԻՏՁՄ կամ UITE՝ անգլերեն), Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհուրդը (ՏՏՁԱԽ), Հայաստանի ինտերնետային միությունն ու «Էլեկտրոնային Հայաստան» հիմնադրամը:

Ըստ փորձագետների՝ վերջին տարիներին համագործակցության դրական տեղաշարժին նպաստել է ԻՏՁՄ-ն՝ աշխատելով ինչպես ՏՏԿ-ների միջև համագործակցության աշխուժացման ուղղությամբ, այնպես էլ ՉԻՀ-ի և ՏՏՁԱԽ-ի հետ հորիզոնական համագործակցության ուղղությամբ: ՏՏՁԱԽ-ի հետ

համագործակցությունն առայժմ չի համարվել բավարար արդյունավետ՝ աշխատանքային անհրաժեշտ պրոցեդուրալ մեխանիզմների գործարկված չլինելու պատճառով: Համարվում է, որ «գործընկերական մթնոլորտի» հետագա բարելավման համար կարևոր է ոչ այնքան և ոչ թե աջակցող կառույցների թիվը, այլ դրանց գործառույթների հստակեցումը, դրանց միջև կանոնակարգված հարաբերությունների հաստատումն ու համագործակցության ընդլայնումը:

Աղյուսակ 41. SS ոլորտի օժանդակող կազմակերպությունների մասին իմացությունն ու դրանց հետ համագործակցությունը

Օժանդակող կազմակերպություն		Ճանաչում են	Համագործակցել են
1	ՉԻՀ - Չեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ	94.2	55.8
2	SSՁԱԽ - Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհուրդ	64.5	34.6
3	Հայաստանի ինտերնետային միություն - Internet Society of Armenia	50	13.5
4	ԻՏՁՄ – Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն (UITE)	71.2	34.6
5	«Էլեկտրոնային Հայաստան» հիմնադրամ	30.8	9.6

ՉԻՀ մասին հավաքագրած տեղեկատվությունը ցույց է տալիս, որ SSԿ-ների և ՉԻՀ-ի միջև առավել համագործակցական միջոցառումներ են հանդիսացել վերապատրաստման դասընթացները, և SSԿ-ների երկու երրորդի կարծիքով այն կոնկրետ դերակատարում ունի ոլորտի զարգացման համար: Նրանից ակնկալում են վերապատրաստման հետագա ջանքեր և ներդրումների հարցում օժանդակություն⁴⁸:

Փորձագիտական հարցազրույցների ընթացքում ՉԻՀ-ի նկատմամբ հնչած ակնկալիքներում հաճախ խոսք էր գնում միջազգային շուկաներում հայկական SSԿ-ների վարկանիշի բարձրացման ու ճանաչելիության մեծացման մասին: Այդ ուղղությամբ ՉԻՀ-ն արդեն որոշ քայլեր կատարել է, որոնք դրական են գնահատվում փորձագետների կողմից (մասնավորապես, Կանադայում ներկայացուցչի ապահովումը) և որոնք, նրանց կարծիքով, հետագա ընդլայնման ու խորացման կարիք ունեն:

SSՁԱԽ-ի հետ համագործակցության և դրա դերի մասին խոսելիս փորձագետները նշում են դրա նշանակությունը: Միաժամանակ նշվում է, որ պետության կողմից SS ոլորտը գերակա ուղղություն հայտարարած լինելու պայմաններում իրենք արդեն իսկ կցանկանային տեսնել այդ կառույցի ավելի էական ներդրում ոլորտի զարգացման

⁴⁸ ՉԻՀ –ի վերաբերյալ ամբողջ և ավելի մանրամասն տեղեկատվությունը, որ ձեռք է բերվել հարցման ժամանակ, ներկայացվում է ՀԱՎԵԼՎԱԾ 4-ում:

հարցում: Նշվում է հատկապես լուրջ ներդրման ակնկալիքը ներքին շուկայում բարենպաստ պայմաններ ստեղծելու գործում: Պետությունից սպասվող ներդրման կան գործողության առումով նշվում է, մասնավորապես, որ պետությունը կարող է քաշող ուժի դեր կատարել՝ հենց ինքը SS ծառայությունների սպառող դառնալով (օր.՝ էլեկտրոնային կառավարություն և էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրմամբ): Պետության աջակցությունն ակնկալվում է նաև այնպիսի խնդրահարույց հարցերի կարգավորման հարցում, ինչպիսիք են. վարչարարական բնույթի խնդիրները (նախ և առաջ հարկային ու մաքսային), հեռահաղորդակցության և կապի բարելավման խնդիրները: Հատկապես շեշտվում է պետության դերը SS ոլորտի փոքր և միջին ձեռնարկությունների անհրաժեշտ աջակցություն կազմակերպելու հարցում:

SSԿ-ների զարգացման ծրագրեր

SSԿ-ների՝ զարգացման ծրագրերի մասին տված պատասխաններից պարզվում է, որ SSԿ-ներն իրենց ջանքերը պատրաստվում են ներդնել հիմնականում երեք ուղղություններով՝ արտադրական ծավալների ընդլայնում (48.1 տոկոս), նոր արտադրատեսակների զարգացում (36.5 տոկոս), միջազգային շուկա ներթափանցում և դիրքերի ամրապնդում (համապատասխանաբար 40.4 և 19.2 տոկոս):

Աղյուսակ 42. SSԿ-ների զարգացման հեռանկարներ ու ծրագրեր

Չարգացածան հեռանկարներ ու ծրագրեր		Տոկոս*
1	Արտադրական ծավալների հետագա ընդլայնում	48.1
2	Նոր արտադրատեսակների և (կամ) ծառայությունների ստեղծում	36.5
3	Միջազգային շուկա ներթափանցում	40.4
4	Միջազգային շուկայում ձեռք բերած դիրքի ամրապնդում	19.2
5	Միաձուլում SS ոլորտի մի քանի փոքր և (կամ) միջին կազմակերպությունների հետ	3.8
6	Այսօր ավելի շուտ մտածում ենք ներքին շուկայում գոյատևելու մասին	5.8
7	Դժվարանում են պատասխանել	5.8

* Տվյալ հեռանկարը կամ ծրագրերը նշած SSԿ-ների թվի հարաբերությունը SSԿ-ների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ :

Նոր արտադրատեսակների և ծառայությունների զարգացման վերաբերյալ SSԿ-ների մտադրությունները ամփոփված են Աղյուսակ 43-ում:

Աղյուսակ 43. ՏՏԿ-ների՝ նոր արտադրատեսակների և ծառայությունների զարգացման մտադրություններ

Նոր արտադրատեսակներ կամ ծառայություններ		Տոկոս*
1	Համակարգչային ծրագրեր ու ծրագրակազմեր	10.5
2	Համակարգերի միահավաքիչներ	5.3
3	Խորհրդատվական և ինտերնետային ծառայություններ	10.5
4	Բազմամիջոցներ, սեղմապնակներ, էլ-ուսուցում, էլ-առևտուր	5.3
5	Միկրոսխեմաների նախագծում	5.3
6	Հին շարժանկարների գունավորում և վերականգնում	5.3
7	Անլար կապ	5.3
8	Մասնահարմարեցված ծրագրակազմերի մշակում	5.3
9	Հեռահաղորդակցության զարգացում	5.3
10	Անշարժ գույքի՝ ինտերնետի միջոցով միջազգային սպասարկում	5.3
11	Պլաստիկ քարտեր	5.3
12	Բարձր տեխնոլոգիաներ/էներգետիկա	5.3
13	Գործարար կառավարում տեղեկատվական համակարգերի օգտագործմամբ	5.3
14	Գծվարանում է պատասխանել	21.1

* Տվյալ արտադրատեսակը կամ ծառայությունը նշած ՏՏԿ-ների թվի հարաբերությունը նոր արտադրատեսակ կամ ծառայություն ստեղծելու մտադրություն հայտնած ՏՏԿ-ների թվին՝ տոկոսային արտահայտությամբ :

Խնդիրները, նկատառումներ և առաջարկներ⁴⁹

Խնդիր 4.1 Համագործակցության ֆորմատների անհատակություն

Նկատառումներ.

Հատկապես կարևորվել է համագործակցությունը ՏՏ ոլորտի մասնակիցների միջև. ՏՏ կազմակերպություններ, միություններ և այլ կառույցներ, պետական տարբեր մարմիններ, ԲՈՒՀ-եր և գիտահետազոտական հիմնարկներ (միջազգային պրոֆեսիոնալ ֆորումներ): Այդ իմաստով, մինչ այժմ կառավարության հետ համագործակցության արդյունքը եղել է ՉԻՀ-ի ստեղծումը, ուժեղացող պրոֆեսիոնալ միության և նաև ՏՏՁԱԽ-ի ձևավորումը: Ոլորտը ներկայումս ցուցաբերում է էական

⁴⁹ Նյութի սույն բաժնում (ինչպես և ամբողջ նյութում), նպատակ չի եղել առաջարկելու համակարգային նոր մոտեցումներ ոլորտի հետագա առաջընթացի համար, այլ լոկ գործարար և կարգավորիչ դաշտի բարելավման առաջարկներ: Այնուամենայնիվ տեղին ենք համարում այստեղ ներկայացնել հարցման և կլոր սեղանի ժամանակ հնչած գաղափարներն, որոշակի սեփական լրացումներով, վերլուծությամբ և ամփոփումով՝ չհավակնելով և նպատակ չունենալով համարել դրանք ամբողջական և կամ վերջնական:

աճ: Ճիշտ ժամանակն է որպեսզի մշակվի SS ոլորտի զարգացման համապարփակ հայեցակարգ՝ ներկայիս աճը հետևողականորեն պահպանելու և արագացնելու համար:

Նպատակահարմար է առավել սերտ աշխատանք իրականացնել անմիջականորեն ՀՀ վարչապետի միջնորդությամբ՝ ձևավորելով նորովի ֆորում, հարթակի վրա ունենալով ԻՏՁՄ –ն, ՏՏՁԱԽ-ը, ինչպես նաև ՁԻՀ-ը և այլ շահագրգիռ անձանց: Այդ հարթակի վրա պետք է հստակեցվեն յուրաքանչյուրի անելիքը, ապա պարբերաբար իրականացվեն քննարկումներ ոլորտի խնդրահարույց հարցերի շուրջ: Վերջինս կնպաստի առավել հստակ և համոզիչ ներկայացնել խնդիրները ՀՀ վարչապետին, ՀՀ կառավարությանը և, դրանով իսկ կարողանալ հասնել կոնկրետ և էական արդյունքների:

Հարթակում հասցեական քննարկումների և իրատեսական առաջարկությունների ձևավորման համար կարևոր է ճիշտ գնահատել SS ոլորտի ներուժը: Դա տեսնելով է, որ հասարակությունը կհամաձայնվի տրամադրել որոշ արտոնություններ (ինչու չէ նաև հարկային) նրա զարգացման համար:

SS ոլորտում աշխարհի առաջավոր երկրների փորձը ցույց է տալիս, որ նրանց զարգացման մեջ մեծ դեր է ունեցել կառավարության աջակցությունը : Օրինակ՝ Հնդկաստանում կառավարությունը, միասնական ֆունկցիոնալ և ռեզիոնալ հայեցակարգի ներքո, իրականացրել է միառժամանակյա մի քանի միջոցառումներ. ստեղծել է Software Technopark-եր, պետական սուբսիդիաներ է տրամադրել տեխնիկական ուսուցմանը, սահմանել ֆինանսավորման շահավետ պայմաններ, որը խթանել է հնդկական SS ոլորտը:

Խնդիր 4.2 կոնկրետ հարկային կամ այլ արտոնություն սահմանած չլինելը, որպես «գերակա» ճյուղի արտահայտության նշան

Նկատառումներ.

ՀՀ կառավարության ծրագրում բացառվում է նոր հարկային արտոնությունների քաղաքականությունը: Փորձագետներն իրենց դիտարկումներում այնուամենայնիվ նշում են, որ իրական կյանքում գոյություն ունեն որոշակի ռելիեֆներ: Մասնավորապես, իր ինդուստրիալ քաղաքականության մեջ կառավարությունը սահմանել է «գերակա» ճյուղեր, որոնցից է ՏՏ–ն: Գիտության ոլորտում ևս սովորաբար սահմանվում են գերակայություններ: Այդ իմաստով ոլորտի փորձագետներին հասկանալի չի եղել, թե

ն՞րն է SS այդ «գերակայության» կոնկրետ արտահայտումը, եթե չկա միտում արտոնություններով ու այլ գործիքներով առավել զարգացնել ճյուղը:

1) *Իռլանդիայի կառավարությունը SS ոլորտի զարգացման նպատակով որդեգրել էր “industrialization by invitation” քաղաքականությունը, որի նպատակն էր ֆինանսական և հարկային արտոնությունների միջոցով ներգրավել առավելագույնս օտարերկրյա ներդրողներին: Այսպես օրինակ՝ տրվում էին անվերադարձ դրամաշնորհներ հողի, շենքերի ու շինությունների ծախսերի հատուցման համար: Արտահանման դեպքում կիրառվում էր ազատում կորպորատիվ հարկերից:*

University of California, Irvine University of California
Irvine 1999

2) *Ռուսաստանի Դաշնության կառավարությունը պլանավորում է և համապատասխան նախագիծ է ներկայացրել Պետական դրամա, սահմանելու համար հատուկ հարկային ռեժիմ SS և բարձր տեխնոլոգիաների ոլորտի համար: Մասնավորապես, նախատեսվում է իջեցնել մինչև 14 տոկոս միասնական սոցիալական հարկի դրույքաչափը, իսկ ծառայությունների և արտադրանքի արտահանումով զբաղվող SS կազմակերպությունների համար սահմանել հաստատագրված վճարներ, որ կփոխարինեն շահութահարկին և ավելացված արժեքի հարկին: Այդպիսի նախաձեռնությունից առաջ կատարված հետազոտությունը ցույց էր տվել, որ այս ոլորտի արտադրանքի կառուցվածքում ավելացված արժեքը, այսինքն աշխատավարձին ու սոցալ հատկացումներին բաժին ընկնող մասը SS ոլորտում կազմել էր 80 տոկոսից ավել:*

Rus-Soft Outsourcing Russia

3) *Համաձայն 2005 թ-ի նոյեմբերի 15, Թունիայան գազաթնաժողովի օրակարգի (WSIS), քաջալերվում է բոլոր կառավարություններին տրամադրելու համապատասխան արտոնություններ SS ոլորտին և օգտագործել այն, որպես ազգային զարգացման ռազմավարություն:*

Առաջարկություն

1) Էկոնոմետրիկական հետազոտություն.

Քանի որ հանրությունը և տնտեսությունը գործում են ռեսուրսների մշտական սակավության պայմաններում, Էական փաստարկներ են պետք SS ոլորտի համար արտոնություններ սահմանելու «մարտահրավեր» ներկայացնելիս: Այդ իսկ նպատակով, SS-ի ներուժը և տնտեսության, աղքատության կրճատման վրա

ազդեցության գնահատելու համար, փորձագետները տեղին են համարում անցկացնել էկոնոմետրիկական հետազոտություն, որը, մոդելավորման միջոցով ցույց կտա համապատասխան աջակցման ծրագրեր և արտոնությունների տրամադրելու դեպքում միջնաժամկետ և երկարաժամկետ հատվածում հնարավոր արդյունքը:

2) *SS խարտիա*

SS ոլորտը պետք է ցուցաբերի պատրաստակամություն՝ «արդարացնելու» համար իր հնարավոր լրացուցիչ արտոնությունները: Հասարակությունը կպահանջի երաշխիքներ: Այդ նպատակով առաջարկվում է կիրառել հավասարակշռված մոտեցում, կնքել յուրօրինակ համազգային կոնվենցիա՝ «SS ոլորտի արտոնությունների խարտիա» պայմանական անվանումով: Այդպիսի կոնվենցիային⁵⁰ միացող SSԿ-ն իրավունք է ստանում օգտվել արտոնություններից, սակայն և համաձայնվում և պարտավորվում է պահպանել բավականին բարձր պահանջների ստանդարտներ:

Այսպիսով, առաջարկվում է.

Ա) ոլորտին տալ լրացուցիչ ու շատ կոնկրետ արտոնություններ, սակայն և դրա դիմաց.

Բ) SSԿ-ից ստանալ բացառիկ համագործակցություն պետության հետ. հարկային և վիճակագրական կարգապահություն, ֆինանսական հաշվետվությունների բարձր արժանահավատություն, բոլոր կարգավորական պահանջների բացառիկ ուշադիր կատարում:

Այդ հաշվեկշռի կողմերը կարող են լինել այսպիսին.

Ա) արտոնությունների, այսինքն ակտիվների մասի կառուցվածքը.

1) տես սույն նյութի մինչ այժմ շարադրված մասերում՝ ոլորտի հետագա զարգացմանը չնպաստող խնդիրների գծով կոնկրետ առաջարկությունները,

2) SSԿ-ների համար շահութահարկի արտոնության սահմանում շահույթի ռեինվեստիցիայի, ինչպես նաև արտադրանքի և հատկապես ծառայությունների արտահանման դեպքում,

3) SS ոլորտի մտավոր սեփականության գծով ստացված եկամտի (ռոյալտի) ազատում եկամտահարկից և շահութահարկից:

Բ) կառուցողական պարտավորությունների (երաշխիքային փաթեթի) կառուցվածքը.

⁵⁰ Իրավական ֆորմատը պետք է սահմանվի համապատասխան մասնագետների օժանդակությամբ:

- 1) CMMI որակավորման հաջորդական մակարդակների ապահովում՝ որոշակի ժամանակացույցով
- 2) ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ամեն տարի
- 3) որակավորված (կառավարության կամ նրա կողմից հավատարմագրված պրոֆեսիոնալ հաշվապահական միության կողմից) գլխավոր հաշվապահի կողմից հարկային հաշվետվությունների պատրաստած լինելը կամ ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության կողմից հավատարմագրված խորհրդատվական ընկերության կողմից հարկային հաշվետվությունները պատրաստած լինելը
- 4) ՏՏԿ-ն պետք է հիմնականում կառավարվի Հայաստանից՝ սահմանափակ օգտվելով օֆշորային սխեմաներից, արտասահմանյան կառավարման ծառայություններից և կոնցեսիաներից
- 5) ՏՏԿ-ն պետք է լինի գրանցված «ՏՏ խարտիայի ռեեստրում»⁵¹, որ վարվելու է ԻՏՁՄ կողմից
- 6) ՏՏԿ-ն չպետք է կուտակի հարկային էական ապառքներ
- 7) ՏՏԿ-ն չպետք է ունենա էական խախտումներ այլ կարգավորական օրենսդրության պահպանման հարցում. թույլտվությունների համակարգ, հավաստագրում, լիցենզիա, ընտրանքի մեջ ընդգրկված լինելու պարագայում՝ վիճակագրական հաշվետվությունների ճշգրիտ և առանց ուշացումների ներկայացում, մրցակցության պաշտպանություն, աշխատանքային օրենսգիրք, արտաքին տնտեսական գործունեության սակագնային և ոչ սակագնային կարգավորումներ, տարադրամային և կանխիկի, փողերի լվացման դեմ պայքարի օրենսդրություն և այլն:

Խնդիր 4.3. ՏՏԿ-ների նույնականացման և ունիֆիկացված տերմինոլոգիայի խնդիր

Նկատառումներ.

Սույն նյութում հնչեցին բազմաթիվ առաջարկություններ, որոնք վերաբերվում են ՏՏ ոլորտին: Այդ նպատակով հարկավոր է հստակ սահմանել այդ ոլորտը: Քանի որ ՏՏԿ-ներն են հավակնելու օգտվել արտոնություններից, ապա նրանք ևս հեշտ նույնականացվելու կարիք են ունենալու: Դրա համար կարիք է լինելու ունենալ ՏՏԿ-ների մշտապես թարմացվող ցանկ՝ նրանց բոլոր անհրաժեշտ տվյալներով:

⁵¹ Դրա մասին տես հաջորդ՝ «ունիֆիկացված տերմինոլոգիայի խնդիր» հատվածում

SSԿ-ները գործ են ունենալու ոչ միայն ճանաչելի լինելու, սահմանման խնդրի հետ, այլ նաև տարբեր լեզուներով հնչող մասնագիտական տերմիններն իրար հետ կապակցելու, տարբեր համակարգեր իրար հետ համաբերելու խնդրի հետ: Ահա մի քանի ցանկալի կապակցման համակարգեր.

- գործունեության տեսակների դասակարգիչ
- ըստ գործունեության տեսակների արտադրանքի դասակարգիչ
- տարբեր ապրանքային դասակարգիչների միջև կապակցումներ. ազգային, ռեգիոնալ, միջազգային
- ՀՀ ԱՎԾ վիճակագրական հաշվետվության ձևի մեջ առկա սահմանում
- լիցենզավորման, հավաստագրման, սերտիֆիկացման, թույլտվությունների օրենսդրության մեջ առկա տերմիններ:

Այդ իմաստով սույն նյութի պատրաստման համար հիմք ծառայած հարցում-հետազոտությամբ ստացված տեղեկատվությունը ևս օգտակար կարող է լինել խնդիրը պատկերացնելու համար, տես, մասնավորապես.

- Աղյուսակ 2 SSԿ-ների գործունեության հիմնական տեսակային խմբերը,
- Աղյուսակ 21 SSԿ-ների կողմից ներկրվող ապրանքներ,
- Աղյուսակ 24 Արտահանվող արտադրանք (ծառայություններ),
- ՀԱՎԵԼՎԱԾ 1 SSԿ-ների արտադրանքներն ու ծառայություններն ըստ բնագավառների:

Առաջարկություններ

1. Ստեղծել, գործարկել ու վարել SSԿ-ների ռեեստր: Օգտագործվելու է դրա կառուցման նույն մեթոդաբանությունը, ինչ որ կիրառում է ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն իր վիճակագրական դիտարկումների նախարհնորանքային հիմնական գործիքի՝ «Բիզնես ռեգիստր»-ի համար,

2. Ստեղծել մի Բառարան-ուղեցույց, որն իր մեջ կպարունակի տարատեսակ սահմանումներ, քաղվածքներ դասակարգիչներից, անցումային աղյուսակներ մի դասակարգչից մյուսը, թարգմանություններ հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով և այլն:

Առանց այդպիսի Ռ-եեստրի և Բառարանի սույն նյութում բերված առաջարկությունների մեծ մասը կարող է մերժվել կամ էլ հանդիպել կիրառման լուրջ վարչարարական դժվարությունների:

Խնդիր 4.4. SSԿ-ների միջազգային ինտեգրացման հարցեր

Նկատառումներ.

Ընդհանուր մարդկային և երկրի տնտեսական զարգացման համար անհրաժեշտ է հոգալ ինֆորմացիոն հասարակության ստեղծման մասին: Վեջինիս կարևորությունը հատկանշվում է՝ դիտարկելով համաշխարհային տեխնոլոգիական զարգացումները և դրան ինտեգրվելու համար անհրաժեշտ ներքին շուկայի ստեղծումը: Հիշենք, որ աշխարհը անխուսափելիորեն գլոբալանում է: Հարցման արդյունքները հավաստեցին, որ Հայաստանում գործող օտարերկրյա SSԿ-ների արդյունավետությունն էականորեն բարձր է տեղականներից, և որ նրանք իրենց հետ բերում են նոր պրոֆեսիոնալ և կառավարման մշակույթ:

Իռլանդիայի կառավարությունը առաջնորդվել է խրախուսել, գրավել և արդյունավետ օգտագործել օտարերկրյա ներդրումները գաղափարով և ստեղծել է դրանց համար լայն հնարավորություններ: Այս քաղաքականության շնորհիվ հաջողվել է ներգրավվել Dell ընկերության մեծ ներդրումային փաթեթ, որի արդյունքում ընկերությունը ապահովել է 1 մլրդ. դոլարի արտահանում տարեկան կտրվածքով: Այդ տրանսազգային ընկերությունն իր հեղինակության շնորհիվ միջազգային մասշտաբով, մեծ աջակցություն և առաջընթաց է ապահովել Իռլանդական SS ոլորտի համար:

Հաջորդ հատկանշված նկատառումն այն է, որ ներքին շուկայի կարևոր բաղկացուցիչ մաս կարող է հանդիսանալ հենց ինքը պետությունը: Համարվում է, որ դառնալով SS-ի սպառող, կառավարությունը հնարավորություն կստանա առավելագույնս պատկերացնել SS ոլորտի խնդիրները՝ վարչարարական և օրենսդրական թերացումները լրացնելու համար:

1992-1997թթ –ի ընթացքում դժվարությամբ կարելի էր գտնել SS գործունեությամբ զբաղվող որևէ կազմակերպություն Փանջարի (Մոհալի) տարածաշրջանում: Սկիզբը դրվեց, երբ Հնդկաստանի կառավարությունը իր ֆունկցիաների իրագործման մի մասը տեղափոխեց Մոհալի, աստիճանաբար, սկսած 1989թ–ից: Միաժամանակ հայտարարվեց 10 ամյա հարկային արձակուրդ ծրագրային ապահովման SS տեխնոլոգիաների համար: Մոհալիում 2001-02 թթ-ին 145 ծրագրային ապահովման կազմակերպություններ գրանցվեցին որպես ծրագրային ապահովման SS տեխնոլոգիաներ: Դրանցից 65-ն ակտիվորեն գործում էին:

Առաջարկություն

1. Կառավարությունը ձևավորի նոր առաջարկությունների փաթեթ տրանսագգային խոշոր SS կազմակերպությունների հետ համագործակցության ձևերի մասին:

Կառավարությունն ինքը կարող է պատվիրատու դառնալ այդպիսի մեծ ընկերությանը Հայաստան բերելու համար:

Խնդիր 4.5. ՀՀ մարզերի ներգրավվածության ոչ բավարար մակարդակ Նկատառումներ.

Պետք է նկատել, որ SS ոլորտի և ընդհանրապես հանրապետության տնտեսության զարգացման համար, կարևոր խնդիր է հանդիսանում մարզերի իմաստով, մայրաքաղաքի հետ համեմատ, SS ոլորտի ադեկվատ զարգացումը: Նշենք, որ տեղեկատվական հասարակության և ներքին շուկայի ստեղծումը, ինչպես նաև կադրերի սակավության և շատ այլ խնդիրներ կլինեն անլուծելի, առանց մարզերի SS ոլորտ ներգրավվածության մակարդակի բարձրացման:

Առաջարկություններ

- 1) SSԿ-ներին մարզերում գործելու համար ստեղծել գրավիչ պայմաններ: Մասնավորապես, քննարկել «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի «9. Հեռահաղորդակցության բնագավառ» կետում միաժամանակ Երևան քաղաքում և մարզերում գործելու պարագայում պետական տուրքի տարեկան գումարը ոչ թե 2 մլն. դրամից 3 մլն. դրամ դարձնելու, այլ նույնիսկ մի փոքր նվազեցնելու հնարավորության հարցը,

- 2) Պետական ԲՈՒՋ-երում և հետազոտական կենտրոններում նախատեսել (և /կամ ընդլայնել) խրախուսական միջոցներ, համակարգ՝ մարզերի ուսանողների ներգրավվածությունը ՏՏ ծրագրերին ընդլայնելու համար,
- 3) Մշակել մարզերում տեղեկատվական հասարակության ամրապնդման առանձին հատուկ ծրագիր: Դա իր մեջ պետք է ներառի օրինակ ինտերնետից օգտվելու նոր առիթներ, ակցիաներ, մասնավորապես.
- Էլեկտրոնային եղանակով մրցույթներ կազմակերպել մարզերի միջև. լավագույն երգ, պիես և այլն
 - Մարզերում հանրային նշանակության կազմակերպությունների աշխատանքին օժանդակում. երթուղիների, չվացուցակների և այլ տեղեկատվության տարածում ինտերնետով, ապահովելով դրանց տերմինալների տեղադրում մարզային ավտոկայաններում, օդանավակայաններում, հանգստյան տներում, բանկերի և փոստային բաժանմունքներում:

SSԿ-ների արտադրանքներն ու ծառայությունները ըստ բնագավառների

***(երրորդ սյունակում նշված են տվյալ արտադրանքն արտադրող կամ տվյալ ծառայությունը մատուցող SSԿ-ների հարաբերությունը SSԿ-ների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ)**

Բնագավառ	Արտադրանք և(կամ) ծառայություն	Տոկոս *
Հաշվապահական, դրամատնային ֆինանսական ծառայություններ	1. հաշվապահության ավտոմատացման ծրագրեր	9.6
	2. «1C» հաշվապահական ծրագրի հարմարեցում հայկական շուկային	1.9
	3. Հաշվապահության և առևտրի կառավարման ծրագրեր	3.8
	4. դրամատնային գործունեության ավտոմատացման ծրագրեր	1.9
	5. լուծումներ պլաստիկ քարտերի համար	1.9
Մանրաշղթագծերի (չիփերի) նախագծում և փորձարկում	1. ներկառուցված հիշողության նախագծում	1.9
Համակարգչային գրաֆիկայի բազմամիջոցների պատրաստում	1. բազմամիջոց կամ բազմամիջավայր սեղմապնակների և թվային մեծածավալ սեղմապնակների պատրաստում	11.5
	2. գրքույկների, պատկերամիջերի, ազդերի պատրաստում	3.8
	3. գովազդային, երաժշտական հոլովակների պատրաստում, հեռուստածնավորում	3.8
	4. թերթերի, ամսագրերի ձևավորում	3.8
	5. ISS Presentation	1.9
	6. բազմամիջոց ուսուցողական ծրագրերի մշակում	1.9
	7. ընկերությունների նույնականացման քարտերի և այցեքարտերի ՍՊ պատրաստում	1.9
	8. մոնտաժ, շարժապատկերում	
Մասնահարմարեցված ծրագրերի (ծրագրակազմի) մշակում	1. DM, MD Docsman, CMMS	3.8
	2. կորպորատիվ համակարգեր	1.9
	3. անվտանգության համար ծրագրեր	1.9
	4. ծրագրավորման համակարգեր	1.9
	5. տվյալների հենքեր և կառավարման ծրագրեր	5.8
	6. ինտերնետի ծրագրավորում	1.9
	7. «Smart house» ծրագիր	1.9
	8. «Armorfo» ծրագիր	1.9
	9. հաշվառման ծրագրեր	3.8
Տվյալների հենքերի կառավարման համակարգեր (ՏՀԿՀ)	1. տվյալների շտեմարանների ծրագրեր	5.8
	2. կառավարման ավտոմատացման համակարգեր, արտադրական գործընթացների կառավարման ծրագրեր	9.6
	3. հայ-անգլերեն մեքենայական թարգմանության համակարգ	1.9
	4. գույքագրման և վաճառքի համակարգերի պատրաստում	1.9
Էլ - առևտուր	1. ցանցային խանութ (Web-shop) ծրագրեր, առ գիծ (on-line) խանութների նախագծում	9.6
	2. էլեկտրոնային վճարային համակարգերի պատրաստում	7.7
	3. ԱՐՔԱ (ARCA) քարտերի փոխկապակցիչների (interface) ստեղծում	1.9
Արդյունաբերական (արտադրական) ավտոմատացում	1. «CNC – Computer Numeric Control – national instruments»-ի հիմքի վրա սարքակազմերի (hard) մակարդակում ծրագրերի մշակում	1.9
	2. արտադրության կառավարման ծրագրեր	1.9
	3. հաստոցների համար ծրագրերի պատրաստում	1.9
Ինտերնետային աշխատածրագրեր	1. ինտերնետով զրույցների և հաղորդակցման համար աշխատածրագրերի մշակում Chat, communication applications	3.8
	2. ղեկավար (նավարկման) համակարգեր (Navigation systems)	1.9
	3. ինտերնետային կանխագրով (ԻԿ) հեռախոսակապ (IP phone)	1.9
	4. ինտերնետով բանկային գործարքներ կատարելու համար աշխատածրագրերի (application) պատրաստում	3.8
	5. «JAVA»-ի հիման վրա ծրագրերի և աշխատածրագրերի (application) պատրաստում	5.8
	6. «խելացի» արտապատկերման (ուրվագծման) տեխնոլոգիա	1.9

Բնագավառ	Արտադրանք և(կամ) ծառայություն	Տոկոս *
	8. աշխատածրագրեր ինտերնետի համար	3.8
Ինտերնետային ծառայությունների մատուցում	1. ինտերնետային և (հեռախոսագծային - Dial up, DSL) կապի մատուցում	11.5
	2. արբանյակային ծառայություններ	1.9
SS ծառայություններ ու խորհրդատվություն	1. տեխնիկական և խորհրդատվական սպասարկում	15.4
	2. կազմակերպությունների տեխնիկական, ծրագրային ռազմավարության մշակում	3.8
	3. համակարգչային սարքերի և սարքավորումների վաճառք	3.8
	4. տվյալների գաղտնիության և անվտանգության կազմակերպում	3.8
Տեղեկույթի կառավարման համակարգեր (S43)	1. շտեմարանների և տեղեկույթի հոսքերի կառավարում, տեղեկույթի հոսքերի կազմակերպում, կառավարում	7.7
	2. ձեռնարկությունների կառավարման համակարգեր	5.8
Ցանցային համակարգեր և կապ	1. տեղական ցանցերի (LAN) նախագծում, տեղադրում, շահագործում ու սպասարկում	13.5
	2. ինտերնետով գրույցի «SST» ծրագրեր	1.9
	3. մեծ տարածքի ցանցերի (Wide area network) նախագծման, տեղադրման, շահագործման ու սպասարկման իրականացում	1.9
	4. RND-research, մատչումի հսկողություն	1.9
Ծրագրավորման լեզուներ ու գործիքներ	1. կայքեր պատրաստելու ծրագրավորման գործիքների մշակում	1.9
	2. էլ-առևտրի ապահովման գործիքների մշակում	1.9
	3. «VB, VC++» ծրագրավորման գործիքների կիրառում	1.9
	4. «Windows» աշխատածրագրերի մշակում, «Windows»-ի և «Office»-ի «հայկականացում»	1.9
	5. զեկույցներ կամ հաշվետվություններ նախագծող («Report designer») ծրագրերի մշակում	1.9
Համակարգի միահավաքում	1. Աշխատածրագրերի ստեղծում և դրանց համակցում «Windows»-ի և «LINUX»-ի հետ	1.9
	2. Խորհրդատվության մատուցում	5.8
	3. մեծ տեղական ցանցերի (LAN) շահագործում և սպասարկում	5.8
	4. Եվրոպական մասնաճյուղի համար տարբեր համակարգերի համակցում	1.9
Համակարգային ծրագրակազմ	1. «UNIX»-ի հիման վրա նոր մոդելների ստեղծում	1.9
Կայքերի նախագծում և պատրաստում	1. կայքերի նախագծում, պատրաստում ու սպասարկում	30.8
	2. կայքերի խնամորդություն	3.8
	3. տիրույթների գրանցում (Domain registration)	1.9
	4. էլ-վոստի սպասարկում	1.9
	5. էլ-քարտեր	1.9
Կիսահաղորդչային արտադրություն	1. արդյունավետության բարձրացման ծրագրակազմեր	1.9
Գիտելիքների շտեմարաններ	1. արհեստական բանականության համակարգեր	1.9
Հավաստագրում	1. հեռահաղորդակցման սարքերի և սարքավորումների հավաստագրում	1.9
Հեռահաղորդակցության վերաբերյալ ուսումնասիրություններ	1. հեռահաղորդակցության վերաբերյալ ուսումնասիրություններ	1.9

Տեղեկանք լիցենզավորման, ստանդարտացման և հավաստագրման ՀՀ օրենսդրության վերաբերյալ

Լիցենզավորում

Առևտրային կազմակերպությունները կարող են ունենալ օրենքով չարգելված գործունեության ցանկացած տեսակներ իրականացնելու համար անհրաժեշտ իրավունքներ և կրել քաղաքացիական պարտականություններ:

Այդուհանդերձ, օրենքով սահմանված ցանկում ներառված գործունեության որոշ տեսակներով առևտրային կազմակերպությունները կարող են զբաղվել միայն հատուկ թույլտվության (լիցենզիայի) հիման վրա և դրա առկայությամբ: Ընդ որում հարկ է նշել, որ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ լիցենզավորման ենթակա որոշակի գործունեությամբ կամ ընդհանրապես լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունքի վերապահման մասին դրույթների բացակայությունը չի կարող խոչընդոտ հանդիսանալ լիցենզավորվելու և համապատասխան գործունեություն իրականացնելու համար:

Լիցենզավորման ենթակա գործունեության որևէ մեկ տեսակով զբաղվելը առևտրային կազմակերպություններին չի զրկում գործունեության այլ տեսակներով՝ ներառյալ լիցենզավորման ենթակա, զբաղվելու հնարավորությունից, եթե այդ իրավունքը ուղղակիորեն սահմանափակված չէ առևտրային կազմակերպության կանոնադրությամբ կամ օրենքով: Վերջին դեպքում լիցենզավորման ենթակա գործունեության մեկ կամ սահմանափակ քանակի տեսակներով զբաղվելու կամ այլ գործունեություն չիրականացնելու պահանջը վերաբերում է հատուկ իրավունակության կազմակերպություններին, օրինակ՝ բանկերին, վարկային կազմակերպություններին, ապահովագրական ընկերություններին և այլն: ՏՏ ոլորտի առևտրային կազմակերպությունների համար նման սահմանափակումներ օրենսդրությամբ նախատեսված չեն, իհարկե, հաշվի առնելով, որ ՏՏ ոլորտում գործունեություն իրականացնող ընկերությունները չեն կարող զբաղվել հատուկ իրավունակությամբ բնորոշ գործունեությամբ՝ օրինակ, չեն կարող ապահովագրական գործունեություն իրականացնել:

Հայաստանում լիցենզավորումը իրականացվում է սպառողների շահերը պաշտպանելու, ապրանքների և ծառայությունների որակի բարձրացմանը նպաստելու, անձանց կյանքին, առողջությանը, գույքին, պետության և հասարակության շահերին, բնության, մշակութային ժառանգության պահպանությանն առավել վտանգի սպառնալիքով հղի գործունեության տեսակներով զբաղվողների նկատմամբ հսկողություն իրականացնելու, շուկայական հարաբերությունների կարգավորմանը նպաստելու նպատակով:

Լիցենզավորումը գործընթաց է, որը կապված է լիցենզիաների տրման, դրանց գործողության ժամկետի երկարաձգման, վերաձևակերպման, գործողության կասեցման և դադարեցման հետ:

Հայաստանում իրականացվող լիցենզավորումը վերաբերում է Հայաստանի տարածքում իրականացվող գործունեությանը, և չի կարող վերաբերել Հայաստանի սահմաններից դուրս իրականացվող գործունեությանը:

«Լիցենզավորման Մասին» օրենքը իրավաբանական անձանց ստորաբաժանումների և դրանց լիցենզավորման մասին պայմաններ չի պարունակում: Սակայն, հաշվի առնելով, որ դրանք ինքնուրույն իրավաբանական անձ չեն հանդիսանում և գործում են իրավաբանական անձանց կազմում, ապա իրավաբանական անձանց վերաբերյալ կարգավորումները համապատասխան դեպքերում կիրառելի են նաև դրանց նկատմամբ:

Հայաստանում սահմանված են լիցենզիաների 2 տեսակներ.

1. պարզ ընթացակարգով տրվող լիցենզիաներ և
2. բարդ ընթացակարգով տրվող լիցենզիաներ:

Պարզ ընթացակարգով տրվող լիցենզիաների լիցենզավորման հարաբերությունները կարգավորվում են միայն «Լիցենզավորման Մասին» օրենքով: Պարզ լիցենզիան տրվում է կամ դրա տրամադրումը

մերժվում է օրենքով սահմանված փաստաթղթերը լիցենզավորող մարմնին ներկայացնելուց 3 օրվա ընթացքում:

Բարդ ընթացակարգով տրվող լիցենզիաների լիցենզավորման հարաբերությունները կարգավորվում են ինչպես «Լիցենզավորման մասին» օրենքով, այնպես էլ համապատասխան լիցենզավորման կարգերով (առանձին նորմատիվ իրավական ակտեր): Բարդ լիցենզիաները տրվում են լիցենզավորման կարգերին համապատասխան: Բարդ լիցենզիան տրվում է կամ դրա տրամադրումը մերժվում է օրենքով սահմանված փաստաթղթերը լիցենզավորող մարմնին ներկայացնելուց 30 օրվա ընթացքում, եթե այլ ժամկետ սահմանված չէ որոշակի լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների համար:

Եթե գործունեության լիցենզիան պետք է տրվի բարդ ընթացակարգով, սակայն այդ առթիվ լիցենզավորման առանձին կարգ չի սահմանվել, ապա մինչև համապատասխան կարգի սահմանումը լիցենզիան տրվում է պարզ ընթացակարգով:

Բոլոր դեպքերում, և՛ պարզ, և՛ բարդ լիցենզիայով սահմանվում են որոշակի գործունեության իրականացման պարտադիր պահանջներ կամ պայմաններ, և դրանց պահպանման նկատմամբ իրականացվում է հսկողություն:

Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակները սահմանված են և կարող են սահմանվել բացառապես «Լիցենզավորման մասին» օրենքով՝ մասնավորապես դրա 43 հոդվածով: Այդ հոդվածում չնշված գործունեության տեսակներով առևտրային կազմակերպությունները կարող են զբաղվել առանց սահմանափակման (բացառությամբ արգելված գործունեության տեսակների): Գործունեության նոր տեսակը կարող է լիցենզավորվման ենթակա համարվել, այդ առթիվ «Լիցենզավորման մասին» օրենքի 43 հոդվածում կատարված փոփոխությունը/լրացումը հրապարակելուց ոչ շուտ, քան 6 ամսվա ընթացքում:

«Լիցենզավորման մասին» օրենքի 43 հոդվածում թվարկված գործունեության յուրաքանչյուր տեսակի համար նշվում է.

1. լիցենզիա տվող մարմինը,
2. լիցենզիայի տեսակը (պարզ կամ բարդ),
3. արդյոք գործունեության կոնկրետ տեսակով զբաղվելու համար պահանջվում է լիցենզիա, թե ոչ, եթե այդ գործունեությունը իրականացվում է ոչ ձեռնարկատիրական (տնտեսական) գործունեության նպատակով,
4. արդյոք գործունեության կոնկրետ տեսակով զբաղվելու համար օրենքով կամ լիցենզավորման կարգով կարող է պահանջվել ապրանքների, առարկաների, սարքավորումների, ինչպես նաև լիցենզավորման համար ներկայացված փաստաթղթերի փորձաքննական եզրակացություն, թե ոչ,
5. արդյոք կոնկրետ գործունեության տեսակի համար լիցենզիան տրվում է միայն մրցույթով, թե ոչ,
6. արդյոք կոնկրետ գործունեության տեսակի լիցենզիա տալու համար կարող է իրականացվել ֆիզիկական անձանց մասնագիտական որակավորման ստուգում, թե ոչ,
7. արդյոք կոնկրետ գործունեության տեսակի լիցենզիա ունեցող անձանցից լիցենզավորվող գործունեության տեսակի առնչությամբ հաշվետվություններ կարող է պահանջել միայն լիցենզավորող մարմինը, թե ոչ,
8. արդյոք գործունեության լիցենզիա ունեցող անձինք լիցենզավորված գործունեությունը կարող են իրականացնել միայն լիցենզիայում նշված վայրում, թե ոչ:

Հեռահաղորդակցության բնագավառի գործունեության լիցենզավորում

Թվարկված գործունեության բնագավառներից SS ոլորտի կազմակերպություններին վերաբերող ոլորտը, թերևս, միայն հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության) բնագավառն է, որն ընդհանրապես ներառում է.

1. հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի ծառայությունները,
2. հեռագրային կապի ծառայությունների մատուցումը,
3. տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցումը,
4. ձայնային ծառայությունների մատուցումը,

5. շարժական կապի ծառայությունների մատուցումը,

5. հեռուստառադիոհաղորդումների հեռարձակումը:

Միայն երկու տեսակների համար է, որ լիցենզիան տրվում է բարդ ընթացակարգով՝ կառավարության կողմից սահմանված լիցենզավորման կարգին համապատասխան:

Գործունեության բոլոր տեսակներով լիցենզավորումը իրականացնում է հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, բացառությամբ հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման լիցենզավորման:

Բացառությամբ հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման գործունեության, թվարկված գործունեության տեսակներով զբաղվելու լիցենզիա չի պահանջվում, եթե այդ գործունեությունը իրականացվում է ոչ ձեռնարկատիրական (տնտեսական) գործունեության նպատակով:

Միայն հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի ծառայությունների դեպքում, որ լիցենզավորման համար ներկայացված փաստաթղթերի փորձաքննական եզրակացություն է պահանջվելու:

Լիցենզավորման ենթակա գործունեությունը միայն լիցենզիայում նշված վայրում իրականացնելու պահանջը վերաբերում է բոլոր 6 տեսակներին, իսկ լիցենզիան միայն մրցույթով տալու պայմանը նախատեսված է միմիայն հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման ծառայությունների համար:

Այլ պայմաններ, որոնք նշվել են վերը, հեռահաղորդակցության բնագավառի գործունեության լիցենզավորման համար սահմանված չեն:

Ստանդարտացում

Հայաստանում ստանդարտացումն իրականացվում է՝ ապահովելու համար.

1. շրջակա միջավայրի, կյանքի, առողջության և գույքի պահպանման համար արտադրանքի, աշխատանքի, ծառայության անվտանգությունը,
2. տեխնիկական և տեղեկատվական համատեղելիությունը, արտադրանքի համափոխարինելիությունը,
3. արտադրանքի, աշխատանքի, ծառայության որակի բարձրացումը,
4. չափումների միասնականությունը,
5. ռեսուրսախնայողությունը,
6. արտակարգ իրավիճակներում կառույցների և շինությունների անվտանգությունը և հուսալիությունը,
7. առևտրում տեխնիկական խոչընդոտների վերացումը,
8. պետության պաշտպանության և մոբիլիզացիոն պատրաստականության անհրաժեշտ պայմանները:

Ստանդարտացումը իրականում գոյություն ունեցող կամ հնարավոր խնդիրների վերաբերյալ համընդհանուր և բազմակի կիրառման համար դրույթների սահմանման միջոցով որոշակի բնագավառում կարգավորվածության լավագույն աստիճանին հասնելու ուղղված գործունեությունն է:

Ստանդարտացման օբյեկտներն են արտադրանքը, աշխատանքը (այդ թվում՝ գործընթացը) և ծառայությունը: Ստանդարտացման գործընթացի մասնակիցներն են պետական մարմինները, իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը:

Ստանդարտացումն իրականացվում է հետևյալ տեսակի ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի հիման վրա.

1. *տեխնիկական կանոնակարգեր*, որոնք Հայաստանի այն օբյեկտներն ու իրավական ակտերն են (ներառյալ՝ համապատասխան արտադրանքի (ծառայության) և դրանց հետ կապված արտադրման (կատարման) գործընթացների և մեթոդների վերաբերյալ պարտադիր պահանջներ սահմանելու իրավասություն ունեցող պետական մարմինների կողմից ընդունված գերատեսչական նորմատիվ իրավական ակտերը), որտեղ ընդգրկված են տեխնիկական պահանջներ՝ ստանդարտացման օբյեկտների վերաբերյալ, և որոնցով սահմանվում են ազգային անվտանգությանը, ներառյալ՝

տնտեսական և արտադրական անվտանգությանը, բնակչության կյանքի և առողջության ապահովմանը, շրջակա միջավայրի, կենդանական և բուսական աշխարհի ու բնական ռեսուրսների պահպանմանը, արտադրանքի և ծառայության նշանակության, որակի կամ անվտանգության վերաբերյալ սպառողներին թուրիմացության մեջ գցող գործոնների կանխարգելմանն ուղղված պահանջներ:

2. *ազգային ստանդարտներ*, այն է՝ Հայաստանի Հանրապետության ստանդարտները և ստանդարտացման ազգային համակարգով սահմանված՝ Հայաստանի Հանրապետությունում կիրառվող միջազգային, տարածաշրջանային, միջպետական և այլ պետությունների ազգային ստանդարտները, որոնցով սահմանվում են պահանջներ և նորմեր՝ արտադրանքի, աշխատանքի և ծառայության անվտանգության, սանիտարական վիճակի, տեխնիկական և տեղեկատվական համատեղելիության, արտադրանքի համափոխարինելիության, արտադրանքի սպառողական (շահագործական) հիմնական բնութագրերի, փորձարկման մեթոդների, արտադրանքը փաթեթավորելու, մակնշելու, պահելու, փոխադրելու, օգտագործելու, վերականգնելու (նորոգելու) և օգտահանելու վերաբերյալ, ինչպես նաև արտադրանքի մշակման, արտադրման և օգտագործման (շահագործման) տեխնիկական փաստաթղթերի ձևակերպման, արտադրանքի, աշխատանքի և ծառայության որակի ապահովման, միջոցների օգտագործման, թույլտվածքներին և նստեցվածքներին վերաբերող պահանջներ, տերմիններ, չափագիտական և այլ կազմակերպատեխնիկական և ընդհանուր տեխնիկական կանոններ: Ազգային ստանդարտների կիրառումը կամավոր է, բացառությամբ եթե տեխնիկական կանոնակարգերում այդ ստանդարտները վկայակոչված են պարտադիր կիրառման համար,

3. *տեխնիկական պայմաններ*, որոնց մշակման և հաստատման անհրաժեշտությունը սահմանվում է ստանդարտացման ազգային համակարգի կանոններով և, որոնք մշակում և հաստատում են իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը՝ որոշակի արտադրանքի, աշխատանքի կամ ծառայության համար:

4. *տեխնիկատնտեսական տեղեկատվության դասակարգիչները*, որոնց մշակումը, ընդունումը, վարումը և կիրառումն իրականացվում է ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերով սահմանված կարգով. միջազգային, միջպետական կամ այլ պետությունների դասակարգիչները նույնպես կարող են կիրառվել՝ ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերով սահմանված կարգով

5. *կազմակերպության ստանդարտները*, որոնք մշակում և հաստատում են իրավաբանական անձինք՝ ելնելով ստանդարտացման պահանջների կատարման, ինչպես նաև արտադրության կազմակերպման և կատարելագործման նպատակով դրանց կիրառման անհրաժեշտությունից և որոնք, չպետք է հակասեն տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջներին: Կազմակերպությունների ստանդարտները մշակվում ու ընդունվում են հիմնավոր և կիրառական հետազոտությունների ու մշակումների արդյունքների և տարբեր բնագավառներում ստացված գիտելիքների տարածման ու օգտագործման հիման վրա:

Ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերում սահմանված պահանջները պետք է հիմնված լինեն գիտության, տեխնիկայի և տեխնոլոգիայի ժամանակակից նվաճումների, միջազգային, տարածաշրջանային, միջպետական ստանդարտների, ստանդարտացման կանոնների, նորմերի և այլ պետությունների ազգային ստանդարտների վրա, հաշվի առնելով արտադրանքի օգտագործման, աշխատանքի կատարման և ծառայության մատուցման պայմանները, և չպետք է հակասեն Հայաստանի օրենքներին և այլ իրավական ակտերին:

Ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի (բացառությամբ տեխնիկական կանոնակարգերի) կիրառումը որոշվում է իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից՝ արտադրանքի մշակման, արտադրման, իրացման, օգտագործման (շահագործման), պահման, փոխադրման, օգտահանման, ինչպես նաև աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման փուլերում:

Համապատասխանության գնահատում

Հայաստանում համապատասխանության գնահատման իրականացման նպատակներն են.

1. մարդու կյանքի, առողջության, ֆիզիկական ու իրավաբանական անձանց և պետական գույքի ապահովումը,
2. կենդանիների և բույսերի կյանքի և առողջության, կենդանական և բուսական աշխարհի պահպանությունը՝ ձեռնարկատիրական և արտադրական գործունեության վնասակար ազդեցությունից,
3. արտադրանքի, աշխատանքների, ծառայությունների նկատմամբ սպառողների վստահության ապահովումը և նրանց թուրիմացության մեջ գցող գործոնների կանխումը,
4. հայրենական արտադրանքի մրցունակության բարձրացումը,

5. ներքին և արտաքին շուկաներում արտադրանքի տեխնիկական խոչընդոտների վերացումը, միջազգային տնտեսական, գիտատեխնիկական, համագործակցության և միջազգային առևտրում մասնակցելու համար բարենպաստ պայմանների ստեղծումը,

6. համապատասխանության հավաստման բնագավառում միասնական տեխնիկական քաղաքականության ապահովումը,

7. սերտիֆիկացման մարմինների և փորձարկման լաբորատորիաների գործունեության արդյունքների միջազգային փոխճանաչման համար պայմանների ստեղծումը,

8. համապատասխանության գնահատման ընթացակարգերի ներդաշնակումը միջազգային համապատասխանության գնահատման համակարգերի ընթացակարգերին,

9. առևտրում տեխնիկական խոչընդոտների բացառումը:

Համապատասխանության գնահատումը տեխնիկական կանոնակարգերով, ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերով և քաղաքացիաիրավական պայմանագրերով արտադրանքին, աշխատանքներին, ծառայություններին, որակի և բնապահպանական կառավարման համակարգերին, անձանց ներկայացվող պահանջներին արտադրանքի, աշխատանքների և ծառայությունների, որակի և բնապահպանական կառավարման համակարգերի, անձանց համապատասխանության գնահատումն է՝ ուղղակի կամ անուղղակի ձևով:

Համապատասխանության գնահատումն իրականացվում է.

1. համապատասխանության հավաստման,
2. սերտիֆիկացման մարմինների և փորձարկման լաբորատորիաների հավատարմագրման և
3. տեխնիկական կանոնակարգերի պահանջների պահպանման նկատմամբ պետական վերահսկողության իրականացման ձևերով:

Համապատասխանության հավաստումը այն գործունեությունն է, որի արդյունքում համապատասխանության սերտիֆիկատի կամ համապատասխանության հայտարարագրի միջոցով հավաստվում է արտադրանքի, աշխատանքների և ծառայությունների, որակի և բնապահպանական կառավարման համակարգերի, անձանց համապատասխանությունը տեխնիկական կանոնակարգերով, ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերով և քաղաքացիաիրավական պայմանագրերով արտադրանքին, աշխատանքներին, ծառայություններին, որակի և բնապահպանական կառավարման համակարգերին, անձանց ներկայացվող պահանջներին: Հայրենական և օտարերկրյա արտադրանքի համապատասխանության հավաստումն իրականացվում է միևնույն ձևերով և սխեմաներով⁵²:

Համապատասխանության հավաստումը լինում է 2 տեսակի.

1. *կամավոր*, որն իրականացվում է սերտիֆիկացման ձևով,
2. *պարտադիր*, որն իրականացվում է համապատասխանության հայտարարագրի ընդունման և սերտիֆիկացման ձևերով:

Համապատասխանության կամավոր հավաստումն իրականացվում է հայտատուի հայեցողությամբ՝ նրա և սերտիֆիկացման մարմնի միջև կնքված պայմաններին համապատասխան: Համապատասխանության կամավոր հավաստման օբյեկտներն են այն արտադրանքը, աշխատանքները և ծառայությունները, որակի և բնապահպանական կառավարման համակարգերը, համապատասխանության գնահատման բնագավառում գործունեություն իրականացնող ֆիզիկական անձինք, որոնց նկատմամբ ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերով կամ քաղաքացիաիրավական պայմանագրերով սահմանված են պահանջներ:

Համապատասխանության պարտադիր հավաստումը կատարվում է տեխնիկական կանոնակարգով սահմանված դեպքերում՝ դրանց պահանջներին համապատասխան: Համապատասխանության պարտադիր հավաստման օբյեկտ կարող են լինել Հայաստանի տարածքում իրացվող արտադրանքը, կատարվող աշխատանքները և մատուցվող ծառայությունները:

Համապատասխանության պարտադիր հավաստման ենթակա արտադրանքի, աշխատանքների և ծառայությունների համապատասխանության կամավոր հավաստումը չի կարող փոխարինել այդ արտադրանքի, դրանց համապատասխանության պարտադիր հավաստմանը:

Համապատասխանության պարտադիր հավաստման սխեմաները որոշվում են արտադրանքների, աշխատանքների և ծառայությունների տեխնիկական կանոնակարգերով: Համապատասխանության

⁵² Գործողությունների որոշակի համախումբ, որոնց դրական արդյունքներն ընդունվում են որպես սահմանված պահանջներին արտադրանքի, աշխատանքի կամ ծառայության համապատասխանության ապացույց:

պարտադիր հավաստման ենթակա արտադրանքի, աշխատանքների և ծառայությունների համար տեխնիկական կանոնակարգերով կարող են որոշվել համապատասխանության հավաստման մի քանի սխեմաներ, որոնք, ըստ իրենց նշանակության, պետք է լինեն համարժեք:

Հայաստանի տարածքում արգելվում է համապատասխանության պարտադիր հավաստման ենթակա արտադրանքի իրացումը, աշխատանքների կատարումը և ծառայությունների մատուցումը՝ առանց դրանց համապատասխանության հավաստման: Համապատասխանության պարտադիր հավաստման ենթակա և շրջանառության մեջ գտնվող արտադրանքը, աշխատանքները և ծառայությունները պետք է ուղեկցվեն համապատասխանության նշանի մակնշմամբ, սերտիֆիկատով կամ գրանցված հայտարարագրով:

Պարտադիր հավաստման ենթակա արտադրանքի ներմուծումը Հայաստան, առանց դրանց համապատասխանության հավաստման, արգելված է: Համապատասխանության պարտադիր հավաստման ենթակա արտադրանք Հայաստան ներմուծելու դեպքում մաքսային մարմիններին պետք է ներկայացվի դրա սերտիֆիկատը կամ գրանցված հայտարարագիրը:

Հայաստանի սահմաններից դուրս ստացված սերտիֆիկատները, համապատասխանության նշանները, փորձարկման արձանագրությունները Հայաստանում ճանաչվում են համապատասխան միջազգային պայմանագրերի առկայության դեպքում և դրանց համապատասխան:

Համապատասխանության պարտադիր հավաստում

Հայաստանի կառավարության 29.07.2004թ.-ի թիվ 1149-Ն որոշմամբ հաստատվել են Հայաստանում համապատասխանության պարտադիր հավաստման ենթակա արտադրության և ծառայությունների ցանկերը⁵³, իսկ ՀՀ կառավարության 12.08.2004թ. թիվ 1170-Ն որոշմամբ (տես ՀՀ ՊՏ 48/2004թ., 8 սեպտեմբերի 2004թ.) արտադրանքի և ծառայությունների պարտադիր հավաստման համար կիրառվող սխեմաները և դրանց նույնականացման նշագրերը:

⁵³ ՏՏ ոլորտին վերաբերող արտադրանքի կամ ծառայությունների պարտադիր հավաստում նախատեսված է ՀՀ կառավարության «Ռադիոսարքավորումների և հեռահողորդակցության վերջնակետային սարքավորումների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 2228-Ն որոշմամբ (ՀՀ ՊՏ 3, 18 հունվարի 2006թ.): Վերջինս հանդիսանում է տեխնիկական կանոնակարգ:

Օգտագործված հասպվումներ և տերմիններ ու դրանց անգլերեն թարգմանություններ

- | | |
|--|---|
| <p>1. Արդյունավետության բարձրացման ծրագրակազմեր</p> <p>Yield Enhancement Software</p> <p>2. Աշխատածրագիր
Application</p> <p>3. Առ գիծ</p> <p>On-line</p> <p>4. Արդյունաբերական (արտադրական) ավտոմատացում</p> <p>Industrial Automation</p> <p>5. Բազմամիջոց գործիքներ կամ ծրագրեր (կարճ՝ բազմամիջոցներ)</p> <p>Multimedia</p> <p>6. Բազմամիջոց կամ բազմամիջավայր սեղմապնակներ և թվային մեծածավալ սեղմապնակներ</p> <p>Multimedia CD, DVD</p> <p>7. Դյուրակիր համակարգիչ</p> <p>Notebook</p> <p>8. Ջրույցներ ինտերնետով</p> <p>Chat</p> <p>9. էլ. - վճարային համակարգ</p> <p>E - Billing Systems</p> <p>10. Թվային մեծածավալ սեղմապնակ (ԹՄՊ)</p> <p>DVD</p> <p>11. Ինտերնետային աշխատածրագրեր</p> <p>Internet applications</p> <p>12. Ինտերնետային ծառայություն մատուցող (ԻԾՍ)</p> <p>Internet Service Provider (ISP)</p> <p>13. Ինտերնետային կանխագրով (ԻԿ) հեռախոսակապ</p> <p>Internet Protocol (IP) phone</p> <p>14. Խնամողություն</p> <p>Hosting</p> <p>15. «Խելացի» արտապատկերման (ուրվագծման) տեխնոլոգիա</p> <p>Intelligent mapping technology</p> | <p>16. Ծրագրավորման լեզուներ ու գործիքներ</p> <p>Programming languages and Tools</p> <p>17. Ընկերությունների նույնականացման քարտերի և այցեքարտերի ՍՊ պատրաստում</p> <p>Corporate identity and visit card CD</p> <p>18. Կայք կամ ցանցակայք</p> <p>Site, web-site, or web</p> <p>19. Կայքերի խնամողություն</p> <p>Web-hosting</p> <p>20. Կայքերի նախագծում և պատրաստում</p> <p>Web design and development</p> <p>21. Կիսահաղորդչային արտադրություն</p> <p>Semiconductory industry</p> <p>22. Տեղեկույթի կառավարման համակարգեր (ՏԿՀ)</p> <p>Management Information Systems (MIS)</p> <p>23. Համակարգային ծրագրակազմ</p> <p>Systems Software</p> <p>24. Համակարգի միահավաքում</p> <p>Systems Integration</p> <p>25. Համակարգչային գրաֆիկա</p> <p>Computer Graphics</p> <p>26. Համակարգչային գրաֆիկա և բազմամիջոցներ</p> <p>Computer Graphics and Multimedia</p> <p>27. Համակարգչային թվային դեկավարում</p> <p>«CNC – Computer Numeric Control</p> <p>28. Հաշվապահական, դրամատնային, ֆինանսական ծառայությունների ծրագրեր (ծրագրակազմեր)</p> <p>Accounting/banking/financial services</p> <p>29. Հաշվապահության և առևտրի կառավարման ծրագրեր</p> <p>Accounting and trade management tool</p> <p>30. Հեռախոսագծային</p> <p>Dial up</p> <p>31. Հեռապատճեն</p> |
|--|---|

Fax, facsimile

32. Հսկիչ համակարգիչներ

Computer controls

33. Ղեկապետ (նավարկման) համակարգեր

Navigation systems

34. Մասնահարմարեցված ծրագրերի (ծրագրակազմի) մշակում

Customized software development

35. Մանրաշրթագծերի (չիփերի) նախագծում և փորձարկում

Chip Desing/Testing

36. Մատչում

Access

37. Մատչումի հսկողություն

access control

38. Մեծ տարածքի ցանցեր

Wide area network (WAN)

39. Մշակիչ

Processor

40. Նավարկման (Ղեկապետ) համակարգեր

Navigation systems

41. Ներկառուցված հիշողության նախագծում

Embedded memory design

42. Սեղմապնակ (ՍՊ)

CD

43. Սպասարկիչ

Server

44. Տիրույթ

Domain

45. Տեղական ցանցեր

Local Area Network (LAN)

46. Տեսածրիչ

Scanner

47. Տեսասարք

Monitor

48. Տվյալների հենքերի կառավարման համակարգեր (ՏՀԿՀ)

Database management systems (DBMS)

49. ՏՏ ծառայություններ և խորհրդատվություն

IT services and consulting

50. Ցանցային համակարգեր և կապ

Networking Systems and Communication

51. Լիցենցավորում, լիցենզիա

Licensing, license

52. Հավաստագրում, սերտիֆիկացում

Certification, certificate

53. Թույլտվություն

Permission

54. Սարքեր, սարքավորումներ

equipments

55. Ոչ պաշտոնական վճարներ

Not official payments

56. Պաշտոնական վճարներ

Official payments

57. Բարձր հաճախականության ալեհավաքներ

High frequency antennas

58. Ռադիոհաճախականություն

Radiofrequency

59. Արտադրանքներ

Products

60. Հոսքագծեր

Production lines

61. Պրոցես

Process

62. Ներդրում

Investment

63. Շենքեր, շինություններ

Buildings, constructions

64. Մտավոր սեփականության իրավունք

Intellectual Property rights

65. Արտարժույթ

Foreign Currency

66. Արժեթուղթ

Stock

67. Ծառայություն

Service

68. Օտարերկրյա ընկերության մասնաճյուղ	87. Ապրանքի ծագման (երկրի) սերտիֆիկատ
Subsidiary of Foreign Company	Commodity Country of Origin
69. Պետական գրանցում	88. Երաշխիքային սպասարկում
State Registration	Warranty Service
70. Պետական ռեգիստր	89. Ժամանակավոր ներմուծում արտահանման համար
State Registry	Temporary import for export
71. Հարկային մարմին	90. Ժամանակավոր արտահանում ներմուծման համար
Tax body	Temporary export for import
72. Կնիքի պատրաստման ծառայություն	91. Էկոլոգիա և առողջապահություն
Stamp making service	Ecology
73. Գրամատուն (քանկ)	92. Ֆինանսական լիզինգ
Bank	Financial Leasing
74. Գծի վրա, առգիծ (on-line)	93. Էլեկտրոնային հաշիվ ապրանքագիր
On-line	Invoice
75. Պաշտոնական մարմիններ	94. Գործարքի գնի մեթոդ
Official body	Transaction price m
76. Ինտերնետային ծառայություն	95. Խակարան (բորսա)
Internet Service	Borse
77. ՏՏ ծառայություններ և խորհրդատվության	96. Էլեկտրոնային կայք
IT services and consulting	Electronic site
78. Որակի վարահսկման համակարգ	97. Հին օգտագործված տեխնիկա
Quality Control Systems	Old and used technology products
79. Մաքսատուրք	98. Մտավոր սեփականության օբյեկտ
Customs Duty	Object of Intellectual property
80. Հաշիվ ապրանքագրեր	99. Օգտակար մոդելներ և արդյունաբերական նմուշներ
Invoice	Useful models and industrial samples
81. Մաքսային ծածկագիր	100. Լիցենզիոն պայմանագրեր
Code	Leasing Agreement
82. Մաքսային արժեք	101. Պատվիրատու
Customs	customer
83. Ֆիսկալ բյուջետային քաղաքականություն	102. Գլխամասային կազմակերպություն
Fiscal budgeting strategy	Headquarter
84. Ապրանքների պահեստավորում	103. Հեղինակային հոնորար
Products Warehousing	Royalty (Author's emoluments)
85. Գործակալներ	104. Օտարերկրյա ներդրումներ
Broker	Foreign investments
86. Օրենքներ ու կանոնակարգեր	105. Գլխահետազոտական հիմնարկներ
Laws and Regulations	

R&D companies

106.Ապրանքանշաններ

trademark

107.Հանրահայտության սկզբունք

Method of famousness

108.Անբարեխիղճ մրցակցություն

Unfair Competition

109.Մտավոր գործունեության կատարելագործում

Intellectual activities Development

110.Փաթեթային լիցենզիաներ

Package Licensing

111.Արտոնագիր

Patent

112.Հեղինակային իրավունք

Author rights

113.Տուրքեր

due

114.Պարտադիր սոցիալական վճար

Mandatory social payment

115.Եկմտահարկ

Income tax

116.Շահութահարկ

Profit tax

117.Գույքահարկ

Property tax

118.Հարկային կանխավճարների (պահանջներ)

Tax prepayments

119.Հարկային դրույքաչափեր

Tax rate

120.Ստուգումներ

Tax audit

121.Գործարար միջավայր

Business sphere

122.Կարծական

virtual

123.Գերավճար

Overpayment

124.Էլեկտրոնային թվային ստորագրություն

Digital signature

125.Հարկային արտոնություններ

Tax privileges

126.Գերավճարի վերադարձման ավտոմատ համակարգ

Tax refund automatic system

127.Տիպային սխեմաներ

Typical schemes

128.Շահույթի ռեինվեստիցիա

Profit reinvestment

129.Ռեզիդենտներ

Residents

130.Պետական մարմին

State body

131.Ֆինանսական միջոց

Financial resources

132.Վարկեր

Loan

133.Տոկոսադրույքներ

Interest rate

134.Պարտադիր ապահովման պահանջներ

Mandatory

135.Գրավի առարկա

Things to pawn

136.Բիզնես պլան

Business-plan

137.Ռեյտինգավորում

Rating

138.Ստվերայնություն

Shady

139.Փոխարժեք

Exchange rate

140.Ֆորվարդային պայմանագրերի մեխանիզմ

Forward Contract mechanism

141.Ինվեստիցիոն հիմնադրամ

Investment fund

142.Վենչուրային կազմակերպություն

Venture company

143. Հասույթ
Income
144. Կրեդիթ-նոթ
Credit-note
145. Տարադրամի փոխարժեքի
ռիսկայնություն
Currency exchange rate Risk
146. Աշխատուժի շուկա
Labor market
147. Որակավորված մասնագետ
Qualified specialist
148. Հեռահաղորդակցության մենաշնորհ
Communication monopoly
149. Սոցիոգիական հարցում
Sociological survey
150. ՏՏ ոլորտի կառավարիչներ
IT sector managers
151. Համագործակցություն
Cooperation
152. Գործառույթներ
Activity
153. ՏՏ ոլորտի զարգացման հայեցակարգ

Framework of IT sector development
154. Գերակա
Privileged
155. Էկոնոմետրիկական հետազոտություն
Econometric research
156. Ինֆորմացիոն հասարակություն
Information society
157. Իրավական ակտեր
Legal Acts
158. Սիջպետական համաձայնագրեր
International Agreements
159. Կամավոր հավաստագրում
Optional Certification
160. Արտադրանքի մաքսագերծում
Product customs clearance
161. Տուգանք
Fine
162. Ներմուծում
Import
163. Արտահանում
Export

Հարցման ժամանակ ձեռք բերված՝ ՉԻՀ-ի գործունեության մասին տեղեկատվություն

- համագործակցությունը SS համայնքի հետ
- ինկուբատորի նշանակությունը
- բավարարվածությունը կառույցի աշխատանքից
- հետագա ակնկալիքներն այդպիսի «զարգացման գործակալությունից»

1. SSԿ-ների և ՉԻՀ-ի միջև համագործակցությունը

Համագործակցության բնագավառներ		Տոկոս*
1	Մասնակցել են վերապատրաստման դասընթացների	48.3
2	Մասնակցել են քննարկումների, կլոր սեղանների	27.6
3	Մասնակցել են ցուցահանդեսների	13.8
4	Ստացել են խորհրդատվություն	10.3
5	Գրանցվել ենք ՉԻՀ-ի կազմած՝ SSԿ-ների ցանկում	6.9
6	Պարբերաբար տեղեկատվություն են ստանում ՉԻՀ-ից	6.9

* Տվյալ տարբերակը նշած SSԿ-ների և ՉԻՀ-ի հետ համագործակցության փորձ ունեցող SSԿ-ների ընդհանուր թվի հարաբերություն՝ տոկոսային արտահայտությամբ

2. SS ոլորտում ՉԻՀ-ի դերի գնահատում

ՉԻՀ-ի դերի գնահատական		Տոկոս՝ ՉԻՀ-ին ճանաչող SSԿ-ների ընդհանուր թվից
1	Մեծապես նպաստում է ոլորտի զարգացմանը և կարգավորմանը	30.6
2	Որոշ չափով նպաստում է ոլորտի զարգացմանը և կարգավորմանը	36.7
3	Առանձնապես դեր չի խաղում ոլորտի զարգացման և կարգավորման գործում	20.4
4	Խոչընդոտում է ոլորտի զարգացմանը և կարգավորմանը	4.1
5	Դժվարանում են պատասխանել	8.2

3. ՉԻՀ-ի հետ համագործակցությունից բավարարվածության աստիճան

Բավարարվածության աստիճան		Տոկոս՝ ՉԻՀ-ի հետ համագործակցության փորձ ունեցող SSԿ-ների թվից
1	Բոլորովին բավարարված չէ	3.7
2	Բավարարված չէ	3.7
3	Մասամբ բավարարված չէ	3.7

Բավարարվածության աստիճան		Տոկոս` ՉԻՀ-ի հետ համագործակցության փորձ ունեցող ՏՏԿ-ների թվից
4	Մասամբ բավարարված է	25.9
5	Բավարարված է	40.7
6	Լիովին բավարարված է	22.2

4. ՏՏԿ-ների ակնկալիքները ՏՏ ոլորտի զարգացման գործում ՉԻՀ-ի դերի առնչությամբ

Ակնկալիք կամ դրա առարկան		Տոկոս*
1	Ուսուցողական (վերապատրաստման ծրագրերի) հաճախակի կազմակերպում	18.4
2	Ներդրողների (հատկապես օտարերկրյա) ներգրավում, ներդրումային ծրագրերի իրականացում	18.4
3	ՏՏ զարգացման համաշխարհային միտումների մասին տեղեկատվության տրամադրում	12.2
4	Աջակցություն ՏՏ ոլորտում օրենսդրական դաշտի բարելավման հարցերում	12.2
5	ՏՏ կազմակերպությունների համախմբում, նրանց միջև հարաբերությունների բարելավում	6.1
6	Արտասահմանյան ընկերությունների հետ համագործակցության զարգացում	10.2
7	Աջակցություն բուհերում ուսումնական գործընթացի որակի բարձրացմանը	10.2
8	Չեն տեսնում համատեղ ծրագիր իրականացնելու հնարավորություն	6.1
9	ՀՀ ընկերությունների ներկայացում արտերկրներում	4.1
10	Սպառման շուկայի ուսումնասիրությունների անցկացում	6.1
11	Աջակցություն ՀՀ մարզերում ՏՏ զարգացմանը	4.1
12	Հարաբերությունների կարգավորում գործարարների, դրամատների հետ	4.1
13	Աջակցություն սերտիֆիկացման, լիցենզավորման գործընթացին	4.1
14	Աջակցություն ՏՏԿ-ների հարկային բեռի թեթևացման գործին	2.0
15	Համադրամավորմամբ ծրագրերի իրականացում	4.1
16	Վարկային և լիզինգային ծրագրերի իրականացում	4.1
17	Գժվարանում է պատասխանել	4.1

* Տվյալ ակնկալիքն ունեցող ՏՏԿ-ների թվի` ՉԻՀ-ին ճանաչող ՏՏԿ-ների ընդհանուր թվի հարաբերություն` տոկոսային արտահայտությամբ